ՀՀ ԳԱԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԵՐՎԱՆԴ ՀՐԱՆՏԻ

# ՄԻՀՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԱՋԱՎՈՐ ԱՍԻԱՅԻ ԵՎ ՄԻՋԵՐԿՐԱԾՈՎՅԱՆ ԱՎԱԶԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԿՐՈՆԱՀՈԳԵՎՈՐ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Է 00.02 «Համաշխարհային պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2014

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

պատմական գիտությունների դոկտոր Ռ.Լ. Մանասերյան

պատմական գիտությունների դոկտոր , պրոֆեսոր Ա.Վ. Քոսյան

պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա.Ս. Փիլիպոսյան

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ

Պաշտպանությունը կայանալու է 2014 թ. հոկտեմբերի 6-ին, ժամը 15.00-ին ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում գործող ԲՈՀ-ի 006 "Համաշխարհային պատմություն" մասնագիտական խորհրդում (հասցե՝ 0019 Երևան, Մարշալ Բաղրամյան պող., 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2014 թ. սեպտեմբերի 5-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար պ.գ.թ., դոցենտ Ռ.Պ. Ղազարյան

**Ուսումնասիրության ընդհանուր բնութագիրը:** Հելլենիստական աշխարհը հատուկ տեղ է զբաղեցնում համաշխարհային պատմության մեջ: Հելլենիստական աշխարհի շրջանակներում սկսեցին ձևավորվել որակապես նոր, Արևմուտքում մինչ այդ անհայտ սոցիալ-տնտեսական, քաղաքական համակարգ, նյութական և հոգևոր մշակույթ: Հելլենիզմի դարաշրջանը միավորեց անտիկ և արևելյան քաղաքակրթություններին բնորոշ գծերը ստեղծելով՝ ինքնատիպ տնտեսական, սոցիալական և քաղաքական համակարգ, որտեղ մեկտեղվեցին կենտրոնացված կառավարման և զարգացած տեղային ինքնակառավարման սկզբունքները:

Քաղաքական առումով հելլենիստական աշխարհը միասնական չէր: Այն ներկայացրել է այնպիսի պետությունների ամբողջություն, որոնց միջև բավական լարված, երբեմն՝ թշնամական հարաբերություններ կային անգամ, երբ այդ պետությունները բնակեցված էին ազգակից ժողովուրդներով, կամ դրանք ղեկավարում էին նույն արքայատոհմի ներկայացուցիչները: Սակայն, հելլենիստական պետություններն ունեին հասարակական-քաղաքական և տնտեսական համակարգերի, նյութական ու հոգևոր մշակույթների շատ ընդհանուր գծեր: Առաջավոր Ասիայում մեծ թվով պետական կազմավորումներ ստեղծվեցին, որոնց ծաղկումը ժամանակի առումով համընկավ Մագնեսիայի ճակատամարտի և Ակցիումի ծովամարտի միջև ընկած ժամանակահատվածին: Այդ շրջանը մենք նշել ենք որպես հելլենիզմի դարաշրջանի երկրորդ՝ *տեղային* փուլ, որը հաջորդել էր առաջինին՝ *դասական* կամ *հունա-մակեդոնական հելլենիզմին* (Ք.ա. 333-189թթ.) և նախորդել երրորդ փուլին՝ *հելլենիստական-հռոմեականին (կամ հռոմեացված հելլենիզմի) շրջանին* (Ք.ա. 31 – Ք.հ. 313 թթ.): Չորրորդ՝ եզրափակիչ փուլը՝ *ուշ* կամ *քրիստոնեական հելլենիզմը,* համընկնում է առաջավորասիական տարածաշրջանի որոշ երկրներում քրիստոնեական արժեքների հաղթանակի և ավատատիրական հարաբերությունների արմատավորման ժամանակաշրջանին (313-451թթ.): Հելլենիզմի *դասական* փուլը հունա-մակեդոնական և տեղի քաղաքակրթական արժեքների ձուլման և փոխներթափանցման արդյունքն էր: *Տեղային* փուլը (Ք.ա. 189-31 թթ.) դարձավ արդեն ձևավորված դասական հելլենիստական և տեղական հնագույն ավանդույթների համադրման արդյունքը: *Հելլենիստական-հռոմեական փուլը* դարձավ տեղական և հռոմեական ավանդույթների ձուլման ածանցյալը: Հելլենիզմի չորրորդ փուլը ձևավորվեց *վաղ քրիստոնեական* սինկրետիկ (միաձույլ) քաղաքակրթական ավանդույթների հիման վրա:

Առաջավորասիական հելլենիստական երկրների շարքում, հատկապես հելլենիստական դարաշրջանի երկրորդ՝ *տեղային* փուլում, բացառիկ տեղ էր զբաղեցնում Կոմմագենեի թագավորությունը: Այստեղ, նրա ծագման օրվանից մինչև կործանումը, իշխել է հայոց Երվանդականների արքայատոհմի ճյուղերից մեկը: Կոմմագենեի թագավորությունը հելլենիստական պետության վառ օրինակ է. այստեղ ի հայտ են եկել հելլենիզմին բնորոշ շատ գծեր և, միևնույն ժամանակ, տարածաշրջանային առանձնահատկություններ: Աշխարհագրական նպաստավոր դիրքի շնորհիվ այդ երկիրն իր գոյության գրեթե ողջ ընթացքում տնտեսապես առավել զարգացած և հարուստ երկրներից մեկն էր տարածաշրջանում: Կոմմագենեի կառավարիչները վերահսկում էին երկրի տարածքով անցնող առևտրային ուղիները, որոնց խաչմերուկում հիմնվեց մայրաքաղաքը՝ հարուստ

և բարգավաճ Սամոսատ քաղաքը, որը ուներ կարևոր տնտեսականից և ռազմավարական նշանակություն: Երկիրն առավելագույն զարգացման հասավ Ք.ա. I դարում Միհրդատ Ա Երվանդականի և նրա որդու՝ Անտիոքոս Ա Կալլինիկոսի թագավորության տարիներին: Նա իր ժամանակցի՝ Արտավազդ Բ-ի նման, «երրորդ ուժի» հաջող քաղաքականություն էր վարում՝ հավասարակշռություն պահելով տարածաշրջանի հզորագույն տերությունների միջև[1]: Նրա մահվանից հետո Հռոմի ճնշումը Կոմմագենեի վրա ուժեղացավ: Ք.հ. I դարում, կորցնելով երբեմնի ուժն ու փառքը, երկիրն անհետացավ քաղաքական ասպարեզից:

Կոմմագենեի պատմության տարբեր շրջանները լուսաբանող աղբյուրների առկայությունը թույլ է տալիս պատկերացում կազմել թագավորության կայացման, իշխանության ինստիտուտների ձևավորման, հանուն ինքնիշխանության պահպանման, Երվանդական արքայատոհմի՝ ընդդեմ Սելևկյանների, իսկ ավելի ուշ՝ ռազմատենչ Հռոմի ոտնձգությունների պայքարի մասին:

Կոմմագենեի թագավորությունն աչքի էր ընկնում ուրբանիզացիայի բարձր մակարդակով և դարձավ Հյուսիսային Ասորիքի քաղաք-պետությունների միության ավանդույթների շարունակողը, որոնք իրենց շահեկան աշխարհագրական դիրքի շնորհիվ արդեն Ք.ա. երկրորդ հազարամյակում բացառիկ տեղ էին զբաղեցնում ողջ տարածաշրջանում: Բայց հին արևելյան քաղաքներից, հելլենիստական պոլիսներից, իսկ ավելի ուշ՝ նաև հռոմեական ռազմավաններից բացի, Կոմմագենեում մեծ թիվ էին կազմում տաճարակից համայնքներն, գյուղավանները և տեղի բնակիչներից կազմված զինվորական գաղութները: Կոմմագենեի բնակիչներն հելլենացված արամեախոս ասորիներ էին, հայեր, հույներ, մակեդոնացիներ և տեղի հյուսիսասորական և փոքրասիական էթնոսներն:

**Թեմայի արդիականությունն ու կարևորությունը**: Կոմմագենեն զգալի ավանդ է ունեցել համաշխարհային մշակույթի գանձարանում: Կոմմագենեի մշակույթի պատմության մեջ ամենավառ հետքը թողել է Անտիոքոս Ա Կոմմագենացին, որին ուղղակի կարելի է լուսավորյալ միապետի օրինակ համարել: Կոմմագենեի տիրակալները նպատակաուղղված կրոնական քաղաքականություն էին վարում՝ որպես քաղաքական քարոզչամիջոց օգտագործելով հուշակոթողային արվեստը, ճարտարապետությունն ու գրականությունը: Դրանց մեջ հատուկ տեղ են զբաղեցնում Երվանդունիների հուշակոթողները, որոնք կառուցվում էին ի փառս իշխող արքայատոհմի, նրա հովանավոր աստված Միհր-Ապոլլոն-Հելիոս-Հերմեսի և այլ սինկրետիկ աստվածների, որոնց վրա էլ Անտիոքոս Ա-ի հրամանով փորագրվում են հունարեն արձանագրություններ, որոնց քննությանն էլ նվիրել ենք մեր ատենախոսության գլուխներից մեկը:

Գտնվելով առևտրային ուղիների հատման կետում և Մերձեփրատյան շփման գոտու կարևորագույն օղակը լինելով՝ Կոմմագենեն մշտապես եղել է իրադարձությունների կենտրոնում և հաճախ ներքաշվել տարածաշրջանի կարևոր քաղաքական գործընթացների մեջ: Կոմմագենեի քաղաքական պատմությունը խաչվել է Միջերկրածովի և Առաջավոր Ասիայի շատ այլ պետությունների պատմության հետ: Ուստի, թագավորության քաղաքական պատմության հետա-

---

[1] **Մանասերյան Ռ.**, Հայաստանը Արտավազդից մինչև Տրդատ Մեծ, Ե., 1997, էջ 97:

զոտությունը, անշուշտ, կարևոր գիտական խնդիր է: Կոմմագենեի քաղաքական ինստիտուտների պատմության ուսումնասիրությունը, թվարկված բոլոր ուղղություններում, հելլենիստական աշխարհի և, առհասարակ, հնագույն հասարակությունների հետազոտման կարևոր ուղղությունն է, առանց որի Հին աշխարհի զարգացման գիտական պատկերը թերի կլինի և ոչ ճշգրիտ: Հին հասարակությունների ուսումնասիրման կարևոր խնդիրներից է դրանց քաղաքական համակարգերի, ապրելակերպի, հոգևոր կերտվածքի, գաղափարախոսության և աշխարհայացքի հետազոտությունը, միայն հին հասարակություններին բնորոշ առանձնահատուկ, ինչպես նաև ընդհանուր գծերի բացահայտումը:

Հելլենիստական հասարակության փոխակերպման քաղաքակրթական և խաչաձև-մշակութային ուսումնասիրությունների նշանակությունը, մեր կարծիքով, դեռևս լիարժեք գնահատված չէ արդի գիտության մեջ: Այս, ավելի քան բեղուն պատմական ժամանակաշրջանի իմաստավորումը եղել և մնում է արդիական խնդիր ոչ միայն պատմաբանների, այլև քաղաքագետների, պատմափիլիսոփաների համար, քանի որ թույլ է տալիս վեր հանել կայսերական պետական կազմավորումների՝ որպես քաղաքական ընդհանրության հատուկ ձևի մասին արդի պատկերացումների «ծագումնաբանությունը» և դրանցում տեղի ունեցող փոփոխությունները տարանցման դարաշրջաններում: Այսօր, երբ պարզվեց, որ քաղաքական գիտություններն անկարող են համարժեք և քիչ թե շատ ընկալելի պատասխաններ տալ արդիականության կարևորագույն հարցերին և մարտահրավերներին (գլոբալիզացիա, բազմամշակութայնություն, կայսրությունների անկում և հետկայսերական իրավիճակի հեռանկարներ), էլ ավելի հստակ սկսեց ուրվագծվել դասական պատմագիտության ավանդույթներին վերադառնալու միտումը: Այն թեև վարդագույն ապագա չի կանխատեսում և արդիականության ցավոտ հարցերի միանշանակ պատասխաններ չի առաջարկում, բայցևայնպես, ի վիճակի է մարդկային հասարակության ուսումնասիրման հիրավի գիտական մեթոդներ մշակել: Դա վերաբերում է նաև ոչ մեծ հելլենիստական պետությունների փորձին և գերտերությունների շրջապատում նրանց գոյատևման դժվարություններին: Ժամանակային կտրվածքով հեռու, բայց ներքին էությամբ մոտ այդ դարաշրջանի պատմական փորձը կարող է ավելի ուսանելի լինել, քան ժամանակով մեզ ավելի մոտ և անգամ մեզ ժամանակակից հանրությունների համակեցական փորձառությունը: Հելլենիստական-հռոմեական աշխարհի և նրա ծայրամասի՝ որպես ամբողջական քաղաքակրթական ֆենոմենի ուսումնասիրությունը դարերի սահմանագծին, կարևոր ընդհանուր պատմական նշանակություն ունի, քանի որ նման իրավիճակները ներունակ են և պարբերբար կրկնվել են տարբեր դարաշրջաններում, ներառյալ Նոր և Նորագույն ժամանակները:

Հելլենիստական-հռոմեական աշխարհի ընդհանրացված պատմական փորձը պատմագրական, քաղաքագիտական և, որոշ իմաստով, փիլիսոփայական տեսակետներից չի կորցրել արդիականությունը նաև մեր օրերում: Արդի պատմագիտության՝ Հին աշխարհի պատմությամբ զբաղվող գիտաճյուղի համար մշտապես նոր մեթոդաբանական մոտեցումներ է որոնում, փորձարկում զանազան հետազոտական հարացույցեր: Խիստ կարևոր է այնպիսի թեմաների հետազոտությունը, ինչպիսին են տարբեր սուբյեկտների պատմա-մշակութային

ինքնությունը, սոցիալական փոխգործակցության տեղային և գլոբալ, ինստիտուցիոնալ և ոչ ֆորմալ մեխանիզմների, ուծացման և մարգինալացման, արդիականացման և ավանդապաշտության, կոնտինուիտետի և դիսկրետության հարաբերակցությունը անցյալի հասարակության պատմական զարգացման մեջ։ Առանց այս բոլոր գործոնները հաշվի առնելու, անհնար է վեր հանել ողջ անտիկ քաղաքակրթության հիրավի բազմակողմանի պատկերը և հասկանալ նրա զարգացման օրինաչափությունները։ Ազգային պատմագրության ավանդույթների և արդի համաշխարհային գիտության ձեռքբերումների վրա հիմնված սույն ուսումնասիրության արդյունքները կարող են հետաքրքրել ինչպես հայրենական, այնպես էլ օտարերկրացի գիտնականներին՝ պատմաբաններին, քաղաքագետներին, քաղտեխնոլոգներին, սոցիալական հոգեբաններին և փիլիսոփաներին։

**Թեմայի ուսումնասիրվածության աստիճանը։ Աղբյուրների և գրականության տեսություն։** Կոմմագենյան հոգևոր-մշակութային առնչությունները նոր չէ, որ ուսումնասիրության առարկա են թե՛ արևմտյան, թե՛ հայրենական հետազոտողների աշխատություններում։ Ամեն ինչ սկսվել է 1883թ., երբ Պերգամոնի բագինի հայտնաբերողները՝ գերմանացի ճանապարհորդ Կարլ Հումմանը և պատմաբան Օտտո Պուքշտայնը գիտական հանրությանը ներկայացրել են Նեմրուդ լեռան սրբավայրի վերաբերյալ իրենց ուսումնասիրությունը[2]։ Հայտնաբերված հարուստ հնագիտական նյութը սևեռումի խնդիր է դարձրել Կոմմագենեի պատմությունը և լույս սփռել ողջ տարածաշրջանի պատմամշակութային անցյալի վրա։

Սակայն սկզբում կոմմագենյան գտածոները չցնցեցին եվրոպացիների երևակայությունը, ինչպես դա եղավ ժամանակին՝ Վերածնության դարաշրջանում, անտիկ դասական քաղաքակրթության բացահայտումից հետո։ Նման զարգացած և, ըստ էության, յուրօրինակ մշակույթի գոյությունը չէր տեղավորվում Եվրոպայում գերիշխող Արևմուտքի և Արևելքի պատմության և վերջինիս դերակատարության վերաբերյալ կարծրացած պատկերացումների մեջ։

Գերմանացի հնագետները, բանասեր գիտնականները, արվեստաբանները, իսկ առանձին դեպքում նաև պատմաբանները, Կոմմագենեի գտածոներին վերաբերեցին առանց խանդավառության. կոմմագենյան արվեստը և արձակը կոչեցին «գավառական», «բարբարոսական», իսկ Անտիոքոս Կոմմագենացու հռետորական, շինարարական և քանդակագործական ոճը ստացավ կիսահեգնական «ասիանական» անունը։ Թերևս դա էր պատճառը, որ գրքի լույս ընծայումից հետո Կոմմագենեի հնագիտական ուսումնասիրությունները շուրջ կես դարով դադարեցին։ Հումմանի և Պուքշտայնի հայտնաբերած հնագիտական տվյալները հիշատակվում էին թռուցիկ, առիթից առիթ, իսկ Կոմմագենեի պատմությանը չնվիրվեց ոչ մի վերլուծական հետազոտություն։ Միայն 1930-ականների կեսերին Մյունստերից երիտասարդ հետազոտող Կարլ-Ֆրիդրիխ Դյորների ջանքերով Կոմմագենեի տարածքում վերսկսվեցին հնագիտական աշխատանքները, սակայն սկսված Առաջին աշխարհամարտի պատճառով կրկին ընդհատվեցին[3]։

---

[2] **Humann K. und Puchstein O.** Reisen in Kleinasien und Nordsyrien. Textband. Berlin: Reimer, 1890; **Puchstein O.** Arsameia (am Eufrat). / Realencyclopädie der Classischen Altertumswissenschaft 3, 1895.
[3] **Dörner F. K.**, **Naumann R.** *Forschungen in Kommagene*. IF 10, Berlin, 1939.

Կոմմագենեի պատմության և մշակույթի նկատմամբ հետաքրքրություն արթնացավ միայն XX դ. կեսերին, երբ վերսկսվեցին հնագիտական աշխատանքները Կոմմագենեի մայրաքաղաք Սամոսատի տարածքում: Ուսումնասիրություններն իրականացնում էին նույն ինքը՝ Դյորները[4] և ամերիկուհի Թերեզա Գյոլը[5]: Այս երկուսի գլխավորած արշավախումբը պեղեց նս մի քանի հետաքրքիր հուշարձան, որոնցից հատկապես աչքի էր ընկնում Նիմփայոսի Արսամեան՝ իր հունալեզու վիմագրական կոթողներով: Պեղումների արդյունքները հրատարակվել են այսօր քրեստոմատիական դարձած «Նիմփայոսի Արսամեա» մեծածավալ հատորում: Բլրի ներսում թաքնված գաղտնիքները բացահայտելու համար ներգրավվել են բնագիտական տարբեր ոլորտների մասնագետներ, հուսալով նրա ընդերքում գտնել Անտիոքոսի դամբարանը: Անտիոքոսի Հորոսկոպի ուսումնասիրությունները և տոմարային հաշվարկները կատարեցին Նոյգեբաուերը և վան Հոսսենը[6]: Դյորների և Գյոլի գործն ավելի ուշ շարունակեց Վ.Հոյպֆները[7]:

Գերմանական և ամերիկյան հետազոտողների Կոմմագենեի պատմության ուսումնասիրությունը կրում է միակողմանի բնույթ, ինչը բացատրվում է կոմմագենյան նյութերը գլխավորապես իբրև նյութական մշակույթի օբյեկտներ դիտարկելու միտմամբ: Հետազոտողները, կատարելով զգալի աշխատանք վերջերս հայտնաբերված և արդեն վաղուց հայտնի ու գիտական գրականության մեջ շրջանառվող նյութերի դասակարգման ուղղությամբ, այնուամենայնիվ, զգուշանում էին տեսական ընդհանրացումներից, խուսափում կոմմագենյան նյութերը դիտարկել հելլենիստական քաղաքակրթության համայնապատկերում: Հնագետների մեծամասնությունը երբևիցե չանվանեցին այդ երկիրը հելլենիստական և չփորձեցին որևէ զուգահեռ անցկացնել այլ հելլենիստական երկրների հետ, կամ էլ բացահայտել այս կամ այլ երևույթի արմատները: Կոմմագենյան նյութերը դիտարկվում էին ժամանակի տարածաշրջանային և համաշխարհային գործընթացներից մեկուսացված: Անտեսվում էր սերնդաբանական կապը կապադովկիական, պոնտական և հատկապես՝ հայկական հելլենիստական իրողությունների հետ: Կոմմագենյան նյութի մշակութաբանական և քաղաքակրթական վերաիմաստավորումը, ինչպես և վերջինիս շաղկապակցումը հարակից երկրների քաղաքական և պատմամշակութային աղերսներին՝ ապագայի խնդիր էր:

Խորհրդային անտիկագիտության մեջ հետաքրքրությունը Կոմմագենեի, ինչպես և այլ մերձեփրատյան, փոքրասիական և հյուսիսմիջագետքյան երկների հին պատմության նկատմամբ մակերեսային էր: Գրեթե նույնն էր իրավիճակը հայագիտության մեջ: Հայ-կոմմագենյան աղերսակցության ուսումնասիրության հարցում նս բեկումնային դարձան 1950-ականները, երբ մի խումբ գիտնական-

---

[4] **Dörner F. K.** Zur Rekonstruktion der Ahnengallerie des Königs Antiochos I von Kommagene // *Istanbuler Mitteilungen* 17, 1967, P. 195-210; **Idem.** ed., Kommagene. Geschichte und Kultur einer Antike Landschaft // *Antike Welt* 6, 1975; **Idem.** *Kommagene, Götterthrone und Königsgräber am Euphrat. Neue Entdeckungen der Archäologie*, Bergisch Gladbach, Germany, 1981.

[5] **Idem** und **Goell Th.** *Arsameia am Nymphaios. //* Istanbuler Forschungen (այնուհետ. IF) 23, Berlin, 1963.

[6] **Neugebauer O., van Hossen H.B.** Greek Horoskopes // Memoiers of the American Philosophical Society, 48 (1959).

[7] **Hoepfner W.** Arsameia am Nymphaios. II, I, IF 33, Tübingen, 1983.

ներ՝ Գ.Տիրացյանը, Գ.Սարգսյանը և Ա.Փերիխանյանը[8] սկսեցին Կոմմագենեի պատմությունն ու մշակույթը դիտարկել հայագիտության համատեքստում: Դիտարկելով Կոմմագենեի պատմությունը հելլենիստական լայն համայնապատկերի վրա, նրանք լրացուցիչ լույս սփռեցին նաև Երվանդական և Արտաշիսյան Հայաստանի հասարակական-քաղաքական և հոգևոր-մշակութային իրողությունների վրա: Հայաստանի և հելլենիստական Կոմմագենեի հարևանությունը, շուրջ երեք դար Կոմմագենեում հայկական հինավուրց արքայատոհմի իշխելու հանգամանքը պայմանավորել է այդ երկրների հոգևոր-մշակութային փոխազդեցությունը և մեծ ներգործություն է ունեցել նրանց պատմական ճակատագրերի վրա: Գ.Տիրացյանի, Գ.Սարգսյանի և Ա.Փերխանյանի ստեղծած ակադեմիական դպրոցը կարևոր խնդիր էր համարում հին հայկական նյութի ուսումնասիրությունը Առաջավոր Ասիայի երկրների պատմության շաղկապակցվածության մեջ: Նրանք ձգտում էին հին հայոց պատմությունը երևելի և հասկանալի դարձնել հայրենական և օտար ուսումնասիրողների միջավայրում:

Այդ հարցում կարևոր էր հայոց և Կոմմագենեի պատմությունն ու մշակույթը ներկայացնել որպես հելլենիստական: Առաջինը այդ գաղափարը արտահայտեց Ս.Երեմյանը[9]: Այդ խոշոր պատմաբանների ջանքերի շնորհիվ հայկական հելլենիստագիտությունը առաջատար դիրքեր գրավեց խորհրդային պատմագիտության մեջ:

Հելլենիզմ եզրը առաջինը շրջանառության մեջ է մտցրել գերմանացի պատմաբան Յոհան Գուստավ Դրոյզենը (1808 - 1884), որը 1833թ. հրատարակել էր հանրահայտ «Հելլենիզմի պատմություն» հիմնարար աշխատության առաջին հատորը: Հաջորդ տասը տարվա ընթացքում լույս տեսան այդ մենագրության ևս երկու պրակ[10]: Գիտական հանրությունն առանց ուշադրության չթողեց Դրոյզենի աշխատությունը, բայց հաջորդ կես դարում որևէ մեկը չփորձեց զարգացնել նրա գաղափարները: Ուսումնասիրողների մեծ մասը շարունակում էր դիտարկել Սելևկյան և Պտղոմեյան տերությունների, առավել ևս Անտիգոնյանների թագա-

---

[8] **Тирацян Г.А.** Страна Коммагена и Армения // Известия Академии наук Арм. ССР. Общественные науки, 1954, №3. С. 69-74; **Саркисян Г.Х.** Город Древней Армении (III в. до н.э. – IV в. н.э.). Ленинградский университет, 1954, с. 9; **Он же.** *Тигранакерт.* Из истории древнеармянских городских общин. М.: Издательство Восточной Литературы, 1960. С. 33; **Периханян А.Г.** Храмовые объединения Малой Азии и Армении (VI в. до н.э. – III в. н.э.). Ответственный редактор В.И. Авдиев. М.: Издательство восточной литературы, 1959; **Սարգսյան Գ.Խ.** նշվ. աշխ. էջ 28-330, **Նույնի**, Հայ ժողովրդի պատմություն (այսուհետ՝ ՀԺՊ), Հ. I, - Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1971, էջ 512-514:

[9] **Еремян С.Т.** Основные черты общественного строя Армении в эллинистический период. // Известия АН Арм. ССР. Общественные науки 1948, № 11; **Он же.** Развитие городов и городской жизни древней Армении. // Вестник древней истории, 1950, № 1; **Он же.** О рабстве и рабовладении в древней Армении. // Вестник древней истории, 1953, № 3; **Он же.** Страны Закавказья в эпоху раннего средневековья / Очерки истории СССР (III–IVвв.). М, 1958.

[10] **Дройзен И.Г.** История эллинизма. / Пер. с фр. издания М.Шелгунова. Т. I-III. – 1370с. М.: Новая книга, Паломник, 1995 (репринт издания 1914 ։. (Сергиев Посад), 1890-1893 (переизд.: СПб, 1999, М.:Наука 2002); **Т.1**: Походы Александра Великого и начало распада его империи. М.: Эксмо: Изографус; СПб.: Terra Fantastika, 2003; **Т.2**: Войны диадохов и закат эллинизма. М.: Эксмо: Изографус; СПб.: Terra Fantastika, 2003 (Историческое культурное наследие).

վորության պատմությունը հունա-հռոմեական պատմագրության համատեքստում: Պերգամոնի, Կապադովկիայի, Բյութանիայի, Գաղատիայի, Պոնտոսի, Փոքր Հայքի, Նաբաթեացիների թագավորության, Հուդայի, Կիլիկիայի և Կոմմագենեի պատմությունը կամ մնում էր իրենց ուշադրության շրջանակներից դուրս, կամ դիտարկվում իբրև Մագնեսիայի ճակատամարտից հետո Սելևկյան տերությունից առանձնացած ծայրամասերի խճճված պատմություն, աննշան դրվագ Սելևկյան և հռոմեական կառավարման մինչև ընկած ժամանակաշրջանում:

Նույնիսկ այն հետազոտողները, ովքեր ընդունել են Դրոյզենի կողմից առաջարկած և շրջանառության մեջ մտցրած հելլենիստական քաղաքակրթության գաղափարը, դրա թվին էին դասում միայն Սև ու Միջերկրական ծովերի միջև և Եփրատից այն կողմ ընկած երկրները, որոնք իրենց համարում էին թե՛ տեղական և Աքեմենյան, թե՛ Սելևկյան կայսրության իրավաժառանգներ: Եփրատի ձախ կողմում գտնվող երկրները՝ Մեծ Հայքը, Միգդոնիան, Ադիաբենեն, Օսրոենեն, Կորդուենեն, Իվերիան, Ատրոպատենեն, Պարթևստանը, Բակտրիան, Սոգդիանան և այլք, դիտարկվում էին հին արևելյան, հիմնականում իրանական մշակույթի համատեքստում:

Ժամանակի ընթացքում, Ռոստովցևի և Թոյնբիի հեղինակավոր կարծիքների ազդեցության ներքո տեղի էր ունենում գիտակցում, որ Եփրատի թե՛ այս, թե՛ այն կողմում գտնվող երկրները, որոնք տարբեր ժամանակներում լինելով ինքնիշխան, կամ էլ հայտնվելով հունամակեդոնական, հռոմեական և իրանական տերությունների կազմում, այնուամենայնիվ առանձին, ինքնուրույն, սինկրետիկ հելլենիստական քաղաքակրթության մասն էին:

Պատմագրական քննությունը ցույց է տալիս, որ վերջին մեկ դարում որոշակի աշխատանք է կատարվել Կոմմագենեի նյութական մշակույթի և հայ-կոմմագենյան կապերի ուսումնասիրման գործում, բայց դա չի նշանակում, թե բոլոր հարցերը պարզված են և հետազոտված: Կոմմագենեի թագավորության պատմությունը հետագա հետազոտման և համակարգման կարիք ունի: Մինչև օրս էլ Կոմմագենեի քաղաքական պատմության շատ հարցեր դիտարկվում են սելևկյան և հռոմեական պատմության համատեքստում, հունա-մակեդոնական կամ հռոմեական իմպերիալիզմի դիրքերից: Յուրօրինակ հորինվածքի և խորհրդավոր տեսքի շնորհիվ Կոմմագենեի սրբավայրերն արդեն վաղուց դարձել են զբոսաշրջության կենտրոն, ինչպես նաև սիրող դիցաբանների և գերքաղաքականացված պատմաբանների շահարկումների առարկա:

Հայոց և Կոմմագենեի պատմությունն ու մշակույթը նենգափոխված ներկայացնում են նաև թուրք «ակադեմիական» պատմաբանները: Արևմտյան գիտնականների հետ թողարկած համատեղ հրատարակություններում նրանք կոմմագենյան Երվանդականներին ներկայացնում են իբրև իրանա-մակեդոնական արքայատոհմ, անտեսելով բացահայտ կապը Հայաստանի հետ:

Հայրենական պատմագիտության մեջ նշված թեմայով ևս չի կատարվել լուրջ ակադեմիական հետազոտություն, բարձրացված խնդիրների շրջանակը եղել է նեղ ու միակողմանի: Բավարար չափով չեն ուսումնասիրվել հայկական և կոմմագենյան մշակութային ավանդույթների փոխառնչությունները, թեև շատ

հետազոտողներ միանգամայն արդարացիորեն հելլենիստական երկու երկրները դիտարկում են քաղաքակրթական մեկ համատեքստում:

**Հետազոտության աղբյուրագիտական հիմքն** ընդհանուր առմամբ նույնն է, ինչ և հելլենիզմի պատմության վերաբերյալ ցանկացած հետազոտության համար: Առաջին հերթին դա վերաբերում է անտիկ հեղինակների ստեղծագործություններին: Մեզ չեն հասել կամ պահպանվել են միայն հատվածաբար պատմական այն աշխատությունները, որոնք նվիրված են առաջավորասիական հելլենիստական պետություններին, թեև այդպիսի աշխատություններ, անշուշտ, գոյություն են ունեցել: Կոմմագենյան թագավորության պատմության ուսումնասիրման համար մեծ արժեք են ներկայացնում Դիոն Կասիոսի և Հովսեպոս Փլավիոսի պատմական աշխատությունները: Երկու պատմիչներն էլ հիմնական ուշադրությունը հատկացրել են թագավորության արտաքին քաղաքական պատմությանը, դիվանագիտական բանակցություններին, պատերազմներին: Նրանց երկասիրություններում գրեթե անտեսված է Երվանդականների պետական կարգը, կոմմագենյան արքաների հասարակական-տնտեսական քաղաքականությունը, երկրի հոգևոր մշակույթը: Կոմմագենեի քաղաքական պատմության հետաքրքիր դրվագներ են շարադրել Կիկերոնը, Դիոդորոս Սիկիլիացին, Պլուտարքոսը, Պորփյուրոսը, Որոզինեսը, Պոմպեոս Տրոգուսը, Հուլիանոսը և այլք:

Կոմմագենեի հոգևոր կյանքի և հասարակական-քաղաքական ինստիտուտների պատմության ուսումնասիրության մեջ անգնահատելի է վիմագրական աղբյուրների դերը: Գերազանցապես հունարեն արձանագրությունների մեջ հատուկ նշանակություն ունեն Նեմրութ լեռան և Նիմփայոսի Արսամեայի վիմագիր արձանագրությունները: Կոմմագենեում իրականացվող հնագիտական հետազոտությունները գիտական հանրությանը ներկայացնում են ոչ միայն նյութական մշակույթի նորանոր նմուշներ, դրամներ և կիրառական արվեստի ստեղծագործություններ, այլև անգնահատելի նյութ են տրամադրում, հելլենիստական այդ զարգացած երկրի բնակիչների, հատկապես Կոմմագենեի իշխող՝ Երվանդական արքայատոհմի ներկայացուցիչների բարդ ու հարուստ ներաշխարհը վերհանելու համար: Արժեքավոր աղբյուր են՝ Տավրոսի բարձրաբերձ լեռներում կառուցված հուշակոթողները, որոնց մեջ, իհարկե, առանձնակի տեղ է զբաղեցնում Նեմրութ լեռան հանրահայտ սրբատեղի-դամբարանը՝ աստվածների և Անտիոքոս Ա Կոմմագենացու նշանավոր պատկերաքանդակներով: Այս հուշահամալիրը մեծությամբ և նշանակությամբ չի զիջում Պերգամոնի խորանին, որտեղ պատկերված են տիտանների զոտեմարտն աստվածների դեմ և առասպելական Տելեփոսի՝ Ատտալիդների իշխող արքայատոհմի հիմնադրի պատմությունը: Վերջին տարիների հետազոտությունները հարստացրել են նաև մեր պատկերացումները կոմմագենցիների առօրյա կյանքի մասին:

Ընդհանուր առմամբ, աղբյուրները բազմազան են, հարուստ տեղեկատվական նյութ են պարունակում և թույլ են տալիս հիմնավոր ձևով ուսումնասիրել Կոմմագենեի պատմությունն ու նրա հիմնական քաղաքական ինստիտուտները:

**Ատենախոսության մեթոդաբանական հիմքերը.** Արդի հումանիտար գիտության մեջ «աշխատում» է մեթոդաբանական իմացության բազմամակարդակ հայեցակարգը. փիլիսոփայական, ընդհանուր գիտական, մասնագիտական, կրթան-

քային (դիսցիպլինար) և միջկրթանքային հետազոտության մեթոդները: Ընդհանուր հումանիտար և հատուկ պատմական մեթոդներն, իրենց հերթին, բաժանվում են ավանդական պատմական և նորարարական մեթոդների:

Մեր ուսումնասիրությունում մենք օգտագործել ենք նշված բոլոր մեթոդները: Հետազոտության ավանդական մեթոդներից օգտագործվել են.

- նկարագրական (դեսկրիպտիվ)
- համեմատական (կոմպարատիվ) կամ պատմահամեմատական
- պատմատիպաբանական
- պատմահամակարգային
- դիախրոնիկ վերլուծության
- հետահայաց
- պատմական պարբերացման մեթոդները:

Սակայն, բացի ավանդական պատմագիտական մեթոդաբանությունից, ատենախոսության մեջ մենք կիրառել ենք նաև որոշ հարակից հումանիտար կրթանքների մեթոդներ.

- պատմափիլիսոփայական կամ պատմասիրական
- լեզվաբանական
- նշանագիտական (սեմիոտիկ) և մեկնողական (հերմենևտիկ)
- սոցիալ-հոգեբանական մեթոդները:

Այս բոլոր մեթոդները կիրառել ենք հաշվի առնելով այս կամ այն գլխում արծարծվող խնդիրների և ուսումնասիրվող նութի առանձնահատկությունները:

Առաջին գլխում, որը նվիրված է Կոմմագենեի քաղաքական պատմությանը, հիմնականում հենվել ենք ավանդական, էությամբ պոզիտիվիստական՝ նկարագրական և պատմահամեմատական մեթոդների վրա: Այս ընտրությունը պայմանավորված է գլխի ներածական բնույթով, որը նպատակ ունի ընթերցողին ծանոթացնել Կոմմագենեի քաղաքական պատմության հիմնական իրադարձություններին, որպես հետնախորք ծառայել այդ մերձեփրատյան հելլենիստական երկրի հոգևոր պատմության նկարագրման և իմաստավորման համար:

Փաստերի արտաքին բնութագիրը մեկնակետ է ծառայում երևույթի էության մեջ ներթափանցելու համար: Այստեղից էլ՝ վերականգնվող պատմական իրականության ընկալման քննադատականությունը, ինչով էլ պայմանավորված է առանձին պատմական սյուժեների հետազոտության մեջ *պատմաքննադատական մեթոդի,* ինչպես նաև պատմական աղբյուրների, երևույթների և գործընթացների ուսումնասիրման՝ անտիկ աշխարհի արդի պատմագիտության մշակած մեթոդների կիրառումը:

Նկատի ունենալով պատմական իրադարձություններում առանձին անհատների ներգրավվածությունը՝ նշված մեթոդների կողքին աշխատության առաջին գլխում օգտագործվել է սոցիալ-հոգեբանական մեթոդը, ինչը մեզ թույլ է տվել մխրճվել ուսումնասիրվող դարաշրջանի «հյուսվածքի» մեջ, փորձել բացատրել և հիմնավորել այս կամ այն պետական ու քաղաքական գործչի արարքների դրդապատճառները: Պատմահոգեբանական մեթոդը թույլ է տալիս «դրսից» նայել գործընթացին, լրացնել այն «ներսից» նետված հայացքով՝ ընկղմվելով բուն գործընթացի, ուսումնասիրվող ժամանակաշրջանի սկզբի և ավարտի միջև

ընկած տարածության մեջ։ Այստեղից էլ համապատասխան հնարքները՝ վերապրումը, «ներթափանցումը», ըմբռնումը, ինչն, իհարկե, տեղի է ունենում որոշակի աշխարհընկալմամբ, փորձով, պատմական այն իրականությունից վերցված և այն իրականությամբ ձևավորված գիտելիքներով հարստացած սեփական գիտակցության մասնակցությամբ։

Ցանկացած մեթոդ հստակեցված, դետերմինացված է այն տեսությամբ, որի վրա հիմնված է։ Բայց այն դետերմինացվում է նաև իրեն նախորդած և իր հետ համագոյակցող մեթոդների, և որ հատկապես կարևոր է՝ իր հետազոտած առարկայի հետ։ Դա լավ երևում է Մերձեփրատյան շփման գոտուն նվիրված երկրորդ գլխում, որը քննվում է ուոլերսթայնյան ***աշխարհ-համակարգերի*** մասին տեսության միջոցով։ Սրանով է պայմանավորված հետազոտության պատմափիլիսոփայական և պատմահամակարգային մեթոդների ընտրությունը սույն գլխի համար։ Այս գլխում կիրառվել է նաև *պատմահամակարգային մեթոդը,* որը երևույթը դիտարկում է իր սեփական էական տարրերի փոխկապակցության և զարգացման, սույն պարագայում՝ քաղաքական պատմության, բոլոր պետական ինստիտուտների, սոցիալական կառույցների, քաղաքականության տարբեր ուղղությունների, քաղաքական գաղափարախոսության, կրոնի, սոցիալական հոգեբանության, մշակույթի փոխկապակցության մեջ։

Համակարգային մոտեցումը ենթադրում է քաղաքական կազմակերպության դիտարկում նրա առանձին տարրերի զարգացման և փոխկապակցության մեջ։ Այս մեթոդի հիման վրա հելլենիստական քաղաքական կազմակերպությունը դիտարկվում է որպես սեփական բնութագրական գծեր և զարգացման օրինաչափություններ ունեցող համակարգ։ Հելլենիստական պետականությունն, իր հերթին, հելլենիստական աշխարհի ավելի լայն, ընդհանուր համակարգի մասն է կազմում և կապված է հելլենիզմի ինքնատիպ սոցիալական կառույցի, տնտեսական կազմակերպության, հոգևոր և նյութական մշակույթի հետ։

Եթե Կոմմագենեն դիտարկենք *պատմահամակարգային մեթոդի* պրիզմայի միջով, այն հանդես կգա որպես առհասարակ հելլենիստական աշխարհի ինքնատիպ մոդել՝ իրեն բնորոշ բազմաթիվ գծերով։ Երվանդականների պետության զարգացման մեջ արտացոլվել և իրենց արտահայտությունն են գտել հելլենիստական այլ երկրներին բնորոշ ընդհանուր շատ միտումներ և գծեր։ Ուստի աշխատությունում կարևոր տեղ են զբաղեցնում հղումներն այն նյութերին, որոնք վերաբերում են հռոմեա-հելլենիստական դարաշրջանին, որոշ փոքրասիական թագավորություններին, Հռոմին և, առաջին հերթին՝ Հայաստանին։ Մերձեփրատյան շփման գոտին դիտարկելիս, հաճախ հղումներ են արվում Հռոմեական կայսրության սահմանային գոտու լիմիտրոֆ պետություններին և երկրներին։ Նման մոտեցումը կարելի է բնութագրել որպես *պատմատիպաբանական մեթոդ։*

Երրորդ և չորրորդ գլուխները նվիրված են հելլենիստական դարաշրջանի միհրականության պատմությանն ու դրա փոխակերպմանը Կոմմագենեում, Մեծ Հայքում և Հռոմում։ Այս գլուխներում կիրառել ենք *հետահայաց մեթոդը* և *դիախրոն վերլուծության մեթոդը։*

Հինգերորդ գլուխը նվիրված է հելլենիստական ճարտասանական արվեստի փայլուն նմուշ հանդիսացող հունարեն ծիսական արձանագրությունների քննու-

թյանը։ Սույն գլխում հետազոտության հիմնական մեթոդ կարելի է համարել միջդիսցիպլինար մեթոդը՝ լրացված սոցիալ-հոգեբանական և լեզվաբանական, ինչպես նաև նշանագիտության (սեմիոտիկա) և մեկնության (հերմենևտիկա) մեթոդներով, որոնց օգնությամբ մասամբ հետազոտվել են Անտիոքոս Ա Կոմմագենացու ճարտասանական տեքստերը։ Սրանք նաև արժեքավոր աղբյուրներ են Կոմմագենեի առօրեականության պատմության ուսումնասիրման համար։

Պատմական պարբերացման մեթոդն օգտագործել ենք հելլենիզմի պատմության պարբերացումը մշակելիս և այն փուլերի բաժանելիս։

**Ատենախոսության գիտական նորույթը.** Նշված բոլոր մեթոդների կիրառումը պայմանավորել է աշխատության գիտական նորությունը, քանի որ Կոմմագենեի պատմության շատ կողմերն առաջին անգամ են դիտարկվել հետազոտական այս մեթոդաբանությամբ։ Ուսումնասիրությունում Կոմմագենեի պատմությունը դիտարկվել է միջանցիկ կտրվածքով, համընդգրկուն և համալիր կերպով՝ հաշվի առնելով քաղաքական, տնտեսական և հոգևոր բաղադրիչները։

Առաջին գլխում մենք քննել ենք ժամանակի հզոր տերություններով (Ասորեստան, Ուրարտու, Աքեմենյան տերություն, Սելևկյան տերություն, Մեծ Հայք, Հռոմ, Պարթևստան) մշտապես շրջապատված երկրի քաղաքական պատմությունը։ Նրանց հրապուրում էին այդ ոչ մեծ, բայց տնտեսապես և մշակութային առումով զարգացած և պասիոնար երկրի հարստությունը, նրա շահեկան ռազմավարական դիրքը։ Տիրելով այդ երկրին՝ կարելի կլիներ գերիշխանության հասնել տարածաշրջանում և նրա տարածքն օգտագործել որպես հարթակ Եփրատի այս կամ այն կողմում հետագա առաջխաղացման համար։ Կոմմագենեի Երվանդականների պայքարը երկրի անկախության և մշակութային ինքնության համար մենք լուսաբանել ենք ոչ թե հռոմեական իմպերիալիզմի դիրքերից, ինչպես ավանդաբար արվում է արևմտյան պատմագրության մեջ, այլ հենց Կոմմագենեի, Մեծ Հայքի և սույն տարածաշրջանի այլ երկրների շահերի տեսանկյունից։ Մենք փորձել ենք տարածաշրջանի երկրների պատմությունը քննել ասես թե ներսից։ Միևնույն ժամանակ, հնարավոր է նաև այլ մոտեցում՝ արդի հայագիտության դիրքերից, որը նույնպես կարող է արդյունավետ լինել մեր հետազոտությունում։

Դրա հետ մեկտեղ, աշխատությունում առաջին անգամ շրջանառության մեջ է մտցվել Մերձեփրատյան շփման գոտի հասկացությունը, որին նվիրված է երկրորդ գլուխը։ Այստեղ վերիմաստավորել ենք ուոլերսթայնյան *աշխարհ-համակարգ,* ինչպես նաև *պատազիծ* և *միջուկ* հասկացությունները, որոնք օգտագործվել են քննվող դարաշրջանը բնութագրելու համար։ Նշել ենք, որ Ուոլերսթայնը բացարձակացնում էր *միջուկի* և թերագնահատում *եզրամասի* ու նրա *մարգինալ* բնակչության պատմաքաղաքակրթական նշանակությունը։ Մարգինալները հաճախ միջնորդավորված դեր են խաղում տարբեր, երբեմն միմյանցից միանգամայն հեռու մշակույթների միջև։ Նման զուգակցությունը երբեմն օտարականներին դարձնում է այն միակ տարրը, որն ի վիճակի է ծայրամասում ստեղծել նոր քաղաքակրթական արժեքներ։ Լինելով շարժունակ և համակերպվող տարրեր՝ օտարականները հատկապես արդյունավետ և արարչագործ են լինում հենց տարանցումային դարաշրջանում՝ հետին պլան մղելով պահպանողական էլիտային և դառնալով իրենց ժամանակի գլխավոր գործող անձինք։

Մենք շրջանառության մեջ ենք մտցրել արևելահելլենիստական և հռոմեական քաղաքակրթական «նոմոսներ» հասկացությունները: Նույն գլխում վեր են հանվել այն գործընթացների նախադրյալները, որոնք հանգեցրել են հելլենիզմի եփրատամերձ Նոմոսի ձևավորմանը՝ իրեն բնորոշ բոլոր առանձնահատկություններով: Այսպիսով, Կոմմագենե երկրի պատմությունն առաջին անգամ քննվել է Մերձեփրատյան սահմանային շփման գոտու համատեքստում: Մերձեփրատյան շփման գոտու բաղկացուցիչ մասերն են եղել նաև Մեծ և Փոքր Հայքերը, ինչպես նաև Ծոփքի հայկական թագավորությունն այն ժամանակ, երբ վերջինը չի եղել Մեծ Հայքի թագավորության կազմում:

Երրորդ և չորրորդ գլուխներում մենք հետևել ենք այն երկար ու բարդ ճանապարհին, որն անցել է միհրականությունը՝ պարզ հեթանոսական պաշտամունքից բարդ, իր էությամբ մոնոթեիստական կրոնավարքաբանական համակարգի, որը հավակնում էր համակայսերական դառնալու դերին և միտում ուներ վերածվելու համաշխարհային կրոնի: Նշել ենք Հայաստանի և Կոմմագենեի հատուկ դերը միհրականության կայացման գործում: Աշխատությունում նշվում է զրադաշտականության որոշ ազդեցությունը միհրական դոգմաների ձևավորման վրա, միևնույն ժամանակ ընդգծվում է Միհրի պաշտամունքի ինքնուրույնությունը և անգամ որոշ հակադրվածությունը զրադաշտականությանն ու ժամանակի ավանդական հունա-հռոմեական պաշտամունքներին: Ասվածը վերաբերում է ինչպես պաշտամունքի կայացման վաղ փուլերին, այնպես էլ այն շրջանին, երբ այդ պաշտամունքն առանձնացել է որպես ինքնուրույն կրոնական ուսմունք և վերածվել հզոր հոգևոր շարժման, վերջինս երկար ժամանակ դիմակայում էր քրիստոնեությանն ու ժամանակի այլ հզոր պաշտամունքներին:

Հինգերորդ գլխում Նեմրուդի և Արսամեայի վիմագիր արձանագրությունները քննել ենք հելլենիստական ճարտասանության տեսակետից: Նման մոտեցումը, համենայնդեպս՝ վերջին հարյուր տարվա ընթացքում, առաջին անգամ է կիրառվում ինչպես հայրենական, այնպես էլ արտասահմանյան պատմագրությունում: Այստեղ էլ անցկացվել է նշված արձանագրությունների տեքստերի ոչ մեծ նշանագիտական և մեկնական քննական վերլուծություն: Կոմմագենյան նյութերի նմանատիպ հետազոտություն մինչ այս երբեք չի իրականացվել, և մենք նախատեսում ենք դա շարունակել հետագայում, քանի որ այն նոր հնարավորություններ է բացում կոմմագենյան հարուստ նյութի հետազոտման համար:

Սույն հետազոտության նորույթը համալիր մոտեցումն է: Կոմմագենեի պատմությունը քննվել է տարբեր մեթոդաբանությունների կիրառմամբ, ինչը թույլ է տվել ուսումնասիրվող առարկան դիտել տարբեր կողմերից և ստեղծել ուսումնասիրվող դարաշրջանի ու նրան բնորոշ երևույթների ընդարձակ համապատկերը:

**Ուսումնասիրության աշխարհագրական սահմանները** հիմնականում ընդգրկում են Եփրատի երկու ափերին գտնվող Հյուսիսային Ասորիքի և Հայկական լեռնաշխարհի շրջանները: Սակայն հետազոտության տրամաբանությունը հաճախ պահանջում է դիմել այլ երկրների, մասնավորապես՝ Հռոմեական կայսրության սահմանային մարզերի և հենց Հռոմի պատմության էջերին: Առանձին, նմանօրինակ երևույթներին այդպիսի հղումները թույլ են տալիս վեր հանել դրանց էական բնութագրերը: Ելնելով հետազոտության առարկայի

բարդությունից՝ **ուսումնասիրության ժամանակագրական շրջանակները** նույնպես չեն կարող խստորեն սահմանափակվել այն սահմաններով, որոնք ենթադրվում են ատենախոսության վերնագրում, այն է՝ հելլենիզմի դարաշրջանով: Բանն այն է, որ մեր քննած բազմաթիվ երևույթների ակունքները գտնվում են նախորդ դարաշրջաններում, ընդհուպ մինչև արխայիկ ժամանակները, այն դեպքում, երբ մեր ուսումնասիրած երևույթների հետևանքները շարունակում են իրենց անդրադարձն ունենալ հաջորդ դարաշրջաններում, ինչը մեզ ստիպում է դիմել առանձին սյուժեների և երևույթների քննարկմանը, որոնք վերաբերում են վաղ միջնադարին և ավելի ուշ ժամանակներին:

**Հետազոտության օբյեկտը և առարկան.** Հետազոտության օբյեկտ է ընտրվել Կոմմագենեի և Հայաստանի հելլենիստական շրջանի թագավորությունները: Հետազոտության սուբյեկտը Մերձեփրատյան շփման գոտին է, երկու երկրների հոգևոր մշակույթի առանձնահատկությունները, Միհրի պաշտամունքի փուլային փոխակերպումը հզոր կայսերական կրոնի, Անտիոքոս Կոմմագենացու վիմագիր արձանագրությունների հռետորաբանությունը:

**Հետազոտության նպատակը և խնդիրները.** Ատենախոսության նպատակն է, հիմք ընդունելով տեսական գրականության մեջ կուտակված իմացությունը և էմպիրիկ փաստերի ամբողջությունը, վեր հանել Կոմմագենեի հելլենիստական թագավորության նյութական և հոգևոր մշակույթի առանձնահատկությունները:

Այս նպատակին հասնելու համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

1. Համգամանալիորեն վերլուծել Կոմմագենեի քաղաքական և դինաստիական պատմությունը, վեր հանել Երվանդունիների լեգիտիմ արքայատոհմի դերը երկրի վեհացման գործում և նրա դերը ոչ մեծ, բայց կենսունակ թագավորության մշակութային ինքնուրույնության և պետական ինքնիշխանության համար պայքարում: Ցույց տալ, թե ինչպես շնորհիվ Երվանդունիների կշռադատված ու նպատակասլաց քաղաքականության, հնարավոր եղավ երկար ժամանակ դիմակայել և դիմանալ իմպերիալիստական Հռոմի հզոր գրոհին, ինչպես այդ արքայատոհմի ներկայացուցիչներից մեկի քաղաքական կամքի բացակայության ու անվճռականության պատճառով թագավորությունը վերացավ:

2. Շրջանառության մեջ մտցնել Մերձեփրատյան շփման գոտի հասկացությունը: Ցույց տալ Կոմմագենեի դերը՝ որպես ադապտացիոն քաղաքակրթական-շփման գոտի արևմտյան և արևելյան հելլենիզմի միջև:

3. Ցույց տալ Հայաստանի և Կոմմագենեի դերը հելլենիստական դարաշրջանի համաշխարհայնացման գործընթացներում: Բացահայտել, թե ինչու հենց Միհրի պաշտամունքը դարձավ ամենահաջողներից մեկը բազմաթիվ պաշտամունքներից: Ցույց տալ նրա այն առանձնահատկությունները, որոնք պատճառ դարձան, որպեսզի հին հեթանոսական պաշտամունքը վերածվի համաշխարհայինի հավակնող հզոր կայսերական կրոնի:

4. Քննության առնել Ք.ա. I - Ք.հ. I դդ. միհրականության՝ Հռոմեական կայսրության գաղափարախոսական ենթահիմքի վերածվելու փուլերը: Վեր հանել միհրականության անկման պատճառները:

5. Լուսավորյալ միապետ Անտիոքոս Ա Կոմմագենացու օրինակով ցույց տալ մերձեփրատյան երկրների քաղաքական և հոգևոր ընտրանիների աշխարհընկալման առանձնահատկությունները հելլենիզմի դարաշրջանում:

**Ուսումնասիրության գործնական նշանակությունը.** Ատենախոսությունն ունի ոչ միայն գիտական, քաղաքական, այլև գործնական, կիրառական նշանակություն: Ուսումնասիրության արդյունքները կարող են լայնորեն օգտագործվել հին հասարակությունների պետականության և գաղափարախոսության հարցերի հետագա հետազոտման համար, անտիկ պատմության, հին հասարակությունների պետության և իրավունքի պատմության դասավանդման, պետականության, քաղաքական պատմության ու զանազան ընդհանուր և հատուկ դասընթացների մշակման ժամանակ:

Ուսումնասիրությունը արծարծում է էթնիկական և սոցիալական տարասեռ բնակչություն ունեցող, միջազգային բարդ իրավիճակում գոյատևող պետության կառավարման խնդիրները: Այն որոշակի հետաքրքրություն է ներկայացնում նաև արդի աշխարհում: Հատուկ ուշադրության է արժանի հելլենիստական Կոմմագենեում ստեղծված այն գործելակերպը, որով արդյունավետորեն համադրվում էին արևելյան և արևմտյան քաղաքակրթական տարրերը, ինչպես նաև այն, որ Կոմմագենեի տիրակալները ձգտում էին բաց լինել հունա-հռոմեական արժեքների հանդեպ, բայց ոչ ի վնաս տեղական ավանդույթների: Կոմմագենեի թագավորները ձգտում էին պահպանել արժանապատվությունն ու չկորցնել իրենց արքայատոհմի դիմագիծը: Կոմմագենեի Երվանդականների փորձն արդի աշխարհում կարող է օգտակար լինել բազմաթիվ ոչ մեծ պետությունների էլիտաների ներկայացուցիչների համար: Մեծ հետաքրքրություն է ներկայացնում նաև կոմմագենյան արքաների գաղափարախոսական քաղաքականությունը: Երվանդականները մշակույթն օգտագործում էին իբրև քաղաքական գործիք արքայատոհմի լեգիտիմության քարոզչության, արվեստի և կրոնի միջոցով հելլենիստական քաղաքակրթական արժեքների արմատավորման համար:

Կոմմագենեի պատմությունը հատուկ հետաքրքրություն է ներկայացնում նաև այնպիսի երևույթների ընկալման տեսակետից, ինչպիսիք են հելլենիզմը և միհրականությունը: Հելլենիստական դարաշրջանի Կոմմագենեն ինքնատիպ լաբորատորիա էր, որտեղ, ինչպեսև տարբեր ժամանակներում Ալեքսանդրիայում, Պերգամոնում և Կապադովկիայում, մշակվում էին քաղաքակրթական նոր ձևեր: Փորձարկում անցնելով ծննդավայրում՝ դրանք տարածվում էին բնօրրանից բավական հեռու: Միևնույն ժամանակ, Կոմմագենեի քաղաքական և դինաստիական պատմության վերլուծությունը տարածաշրջանի մեծ ու փոքր հելլենիստական միապետությունների զարգացման բնորոշ օրինակ է տալիս, որը կարող են արտածվել առաջավորասիական այլ թագավորությունների վրա:

## ԳԼՈՒԽ Ա. ՀԵԼԼԵՆԻՍՏԱԿԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ԿՈՄՄԱԳԵՆԵԻ ԵՎ ԾՈՓՔԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

1. **Համառոտ աշխարհագրական տեղեկանք:** Կոմմագենեն ոչ մեծ լեռնային երկիր էր, Եփրատի աջ ափին, Մեծ Հայքի անմիջական հարևանությամբ: Հյուսիսում այն եզերված էր Տավրոսի լեռնաշղթայով, արևմուտքում՝ Ամանոսի լեռներով և Կիլիկիայով: Արևելքում Եփրատն էր, իսկ հարավում՝ Ասորիքը: Երկրի քաղա-

քական և մշակութային կենտրոնը Սամոսատն էր՝ իր անառիկ ամրոցով: Հնում Կոմմագենեն տարածաշրջանի տնտեսապես առավել զարգացած երկրներից էր: Ընդերքը հարուստ էր օգտակար հանածոներով: Այդ երկիրը գտնվել է տարանցիկ առևտրի ճանապարհների խաչմերուկում՝ կապելով Արևելքն ու Արևմուտքը: Տավրոսի լեռնանցքերի վերահսկումը, Եփրատի կամուրջների և գետանցների վրա տեղադրված մաքսակետերը Կոմմագենեի տիրակալներին բարձր եկամուտներ էին ապահովում և հնարավորություն ընձեռում հսկողություն սահմանել Փոքր Ասիայի և Միջագետքի միջև իրականացվող ապրանքափոխանակության նկատմամբ: Միշտ քաղաքական չեզոքության ձգտող Կոմմագենեն հաճախ առևտրային միջնորդի դեր էր կատարում ավանդական թշնամիների՝ պարթևների և հռոմեացիների միջև: Կիլիկիայի նման Կոմմագենեն գտնվել է տարասեռ մշակույթների խաչմերուկում. այստեղ իրար են հանդիպել խուրրիական, իրանական, ասորական, հունական և հայկական էթնամշակութային ավանդույթները: Դա էլ պայմանավորել է տեղական մշակույթի շեշտված համադրական բովանդակությունը: Եվ առավել ցայտուն այն դրսևորվել է հելլենիզմի դարաշրջանում: Երկու հարևան երկրների աղերսները երևելի են դառնում արդեն Ք.ա. II հազարամյակում, այսպես կոչված միտանիական դարաշրջանում:

2. **Հյուսիսային Ասորիքը իբրև հնագույն գերտերությունների առճակատման թատերաբեմ (Ք.ա. XVI դ. - Ք.ա. VI դ.):** Միտաննին զարգացած և բավականին կենսունակ պետություն էր, որն առաջացել էր Ք.ա. XVI դ. Եփրատի աջ և ձախ ափերին, այնտեղ, որի արևմտյան հատվածի վրա հետագայում կազմավորվել է Կոմմագենե հելլենիստական պետությունը: Հնում տեղի բնակչությունը հիմնականում խուրրիալեզու էր: Ք.ա. XVII դ. Հյուսիսային Ասորիքը նվաճում են արիական ռազմատենչ ցեղերը, որոնք իրենց տիրապետության տակ են առնում այս տարածքը և իրենց շուրջն են համախմբում խուրրիական անջատ ցեղախմբերը և ամորի-աքադական քաղաք-պետությունները: Այս ժամանակվանից սկսած Հյուսիսային Ասորիքում խուրրիերենին զուգահեռ սկսում է օգտագործվել արիական լեզուն, որը գլխավորապես քաղաքական և հոգևոր վերնախավի լեզուն էր:

Հետազոտողների համոզմամբ Հանիգալբատ (Միտաննի) պետությունը ստեղծվել է Ք.ա. XVII դ.: Կարծում ենք, որ տարբեր ցեղերի համախմբումը հնարավոր դարձավ արիական ցեղերի և հատկապես վերջիններիս ռազմական և հոգևոր վերնախավի գերիշխող դերի շնորհիվ: Միտաննին իր բնակչության խայտաբղետ կազմի և ինքնավար և ինքնամփոփ քաղաք-պետությունների պատճառով այդպես էլ մնաց փխրուն և անջատական պետական կազմավորում, որը համախմբվում էր գլխավորապես արտաքին վտանգի ժամանակ: Այն շուրջ երեք դար կենաց ու մահու պայքար էր մղում Եգիպտոսի, Խեթական թագավորության և աշխարհակալ Ասորեստանի դեմ: Ք.ա. XIV դ. Երկրորդ կեսին Միտաննին հայտնվում է հզոր Խեթական տերության իշխանության ներքո, իսկ ավելի ուշ (Ք. ա. մոտ 1200թ.), ասորեստանյան բռնազավթումների պատճառով, վերջնականապես կործանվում է ռազմատենչ արամեական ցեղերի ներխուժման պատճառով:

Արամեական ցեղերի լեզուն սկսում է աստիճանաբար շրջանառությունից դուրս մղել խուրրիերեն և մասամբ միտանիական արիական լեզուները[11]:
Միտանիական միասնական պետության անկումից հետո Հյուսիսային Ասորիքում շարունակում էին գոյատևել առանձին իշխանություններ ու քաղաք-պետություններ: Ք.ա. IX դ. վերջը և VIII դ. առաջին կեսը նշանավորվեց Ասորեստանի տնտեսական և քաղաքական զգալի թուլացմամբ: Դրանից օգտվելով, երիտասարդ Ուրարտական պետությունը քայլեր ձեռնարկեց հյուսիսային Ասորիքն իր ազդեցության տակ առնելու և հակաասորեստանյան դաշնային միություն ստեղծելու ուղղությամբ: Քաջ գիտակցելով Կոմմուխի առանձնահատուկ դերը, Վանի թագավորներն էլ իրենց հերթին ուժերն ուղղեցին այդ երկիրը գրավելու համար: Այսպիսով Կոմմագենեն դառնում է տարածաշրջանի երկու գերտերությունների՝ Ասորեստանի և Ուրարտուի քաղաքական մրցակցության թատերաբեմ: Այդ իրավիճակը բազմիցս կրկնվելու է նաև հաջորդ դարերում:
**3. Կոմմագենե երկիրը աքեմենյան ու հելլենիստական դարաշրջաններում:** Ք.ա. 605թ. Կարքեմիշի ճակատամարտից հետո Հյուսիսային Ասորիքը հայտնվում է Բաբելոնի տիրապետության տակ, իսկ կես դար անց այն ռազմակալում է Կյուրոս Մեծը: Երկիրը երկար ժամանակով հայտնվում է Աքեմենյան Պարսկաստանի տիրապետության ներքո: Աքեմենյան տիրապետության շրջանում Կոմմագենեն և Մեծ Հայքը միավորվեցին մեկ սատրապության ներքո: Ք.ա. մոտ 518թ. Դարեհ Ա-ի վարչական վերափոխումների արդյունքում Կոմմագենեն հայտնվեց արևմտահայկական՝ XIII սատրապության կազմում: Սակայն Քսենոփոնի «Բյուրոց նահանջի» ժամանակ, XIII և XVIII սատրապությունները պետք է որ արդեն ամփոփված լինեին մեկ կիսանկախ վարչական միավորման մեջ:

Աքեմենյան տերության անկումը և դրան հաջորդած խառնակ դարաշրջանը հանգեցրին տնտեսական, էթնո-մշակութային և այլ կապերի թուլացմանը, սկզբում՝ Աքեմենյան տերության առանձին երկրների միջև, իսկ հետո՝ նաև դրանց ներսում: Արդյունքում Մեծ Հայքի թագավորությունից մեկը մյուսի հետևից սկսեցին անջատվել սահմանամերձ երկրամասերը: Ինչպես հայտնի է, առաջինը Հայաստանից անջատվեց Փոքր Հայքը: Դա տեղի ունեցավ Ք.ա. 323թ., դիադոխների՝ Բաբելոնի ժողովից հետո: Ինչ վերաբերում է Հայաստանի մյուս երկու մերձեփրատյան երկրամասերին՝ Ծոփքին և Կոմմագենեին, ու, թերևս, Եկեղիք գավառի մի մասին, ապա դրանք Մեծ Հայքից անջատվել են ավելի ուշ, մոտավորապես Ք.ա. III դ. 70 - 60-ական թթ.: Անկախանալով՝ դրանք Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմտյան մասում կազմեցին միացյալ Ծոփք-Կոմմագենյան թագավորություն՝ սկզբում Սամոսատ, իսկ հետո Արշամաշատ մայրաքաղաքով: Այդ պետության իշխող արքայատոհմը դարձավ Երվանդականների արևմտյան ճյուղը:

Վերածնված Երվանդականների արքայատոհմն առաջին իսկ օրվանից ստիպված էր համառ պայքար մղել Սելևկյան թագավորության նկրտումների դեմ: Նրանք ակտիվ դերակատարություն ունեին հակասելևկյան դաշնության մեջ, որը սկսել էր ձևավորվել դեռևս Ք.ա. III դ. սկզբներին: Արդեն III դ. 70-60-

[11] **Քոսյան Ա.** Միտաննի // Հայաստանի հարակից երկրների պատմություն / խմբ. խորհուրդ՝ Ռ. Սաֆրաստյան և ուրիշ. Հատ. I, Եր, Զանգակ, 2013, Հ. 1, Հին շրջան, էջ 387-403:

ական թթ. Հայաստանն ու փոքրասիական մի շարք երկրներ հայտնվեցին միասնական իրավական-քաղաքական դաշտում, որը կոչված էր ապահովել նորելուկ թագավորությունների իշխանության լեգիտիմությունը: Դա արտահայտվում էր նորաստեղծ թագավորությունների միմյանց ճանաչման և խնամիական փոխադարձ կապերի հաստատման մեջ: Պակաս կարևոր չէր նոր արքայատների տոհմածառերի և սեփական տոմարների ստեղծումը: Այսպես, Մերձսևծովյան ավազանում աստիճանաբար լայն տարածում է ստանում Բյութանիական թագավորական տոմարը: Այդ իրավա-քաղաքական դաշտի մեջ մտնելը, նորաստեղծ պետությունների համար ընդամենն առաջին քայլն էր, հաջորդը՝ Սելևկյան տիրակալների կողմից նրանց իշխանության ընդունելը: Տեղական դինաստները ձգտում էին խնամիական կապեր հաստատել նաև Սելևկյան արքայատան հետ և կենցաղում հնարավորինս նմանվել նրանց: Տեղական արքայի Սելևկյան տան արքայադստեր հետ ամուսնանալը նշանակում էր օրինական թագավոր ճանաչվել ողջ հելլենիստական աշխարհում: Դա հնարավոր էր մեկ պարտադիր պայմանի դեպքում, անհրաժեշտ էր, որ տեղական թագավորներն անվերապահորեն ընդունեին հելլենիստական արժեհամակարգը և յուրացրած լինեին հունական բարքերն ու սովորույթները: Սելևկյան արքայադստրերը տեղափոխվելով ամուսինների պալատները՝ իրենց հետ բերում էին նախնիների ավանդույթները, կենսակերպն ու բարքերը: Այդ ամենը դառնում էր լրացուցիչ խթան տեղի վերնախավի մեջ հելլենիզմի տարածման և արմատավորման համար:

Անտիոքոս Ա-ի նեմրուդյան վիմագրերը վկայում են, որ արևմտյան Երվանդականներից սերող Սամոս (մոտ Ք.ա. 260-243թթ.) դարձավ Ծոփք-Կոմմագենյան թագավորության հիմնադիրը: Ք.ա. III դ. կեսերին նա կառուցել է Սամոսատը, աղբյուրներում առաջին անգամ այն հիշատակվում է Ք.ա. 245թ. Էրատոսթենոսի աշխատության մեջ: Քաղաքի տեղն ընտրված էր այնպես, որ հնարավոր լիներ վերահսկել Եփրատի վրայով ձգվող առևտրային ճանապարհները, Հ. Մանանդյանի համոզմամբ այստեղով է անցել «Արքունի պողոտան»: Այն նաև եղել է Դամասկոսից, Պալմիրայից և Սուրայից դեպի Փոքր Հայք ու Եվքսինյան ծով տանող ճանապարհների փոխադրական կայան: Սամոս արքան Ծոփքի արևելյան մասում կամ, հնարավոր է՝ նույնիսկ Եկեղիքում կառուցել է վաղ բյուզանդական աղբյուրներում հայտնի է Սամոկարտա քաղաքը:

Աղբյուրներից հայտնի է, որ Սամոսին հաջորդել է իր եղբորորդի Արսամեսը (Արշամ, մոտ Ք.ա. 243-226թթ.): Վերջինս իր հարևան ոչ մեծ հելլենիստական պետությունների իշխողների պես շահագրգռված էր Սելևկյան տերության թուլացմամբ և որոշ հաջողությունների է հասել այդ ուղղությամբ: Անտիոքոս Հիերաքսի օգնության մասին Պոլիենոսի պատմական ակնարկը դրա վառ օրինակներից մեկն է: Իր նախորդի նման Արսամես-Արշամը շինարարական եռանդուն գործունեություն էր ծավալել թե՛ Ծոփքում, թե՛ Կոմմագենեի տարածքում: Հայտնի է, որ Ծոփքի և Եկեղիքի սահմանագլխին նա կառուցել է նոր մայրաքաղաքը՝ Արշամաշատը: Կոմմագենեում նա կառուցել է իր անունը կրող ևս երկու քաղաքներ՝ Եփրատի և Նիմփայոսի Արսամեաները: Արսամեսն իշխել է դեռևս միացյալ Ծոփք-Կոմմագենյան թագավորությունում: Նա աջակցել է Սելևկոս Բ-ի եղբորը՝ գահի անհաջողակ հավակնորդ Անտիոքոս Հիերաքսին:

Մեզ հայտնի հաջորդ Երվանդական Արշամի որդի ու թերևս Կոմմագենեի թագավոր Սամոսի եղբայր Քսերքսեսը եղել է միայն Ծոփքի թագավոր: Քսերքսեսի իշխանության տարիներն համընկան Ասորիքի թագավորության աննախընթաց հզորացման շրջանի և Անտիոքոս Գ Սելևկյանի արևելյան արշավանքների հետ: Ըստ Պոլիբիոսի, Ծոփքի տակավին երիտասարդ թագավոր Քսերքսեսը առաջիններից էր, ով ենթարկվեց Անտիոքոս Գ-ի հարձակմանը, բայց հանդիպելով դիմադրության, գնաց փոխզիջումների: 201 թ. վերադառնալով իր Արևելյան արշավանքից Անտիոքոսը վերջնականապես իր իշխանությանն է ենթարկել Երվանդականների տան տիրույթները՝ Մեծ Հայքը, Փոքր Հայքը, Ծոփքն ու Կոմմագենեն: Դավադրաբար սպանվում է Քսերքսեսի փոխարեն Սելևկյան թագավորը Ծոփքի ստրատեգոս է կարգում հայազգի Զարեհ-Զարիադրեսին, իսկ Կոմմագենեում՝ էպիստատես՝ ոմն Պտղոմայոսին (201 – 163): Ք. ա. 162 թ. Դիոդորոս Սիկիլիացին Պտղոմայոսին հիշատակում է արդեն իբրև Կոմմագենեի ինքնակալ, իսկ Սամոսատն իբրև երկրի մայրաքաղաք:

Ի տարբերություն Մեծ Հայքի և Ծոփքի կառավարիչներից, Պտղոմայոսը, Մագնեսիայի մոտ Սելևկյանների ջախջախումից հետո, չվճռեց իրեն թագավոր հռչակել: Նա իրեն թագավոր հորջորջեց միայն 162թ.: Պտղոմայոսը մահացել է Ք.ա. 130թ.: Անմիջապես իր մահվանից հետո Կոմմագենեի գահին մենք կրկին տեսնում ենք արևմտյան Երվանդական թագավոր Սամոս Դիկայոս Թեոսեբիոսին (մոտ Ք.ա. 130-109 թթ.), որն ըստ ամենայնի վերականգնել էր ընդհատված Երվանդական արքայատոհմը Կոմմագենեում:

Կոմմագենյան գահի ամենավառ անհատականություններից է Միհրդատ Ա Կալլինիկոսը (Ք.ա. 109-70 թթ.): Կոմմագենեն, հելլենիստական դարաշրջանի շատ պետությունների նման բազմազգ և տարասեռ համակեցություն էր: Տեղի ժողովուրդները խոսում էին տարբեր լեզուներով, ունեին տարբեր ավանդույթներ և սովորույթներ: Կոմմագենյան հանրույթի ինքնության ձևավորման համար նոր արքա Միհրդատ Ա Կալլինիկոսը նախաձեռնում է մի շարք կարևոր միջոցառումներ: Դասական դարաշրջանի Հունաստանում մշտապես մարտնչող քաղաք-պետությունները միավորող կարևոր գաղափարախոսական գործիքներից էին Օլիմպիական համաստվածությունը և նրան նվիրված համահունական մարզախաղերը: Վերջիններիս ժամանակ դադարում էին Հունաստանը ջլատող անդադար պառակտիչ պատերազմները: Նույն միջոցին դիմեց Միհրդատը, ով համաժողովրդականությունն ապահովելու համար, Կոմմագենեում յուրաքանչյուր տարի կազմակերպում էր Օլիմպիական խաղերի նմանությամբ մարզախաղեր: Երիտասարդ տարիներին Միհրդատը մասնակցել է այդպիսի խաղերի և միշտ եղել է հաջողակ, որտեղից էլ նա ստացել էր Կալլինիկոս՝ «Գեղեցիկ հաղթող» մականունը: Կարևոր նշանակություն ունեցավ Կոմմագենեում նոր կրոնական համակարգի ձևավորումը: Այն հիմնված էր նախնիների պաշտամունքի և արդիականացված զրադաշտականության վրա, սակայն նոր կրոնական համակարգի առավել կարևոր տարրերից էր Միհրի պաշտամունքը: Կոմմագենեում ստեղծվեց վերէթնիկ կրոնագաղափարախոսական մի համակարգ՝ խարսխված զրադաշտականության և հնագույն արիական հոգևոր ավանդույթների վրա:

Դեռևս երիտասարդ տարիքում Միհրդատն ամուսնացել էր Լաոդիկե Է Թեայի հետ, որը Սելևկյան Անտիոքոս Ը Գրիպոսի և Պտղոմեյան տան արքայադուստր Տրիփաենեի դուստրն էր: Այդ ամուսնությունից, Ք.ա. 98 թ. հուլիսի 29-ին, ծնվել է Անտիոքոս Ա-ն (իշխել է մոտ. Ք.ա. 70-38 թթ.), թերևս Միհրդատի միակ որդին և թագաժառանգը: Անտիոքոս անունը նա ստացել է ի պատիվ մայրական գծով իր պապի: Անտիոքոս Ա-ն մայրական կողմից Հյուսիսային Ասորիքում արմատներով առաջին հունամակեդոնական թագավորն էր՝ Սելևկոս Ա Նիկատորի և Եգիպտոսի Պտղոմայոս Ա Սոտերի ուղիղ շառավիղը: Նախկինում Ասորիքի թագավորության կողմից մշտական ագրեսիայի առարկա հարևան երկրները, այժմ հայտնվեցին Սելևկյանների հետ միևնույն հարթության վրա: Միհրդատ Կալլինիկոսը Լաոդիկեի արքայադստեր միջոցով հաղորդակից դարձավ հունական բարձր մշակույթին և տեղ գտավ Սելևկյան արքայատան տոհմածառում: Անտիոքոսն էլ կնության առավ Կապադովկիայի արքա Արիոբարզան Ա-ի (95-63) դստեր և Արիոբարզան Բ-ի (63-51) քրոջը՝ Պյութոդորիսին (Իսիս Փիլոստրոգեին՝ «Միասեր»): Այս ամուսնությունը քաղաքական հաշվարկի արդյունք էր, սակայն իր արձանագրության մեջ Անտիոքոսն իր կնոջը քնքշանքով անվանում է «սիրելի»: Վերջինից նա ունեցել է երեք զավակ. Միհրդատ Բ Կոմմագենացին, որը հոր մահից հետո ժառանգել է Կոմմագենեի գահը, Անտիոքոս Բ-ն՝ սպանված Ք.ա. 29թ. Օգոստոս կայսեր հրամանով և Լաոդիկե Բ-ն՝ ամուսնացած պարթևաց Հորոդես Բ-ի հետ:

Հայտնի է, որ Ծոփքը (Ք.ա. 93 թ.) և Կոմմագենեն (Ք.ա. 87 թ. հետո)՝ իբրև վասալ թագավորություններ մտան Հայոց Տիգրան Բ-ի տերության կազմի մեջ: Սակայն տարածաշրջանի գործերին Հռոմի միջամտության պատճառով: Տիգրանը ստիպված էր հեռանալ նվաճած երկրներից, այդ թվում Կոմմագենեից:

**4. Առճակատում Հռոմի հետ:** Դիոնի վկայությամբ, Ք.ա. 69 թ. հռոմեացիներն առաջին անգամ գրոհեցին Կոմմագենեի թագավորության վրա և պաշարեցին Սամոսատը: Պաշտպանությունը գլխավորում էր անձամբ Անտիոքոս արքան: Հռոմեական ռազմական մեքենան մատնվեց անհաջողությանը: Ք.ա. 69թ. Սամոսատի պարիսպների տակ իրար հանդիպեցին Անտիոքոս արքան և հռոմեական կոնսուլ Լուկուլլոսը, որը մատնվել է անփառունակ անհաջողության: Հաղթանակներով ոգեշնչված և օգտվելով այն հանգամանքից, որ հայոց արքա Տիգրանը և Միհրդատ Պոնտացին զբաղված էին Հռոմի հետ ծագած պատերազմով և ներքին խժդժություններով, Անտիոքոսը ռազմակալեց Սելևկիան և զգալիորեն ընդարձակեց իր թագավորության սահմանները:

Լուկուլլոսի ձախողումները Արևելքում կոչված էր շտկել Պոմպեոսը: Տիգրանի հետ Արտաշատի պայմանագրի կնքումից անմիջապես հետո Պոմպեոսը կազմակերպեց երկրորդ արշավանքը Անտիոքոս Կոմմագենացու դեմ: Նա ներխուժեց Կոմմագենեի թագավորություն, սակայն ևս առանձնակի հաջողությունների չհասավ: Պոմպեոսը բավարարվեց նրանով, որ Կոմմագենեի արքան իրեն ճանաչեց Հռոմի «բարեկամ»: Կնքված հաշտության պայմանագիրը շահեկան էր Անտիոքոս արքայի համար և բնավ ձեռնտու չէր հռոմեացիներին: Ի տարբերություն այլ երկրների Կոմմագենեն ոչ միայն պահպանեց իր ինքնիշխանությունը, այլև ընդլայնեց այն հարևան Միջագետքի որոշ երկրամասերի հաշվին: Պոմպեոսի

հետ պայմանգիրը, ըստ երևույթին, կնքվեց Ք.ա. 64 թ.: Հայաստանի և տարածաշրջանի մի քանի այլ հզոր երկրների պես Կոմմագենեն հայտարարվեց «հռոմեական ժողովրդի դաշնակից և բարեկամ», վերականգնվեցին Երվանդական արքայի ինքնիշխանությունն ու նախկին տիտղոսները: Հռոմեացիները կարծես ամեն գնով ձգտում էին սիրաշահել Անտիոքոսին: Ք.ա. 59 թ. Հռոմեական Ծերակույտի անունից Կեսարն Անտիոքոս Ա Կոմմագենացուն ուղարկել է տոգա: Ավանդաբար այն շնորհում էր նրան, ով հռչակվում էր հռոմեական քաղաքացի: Կոմմագենյան արքային ուղղված ուշադրության այդ նշաններն ու արտոնությունները պատահական չէին և պայմանավորված էին այս և նախորդ պատերազմում Անտիոքոսի՝ հռոմեացիներին ցուցաբերած համառ դիմադրությամբ: Եթե հնարավոր չէ երկիրը գրավել զենքով, պետք է շահել արքայի համակրանքը և ընդգրկել նրան հռոմեական արտաքին քաղաքականության ոլորտի մեջ: Դա թերևս ավելի արդյունավետ ճանապարհ էր հռոմեացիների համար, ուստի ինչպես և Տիգրանի դեպքում, հռոմեական զորավարը, նպատակահարմար չգտավ շարունակել առճակատումը և Կոմմագենեի տիրակալին ավելի թշնամացնել Հռոմի հետ:

Անջատվելով Մեծ Հայքից՝ Կոմմագենեի տիրակալ Անտիոքոս Ա-ն սկսեց վարել ինքնուրույն քաղաքականություն, որն ուղղված էր իր ոչ ձևական ինքնիշխանության պահպանմանը և կոմմագենյան Երվանդականների արքայատան հեղինակության բարձրացմանը: Անտիոքոսի «հռոմեասիրությունը» չխանգարեց նրան իր դստերը՝ Լաոդիկեին կնության տալ Հռոմի ամենավտանգավոր ախոյան պարթևաց արքա Որոդեսին: Այդ ամուսնությունից ծնվել է պարթևաց թագաժառանգ Պակորոս-Բակուրը՝ հետագայում Հայոց Արտավազդ արքայի փեսան: Աղբյուրներից պարզորոշ երևում է, որ Անտիոքոսը նախապատվություն չէր տալիս հակադիր կողմերից որևէ մեկին և ելնելով քաղաքական իրադրությունից, աջակցություն էր ցուցաբերում մերթ հռոմեացիներին, մերթ պարթևներին: «Քաղաքացիական պատերազմներում» Կեսարը նաև հայտնում է, որ Ք.ա. 49թ., իր և Պոմպեոսի միջև ծագած պատերազմի ժամանակ Անտիոքոսն առանց վարանելու անցավ Պոմպեոսի կողմը՝ համարելով նրան անձնական բարեկամ և իր երկրի համար ցանկալի դաշնակից: Պատերազմի ամենասկզբում իսկ նա, իր դաշնակցին ուղարկեց կոմմագենյան հեծյալ նետաձիգների՝ hippotoxotai ընտիր ջոկատ: Պոմպեոսի հետ կնքած դաշնագիրը և տարածաշրջանում ստեղծված իրադրությունը լավագույնս համապատասխանում էր Կոմմագենեի շահերին: Կարելի է ենթադրել նաև, որ Պոմպեոսի նկատմամբ Անտիոքոսի տածած համակրանքը պայմանավորված էր նրա միհրական լինելու հանգամանքով:

Այդ ամենը բնորոշում է Անտիոքոսին՝ իբրև ճկուն և հմուտ քաղաքական գործչի, որն իր ինքնիշխանությամբ պարտական լինելով հռոմեացիներին և տիտղոսաշարում ունենալով «հռոմեասերի» պատվանունը, ելնելով երկրի շահերից՝ կարող էր առանց վարանումների հայտնվել հակադիր ճամբարում: Այդ առումով Անտիոքոս Ա Կալլինիկոսի կերպարն ունի շատ ընդհանրություններ իր ժամանակակից Հայոց Արտավազդ Բ-ի կերպարի հետ: Վերջինիս պես Անտիոքոս Ա-ն հմտորեն կիրառել է «երրորդ ուժի» քաղաքականություն: Այդ թագավորի օրոք Կոմմագենեն աննախընթաց զարգացում է ապրել, որի լավագույն դրսևորումներն էին Անտիոքոս արքայի հսկայական հարստությունը և

գահակալության տարիներին Կոմմագենեում ծավալված վիթխարի շինարարությունը: Կոմմագենեի քաղաքական ինքնուրույնության և արքայի բարձր հեղինակության մասին է վկայում նաև վերջինիս տիտղոսաշարը՝ վավերացված Նեմրութ լեռան և Նիմփայոսի Արսամեայի սրբավայրերի արձանագրություններում: Սակայն որքան էլ Անտիոքոսի քաղաքականությունը լիներ արդյունավետ, այն չէր կարող երկիրն անվերջ զերծ պահել հարևան տերությունների ոտնձգություններից: «Հռոմեական ժողովրդի դաշնակցի և բարեկամի» կարգավիճակը, Կոմմագենեի արքան գլխավորապես օգտագործում էր իր ինքնիշխանությունն ամրապնդելու համար, ինչը չէր համընկնում ոչ ծավալապաշտական հռոմեական վերնախավի, ոչ էլ պարթևների և անգամ հայերի ռազմավարական ծրագրերի հետ:

Երկիրը Հռոմին ենթարկելու նոր փորձը կատարեց Մարկոս Կրասոսը, որը, սակայն, Ք. ա. 53 թ. պարտություն կրեց պարթևներից և սպանվեց: Հռոմեացիներին չէր կարող չանհանգստացնել այն, որ պարթևաց թագաժառանգ Բակուրն Անտիոքոս Կոմմագենացու թոռն էր և հայ Արտավազդի փեսան: Ձևավորվող պարթևա-հայկական-կոմմագենյան դաշինքը խախտում էր Պոմպեոսի ստեղծած ուժերի դասավորվածությունը և կարող էր հռոմեացիների համար մեծ անախորժությունների պատճառ դառնալ: Բակուրի մահը այդ դաշինքը զրկեց հեռանկարից, և այն շուտով կազմալուծվեց: Անտիոքոսը ստիպված եղավ իր երկիրը պաշտպանել մեկ այլ «դաշնակից և բարեկամի» եռապետ Անտոնիոսի նկրտումներից: Վերջինիս միացավ կոմմագենյան Երվանդականների վաղեմի մրցակից և ախոյան Հուդայի արքա Հերովդեսը: Բայց Սամոսատի պարիսպները մնացին անառիկ: Անտոնիոսը ստիպված եղավ նահանջել՝ կնքելով Անտիոքոսի հետ հաշտության պայմանագիր: Կոմմագենեն պահպանեց իր ինքնիշխանությունը և մնաց «հռոմեական ժողովրդի դաշնակից ու բարեկամ»: Անտիոքոսը խոստացավ այլևս չօգնել պարթևներին և խայտառակված Անտոնիոսին վճարեց ընդամենը 300 տաղանդ, նախկինում առաջարկած 1000-ի փոխարեն:

Ք.ա. 31 թվականից սկսած աղբյուրներում իբրև Կոմմագենեի տիրակալ հիշատակվում է Անտիոքոս Բ-ն (մոտավորապես 31-29) և Միհրդատ Բ-ն (մոտ. Ք. ա. 29-20 թթ.): Լինելով Հայոց Արտաշես Բ-ի ժամանակակիցն ու ինչ-որ առումով բախտակիցը, Միհրդատ Բ-ն շարունակում էր վարել ինքնուրույն քաղաքականություն՝ տեղի չտալով ոչ հռոմեական, ոչ էլ պարթևական ճնշումներին: Նրան հիմնականում հաջողվում էր ապահովել երկրի խաղաղությունը և ինքնիշխանությունը: Չհրաժարվելով «հռոմեական ժողովրդի դաշնակից և բարեկամ» տիտղոսից, նա, միաժամանակ, ձգտում էր բարեկամական հարաբերություններ պահպանել պարթևների հետ: Այդ քաղաքականության դրսևորումներից է պարթևաց թագուհի, Միհրդատ Բ Կոմմագենացու քրոջ՝ Լաոդիկեի մահվան և հուղարկավորման հետ կապված որոշ հանգամանքները: Ժամանակին, քաղաքական նկատառումներով, վերջինս կնության էր տրվել պարթևաց Որոդես Բ արքային, սակայն, նույնիսկ Տիզբոնում, Լաոդիկեն հայրենիքի հետ կապերը երբեք չէր խզում: Սերտ կապեր կային նաև Լաոդիկեի անդրանիկ որդի Բակուրի և վերջինիս պապ Անտիոքոս Ա Կոմմագենացու միջև:

Միհրդատ Բ-ի մահվանից իշխող արքայատոհմը Կոմմագենեում սկսեց անկում ապրել: Քիչ ժամանակ անց երկիրը կորցրեց իր անկախությունն:

**5. Թագավորության վախճանը: Pax Romana-ի սահմանագը:** Միհրդատ Բ-ին հաջորդած որդիները՝ Միհրդատ Գ-ն (մոտ Ք.ա. 20 թ.) և Անտիոքոս Գ-ն թուլակամ և հռոմեական «դուդուկի տակ պարող» արքայիկներ էին: Զարմանալի չէ, որ երբ Ք.հ. 17 թ. մահացավ Անտիոքոս Գ-ն, Կոմմագենեն կորցրեց նույնիսկ այդ ձևական ինքնիշխանությունը: Դա տեղի ունեցավ Տիբերիոսի օրոք: Վերջինս 17 թ. Արևելք ուղարկեց իր եղբորը՝ Գերմանիկոսին: Վերջինս տեղում անցկացրեց մի շարք միջոցառումներ, որոնց հետևանքով Փոքր Հայքի, Կապադովկիայի, Կիլիկիայի և Կոմմագենեի թագավորությունները դարձան սովորական հռոմեական նահանգներ, իսկ Կապադովկիան և Կոմմագենեն միավորվեցին մեկ նահանգի մեջ: Գերմանիկոսը հրաժարվեց Պոմպեոսի և Կեսարի քաղաքական դոկտրինայից, ըստ որի Հռոմի և տեղական հելլենիստական միապետների հարաբերությունները կառուցվում էին «դաշնակցության և բարեկամության» սկզբունքով:

Տիբերիոսի մահից հետո Հռոմը կրկին վերադարձավ դեռևս Օգոստոսի օրոք որդեգրված քաղաքականությանը՝ խուսափել ռազմական բախումներից Արևելքում, հնարավորինս պահպանելով status quo-ն: Այս քաղաքական դոկտրինայում մեծ տեղ էր հատկացվում Հռոմի և Պարթևստանի միջև ընկած դաշնակից բուֆերային պետություններին: Այդ պատճառով Կալիգուլան 38թ., վերականգնեց նախկինում լուծարված մի շարք սահմանամերձ հելլենիստական թագավորություններ, այդ թվում Փոքր Հայքը և Կոմմագենեն: Նույն ժամանակ Հուդայի և Թրակիայի թագավորներ հռչակվեցին հունա-հռոմեական կրթություն և դաստիարակություն ստացած Ագրիպպասը և Կոտիսը: Կոմմագենեի թագավոր հռչակվեց Անտիոքոս Գ-ի որդին՝ Անտիոքոս Դ Եպիփանեսը (38, 41–72): Կալիգուլան Անտիոքոսին վերադարձրեց ոչ միայն հայրական տիրույթները, այլև շնորհեց սահմանակից Կիլիկիայի մի ստվար մասը: Նա կայսերական գանձարանից վերադարձրեց Անտիոքոս Եպիփանեսին նախորդ՝ շուրջ քսան տարվա Կոմմագենեից գանձված հարկաբաժինը: Ավելին՝ իր դրամների վրա Անտիոքոսը հորջորջում է իրեն ΒΑΣΙΛΕΥΣ ΜΕΓΑΣ ΑΝΤΙΟΧΟΣ: Կոմմագենեի տիրակալը և Հերովդես Ագրիպպասը պահպանելով ջերմ բարեկամական հարաբերություններ Կալիգուլայի հետ, խորհուրդներ էին տալիս նրան ինչպես ներքին, այնպես էլ արտաքին քաղաքականության վերաբերյալ: Կալիգուլայի և «բարեկամ» թագավորների մտերմություն երկար չտևեց: 41 թ. Կալիգուլան գահընկեց արեց Անտիոքոս Դ-ին, որն իր գահը հետ ստացավ միայն Կալիգուլայի սպանվելուց հետո:

Հելլենիստական Արևելքում, հատկապես զրադաշտական միջավայրում ընդունված կարգի համաձայն՝ Անտիոքոս Դ-ն ամուսնացած էր իր քրոջ Իոթապեի հետ: Իոթապեն ունեցել է նույնանուն դուստր, որը վաղ տարիքում կնության էր տրվել Հերովդեսի տոհմից պատանի Ալեքսանդրին: Իր գահակալության տարիներին Անտիոքոս Դ-ն կառուցել է Գերմանիկոպոլիս, Իոթապե և Ներոնեա քաղաքները: Աղբյուրներից հայտնի է, որ 53 թ. Անտիոքոսի դեմ ընդվզել էին Կիլիկիայում բնակվող ինչ-որ բարբարոս ցեղեր: 55թ. նա Ներոնից հրաման ստացավ օժանդակ զորք ուղարկել պարթևների դեմ հռոմեացիների պատերազմին մասնակցելու համար: 59 թ. Անտիոքոսը մասնակցել է Կորբուլոնի արշավանքին Տրդատ Ա թագավորի դեմ: Ցուցաբերած քաջագործությունների համար 61 թ-ին Անտիոքոսը Հայաստանից մի հատված է ստանում:

Հակառակ ավանդական հռոմեական թալանի և չարաշահումների, Կոմմագենեի տնտեսությունը դինամիկ էր զարգանում: Ներոնի կայսրության տարիներին, իբրև վասալ թագավոր, Անտիոքոսը նաև շոշափելի ռազմական օգնություն ցույց տվեց հռոմեացիներին, հատկապես ընդդեմ ապստամբած հրեաների:

Հռոմում կրթություն և դաստիարակություն ստացած Անտիոքոս Դ Կոմմագենացին վարում էր բացահայտ հռոմեամետ քաղաքականություն: Սակայն երբ եկավ պահը, դա չօգնեց Անտիոքոսին խուսափել տարածաշրջանի այլ հելլենիստական միապետների ճակատագրից. Անտիոքոս Եպիփանեսը գահընկեց արվեց, իսկ նրա երկիրը բռնակցվեց Հռոմին: Դա, ըստ էության, հնարավոր դարձավ 64-66 թթ. հռոմեա-պարթևա-հայկական հաշտության կնքումից և Հուդայում 66-71թթ. ապստամբության ճնշումից հետո: Հենց այդ ժամանակ Հռոմն իրեն զգաց այնքան վստահ և անխոցելի, որ վճռեց մեկընդմիշտ վերացնել իրեն օղակող լիմիտրոֆ պետությունների շղթան: 72թ. Սիրիայի պրոկոնսուլ Կեզիննիոս Պետոսը Կոմմագենեի արքայի դեմ լարելով հռոմեական բանսարկությունների մեքենան և վերացնում Կոմմագենեի թագավորությունը:

**6. Երվանդականների տոհմիկ հարստությունը Կոմմագենեի անկումից հետո:** Փլավիոսների արքունիքում հպարտ Անտիոքոս Եպիփանեսը միշտ պատիվ ու հարգանք էր վայելում: Անտիոքոս Դ-ի մահվանից հետո, արքայազն Եպիփանեսի խնդրանքով, գահազուրկ թագավորական ընտանիքը Հռոմից տեղափոխվեց Աթենք: Անտիոքոս արքայազնն այնպես էլ չհաշտվեց թագավորության կորստի հետ և բնավ ջերմ զգացմունքներ չէր տածում Հռոմի նկատմամբ: Անտիոքոս Եպիփանեսը մահացել է Աթենքում 92թ., չբացահայտված հանգամանքներում:

Հռոմում ծնված Անտիոքոս Եպիփանեսի և Կլավդիա Կապիտոլինայի զավակների անուններն էին Անտիոքոս Փիլոպապպոս և Բալբիլլա: Նրանց մոր Ալեքսանդրիա տեղափոխվելուց հետո, սակայն որոշ ժամանակ անց Փիլոպապպոսը վերադարձավ իրեն հարազատ դարձած Աթենք, որտեղ զբաղվում էր բարձր պաշտոններ: Նա նաև պատկանում էր հռոմեական էլիտային և բարեկամություն էր անում Հռոմի Տրայանոս կայսեր հորեղբոր որդի և թագաժառանգ Հադրիանոսի հետ: Տրայանոս կայսեր ընկերության և ազդեցության շնորհիվ Փիլոպապպոսը Հռոմում նշանակվել էր պրետորական գվարդիայի անդամ, որից հետո Տրայանոսն ու Հադրիանոսը նրան անցկացրեցին Սենատ: Լինելով հռոմեական մագիստրատ, Անտիոքոս Փիլոպապպոսը՝ իր արձանի պատվանդանի վրա ընդամենը փորագրել է տվել իր անունը, նշելով նաև Աթենքի այն թեմը, որին նա կցված էր, բայց ընդհանուր վիմագրության մեջ նա իրեն, այնուամենայնիվ, անվանում է *արքա*: Մյուս Երվանդականների պես նա երբեք չէր մոռանում իր թագավորական ծագման մասին: Նրա մահվանից հետո երախտապարտ աթենացիները և իր քույր Բալբիլլան Մուսաների լեռան վրա 114–119 թթ. նրա պատվին խոյացրել են հոյակերտ մի դամբարան: Հուլիա Բալբիլլան (72-130) եղել է Հադրիանոս կայսեր և նրա կնոջ՝ Սաբինա Վիբիայի դրանիկը և պալատական բանաստեղծուհին: Բալբիլլայի պահպանված ստեղծագործություններում իր նախնիներին ներկայացրել է իբրև բացառիկ «բարեպաշտության» տեր մարդիկ:

Կոմմագենյան Երվանդականների Հռոմում հաստատվելը խորը հետք թողեց կայսրության հոգևոր-մշակութային կյանքի վրա: Այդ շրջանից սկսած Հռոմում

միհրականությունը թևակոխեց զարգացման նոր փուլ: Շուտով կոմմագենացիների ակտիվ մասնակցությամբ այն գրավելու էր ողջ կայսրությունը: Անտիոքոս Դ Եպիփանեսի գահազրկումով ընդհատվեց ոչ միայն Կոմմագենեի Երվանդականների տոհմական հարստությունը, այլև՝ ըստ էության, դարձավ այդ հարստության վերջին ներկայացուցիչը ողջ տարածաշրջանում: Սամոսատը վերանվանվեց և որոշ ժամանակ կոչվում էր Փլավիա: Երկրի տնտեսական կյանքը որոշ ժամանակով անկում ապրեց: Սակայն հայտնի է, որ Երվանդական տան ներկայացուցիչները դեռ բավականին երկար ապրում էին Սամոսատում և հռոմեացիների կողմից ընկալվում էին իբրև տեղական շատ ազդեցիկ ազնվատոհմ ընտանիք: Կոմմագենեի Երվանդականները համալրել էին հռոմեական զինվորական և քաղաքական էլիտայի շարքերը: Նրանցից շատերն ունեին հռոմեական քաղաքացիություն և խնամիական կապեր էին հաստատում հռոմեական արիստոկրատական ընտանիքների հետ: Երվանդականներից շատերը գրավել են պետական բարձր և զինվորական պաշտոններ Ասիայում, Հյուսիսային Աֆրիկայում ու Եվրոպայում: Կոմմագենեի Երվանդականները մեծ ազդեցություն ունեցան Հռոմի հոգևոր կյանքի վրա: Սկսած այդ ժամանակվանից միհրականությունը Հռոմում ընդունում է նոր ձևեր և լայն տարածում ստանում: Հայտնվելով Սիրիա պրովինցիայի կազմի մեջ, Կոմմագենեն դարձավ Հռոմեական աշխարհի սահմանը: Սամոսատում և նրա շուրջ հիմնվեցին տերմինուսները՝ անցակետեր կամուրջների և մի քանի հռոմեական ճանապարհների խաչմերուկների վրա: Դրանց մոտակայքում հաստատվեցին հռոմեական զորամասերը: Հատուկ դերակատարություն ուներ Սամոսատի զորակայանը, այստեղ Հադրիանոս կայսեր հրամանով տեղափոխվեց հանրահայտ Legio VI Ferrata, իսկ ավելի ուշ Legio XVI Flavia Firma-ն: Հիմնականում այդ լեգեոնները համալրվում էին տեղացի զինվորներով և սպաներով: Կոմմագենեի բանակը դարձավ հռոմեական ռազմական մեքենայի էլիտար զորամիավորումը: Սակայն հռոմեացիներն, իրենց ապահովության համար, հաճախ հայրենի երկրից դուրս էին հանում այդ «cohortes Comagenorum»՝ ուղարկելով կայսրության հեռավոր սահմանները: Որպես օրենք՝ կոմմագենացիներին գործուղում էին ամենաթեժ վայրեր: Մեծ հռչակ էին վայելում կոմմագենյան նետաձիգներն ու ծանրազեն այրուձին: Կոմմագենեի կատաֆրակտոսները ոտից գլուխ պաշտպանված էին երկաթե լանջապանակով կամ եզան կաշվին խիտ կոճգամված երկաթե սալերով ու զինված էին երկար երկսայր նիզակներով և երկար շեղ թրերով: Հռոմեական հեծելազորն այսպիսի սպառազինություն չուներ: Շուրջ կես հազարամյակով Սամոսատում հաստատված հռոմեական զորամասերը առանձնահատուկ դեր խաղացին տեղի ժողովուրդների և ողջ հռոմեական կայսրության հոգևոր-մշակութային կյանքում:

## ԳԼՈՒԽ Բ. ԱՐԵՎԵԼԱՀԵԼԼԵՆԻՍՏԱԿԱՆ ԵՎ ՀՌՈՄԵԱԿԱՆ ՔԱՂԱՔԿՐԹԱԿԱՆ «ՆՈՄՈՍՆԵՐԻ» ԿՑԱՏԵՂՈՒՄ: ՄԵՐՁԵՓՐԱՏՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՇՓՄԱՆ ԳՈՏՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

**1. Շփման գոտի: Միջուկը և պարագիծը** (περιφέρεια): Հասարակական-քաղաքական և այլ հումանիտար գիտություններում «շփման գոտի» եզրը լայն տարածում է ստացել համեմատաբար վերջերս: Անշուշտ, «շփման գոտու» հայեցակարգը նոր հնարավորություններ է բացում հին ու միջին դարերի և մեր օրերի բազմաթիվ

իրողությունների վերաիմաստավորման համար: Մեր համոզմամբ *շփման* կամ *սահմանային գոտի* հասկացությունը կարող է սահմանվել հետևյալ կերպ՝ «շփման գոտիները» տեղակայվում են երկու, իսկ առանձին դեպքերում, երեք կամ չորս «դոմենների» ՝ այլ կերպ ասած՝ «տիրույթների» արանքում, որից յուրաքանչյուրն ունի իր «միջուկն» ու «պարագիծը»:

Այդ երկու տերմինները մշակել և շրջանառության մեջ է դրել «ժամանակակից աշխարհ-համակարգի» (World-System)[12] հայեցակարգի հիմնադիր Իմմանուիլ Ուոլերսթայնը: Չհամաձայնելով Ուոլերսթայնի տեսության որոշ բազային դրույթների հետ, մենք այնուամենայնիվ հարմարավետության համար ևս որոշել ենք օգտագործել արդի հասարակական գիտություններում ամրապնդված և լայն տարածում ստացած այդ եզրը: Ըստ Ուոլերսթայնի՝ «միջուկը» «աշխարհ-համակարգի» զարգացման ուղղությունը որոշող և նրա առանցքային արժեքները սահմանող, առավել զարգացած՝ «կենտրոնական» երկրների և տարածաշրջանների բույլ է: Եզրամասը (որը ոչ միշտ է համապատասխանում «ծայրագավառ», «ծայրերկիր» հասկացություններին)՝ բաղկացած է համակարգում մարգինալային դիրք զբաղեցնող և ոչ էական դերակատարություն ունեցող երկրներից ու շրջաններից: Ավելին՝ Ուոլերսթայնի համոզմամբ եզրամասը ապակառուցիկ է և հաճախ բացասական ազդեցություն է ունենում «աշխարհ-համակարգի» զարգացման վրա: Դրա հետ մեկտեղ, նրա «աշխարհ-համակարգում» որոշակի դերակատարություն ունի «միջուկի» և «եզրամասի» միջև ընկած, այսպես կոչված, «կիսաեզրամասը»: Վերջինս, որոշակի ներազդեցություն թողնելով «աշխարհ-համակարգի» կյանքի վրա, այնուամենայնիվ չունի ինքնուրույն նշանակություն և «միջուկի» նկատմամբ զբաղեցնում է ստորադաս դիրք: Սակայն, մեր համոզմամբ՝ Ուոլերսթայնի համաշխարհային պատմությանը վերաբերող տեսական սխեմաներն ու կառույցները միակողմ են և պարզեցված: Նրա բազմակնճիռ տեսության մեջ «միջուկի» կամ «կորիզի» դերը գերագնահատված է, մինչդեռ պարագծի նշանակությունը՝ ակնհայտորեն իջեցված է: Հպանցիկ հայացք գցելով համաշխարհային պատմությանը՝ կարելի է նկատել այլ օրինաչափություններ. հաճախ, հասնելով աճի բարձրագույն մակարդակի, միջուկը սկսում է կորցնել իր ստեղծագործական ներուժը, դառնալով այս կամ այն քաղաքակրթության և «աշխարհ-համակարգի» համակարգային ճգնաժամի պատճառը: Որոշ դեպքերում նման ճգնաժամը կարող է հանգեցնել անգամ ամենազորեղ քաղաքակրթությունների կործանմանը:

Սակայն, դա պարտադիր սցենար չէ. որպես կանոն «աշխարհ-համակարգը» գործի է դնում թաքնված չօգտագործվող պաշտպանական մեխանիզմներ, որոնք կարող են անհրաժեշտ խթան դառնալ «միջուկի» ինքնանորոգման համար և դրա ներքին ազդակները բխում են հենց քաղաքակրթության եզրամասից: Քանի դեռ միջուկը շարունակում է մնալ ավանդական արժեհամակարգի պատանդը, սահմանաեզրը իրեն դրսևորում է որպես ավելի ճկուն, հարափոխ և շարժունակ միջավայր: Այս մարգինալային աշխարհում աննկատ սկսում են սաղմնավորվել և

[12] Տե՛ս. **Wallerstein I.** The Modern World-System. 3 vols. New York: Academic Press, 1974 – 1989; **idem.** World-System analysis. In A. Giddens & J.H. Turner, eds., Social Theory. Today. Cambridge: Polity Press, 1987. P. 309–324.

բյուրեղանալ գալիք դարաշրջանի կարևորագույն գաղափարներն ու աշխարհայացքային հիմնադրույթները, որոնք ունակ են արմատապես վերափոխել «աշխարհ-համակարգի», այդ թվում նաև «միջուկի» բուն ձևակառուցվածքը: Սկսած այս պահից, «պարագիծը» սկսում է ուղղություն հաղորդել ողջ «աշխարհ-համակարգին», որոշում նրա հորինվածքային առանձնահատկությունները և կենսառիթմը: Առաջին հերթին դա վերաբերում է նախաարդյունաբերական դարաշրջաններին:

Նման մոտեցումը բավականին հիմքեր է տալիս վերաիմաստավորելու «եզրամասի» դերակատարությունը քաղաքակրթությունների հարապտույտի և գլոբալ «աշխարհ-համակարգի» տեսության համատեքստում: Հարցի մանրազնին ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ «պարագիծը», և հատկապես սահմանային գոտին, ակամայից կատարում են յուրօրինակ լաբորատորիայի դեր, որտեղ ծնունդ են առնում և փորձարկվում նոր քաղաքակրթական հարացույցները: Այն դեպքերում, երբ «միջուկը» բավականաչափ ճկուն և դյուրազգաց է պարագծից ստացվող նոր գաղափարների նկատմամբ, հնարավոր է քաղաքակրթության ամբողջ կամ մասնակի նորացում: Ծնունդ է առնում է նոր «նոմոս», որը սկզբնական շրջանում, միմիկրիայի սկզբունքով, ձգտում է թաքնվել հին ձևերի և անվանումների տակ: Սակայն հաճախ միջուկը, նամանավանդ նրա պահպանողական ընտրախավը, դիմադրում է հասարակության արդիականացմանը, խոչընդոտում նոր ինստիտուտների և արժեքների պատվաստմանը հների փոխարեն: Նման դեպքում, անխուսափելիորեն տեղի է ունենում «եզրամասի» և «միջուկի» հերթափոխություն: Առաջին հայացքից միջուկի ինքնաբերական և անսպասելի թվացող նման տեղաշարժերը, իրականում անկանխատեսելի չեն: Բանն այն է, որ միջուկը կոշտ է և ավանդապաշտ, այն շատ դանդաղ է արձագանքում նոր ժամանակի քաղաքակրթական մարտահրավերներին: Դրան հակառակ, պարագծի մակրոսոցիալ համակարգերը, իրենց երկակի բնույթի շնորհիվ, շատ ավելի զգայուն են նոր քաղաքակրթական հոլովույթների նկատմամբ:

Արևմտյան Հայաստանում, Կոմմագենեում և Պոնտոսում ծնունդ առավ և անծայրածիր Հռոմեական կայսրությունով մեկ տարածվեց միթրայականությունը: Դա պատահական զուգադիպություն չէր. պավլիկյան աղանդը մի կողմից ձևավորվել է այն երկրամասերում, որտեղ վերապրուկային ձևով պահպանվել են զանազան վերհուշեր հին տեղական և իրանական պաշտամունքների մասին, մյուս կողմից էլ դա պայմանավորված էր այդ երկրների և մարզերի սահմանամերձ բուֆերային դիրքով: Տեղի բնակչությունը չպատկանելով որևէ կրոնական աշխարհին, միաժամանակ դրանց բոլորի բաղկացուցիչ և անանջատ մասն էր:

Ուոլերսթայնի «միջուկի» և «պարագծի» մասին տեսության բացերը լրացնելու համար մենք անհրաժեշտ գտանք դիմել Ա.Թոյնբիի,[13] Ֆ.Բեգբիի[14] և Կ.Քուիգլիի[15]

---

[13] Այսպես, Ա. Թոյնբիին են պատկանում քաղաքակրթագիտության մեջ շատ կարևոր «առաջնապահակակետ» և «թիկունք» հասկացությունների հեղինակությունները (**Тойнби А.** Постижение истории. М., 1991 (эпитома 12-томного соч. Тойнби (**Toynbee A. A.** Study of History. L., 1934 – 1961), сделанная в 1972 г.). С. 120 - 142), ինչպես նաև «փոխհատուցման օրենքը» (там же. С.147-150):

մշակած հղացքներին: Նրանց կարծիքով, նոր քաղաքակրթությունը, որպես կանոն, ծնունդ է առնում ոչ թե հին քաղաքակրթության ծոցում, այլ նրա մակերեսամերձ շրջաններում՝ երկու կամ ավելի մշակույթների փոխազդեցության պայմաններում: Նման փոխազդեցության անհրաժեշտ պայման է նրա հարակայուն բնույթը: Եթե փոխազդեցությունը կրում է պատահական բնույթ, կամ սահմանափակվում է կարճ և դիպվածային շփումներով, ապա հնարավոր է, որ այդ տարածքում այդպես էլ չկազմավորվի նոր մշակույթ, առավել ևս՝ նոր քաղաքակրթություն:

**2. Լիմեսը որպես շփման գոտի:** Քաղաքակրթությունը բազմաչափ հասկացություն է և կարող է արտահայտվել երկու մակարդակում՝ տեմպորալ և հոգևոր (NOMOΣ, PAX): Նշված հարթությունները միշտ չէ որ նույնական են և վրադրման ժամանակ հաճախ չեն համընկնում: Երկու կամ մի քանի քաղաքակրթությունների միջև, ու նաև քաղաքակիրթ և այսպես կոչված բարբարոսական աշխարհների միջև գոյություն ունի հստակ սահման, բնագիծ: Առանձին դեպքերում այդ սահմանագիծը կոչված է կատարել երկու թշնամական քաղաքակրթությունների կամ ավելի փոքր հանրույթների սահմանազատման գործառույթ, մյուս դեպքերում, այն խաղում է շփման գոտու դեր: Երկխոսողներ կարող են լինել երկու և ավելի քաղաքակրթություններ կամ էլ քաղաքակիրթ աշխարհը և «բարբարոսական տարերքը»:

Հռոմի պաշտպանական համակարգում հատուկ տեղ էր զբաղեցնում Մերձեփրատյան լիմեսը, որը գտնվում էր կայսրության հեռավոր արևելյան սահմանի վրա: Այն զգալիորեն տարբերվում էր Արևմտյան Եվրոպայի և Հյուսիսային Աֆրիկայի լիմեսներից, քանի որ ջրբաժան էր ոչ թե քաղաքակրթական և բարբարոսական աշխարհների, այլ երկու թշնամական, բայց որոշ չափով հարանման քաղաքակրթությունների միջև: Հենց այդ հանգամանքներով էր պայմանավորված կայսրության և անդրեփրատյան երկրների սահմանների մեծ թափանցելիությունը: Հարյուրամյակներ շարունակ այդ սահմանային գոտու շառավղով լարվածությունն անընդհատ մեծանում էր: Դա վկայում է արևելյան սահմանի հատվածում հռոմեական զինված ուժերի աճի դինամիկան:

Լիմիտրոֆային պետությունների մեծ մասը կառավարվում էր տեղական դինաստների կողմից, որոնց հետ հռոմեացիները կառուցում էին փոխհարաբերությունները, այսպես կոչված, «բարեկամության» (amicitia) և «դաշնակցության» (societas) հիման վրա: Լիմիտրոֆային պետությունների հետ փոխհարաբերություններին որոշակի ուղղություն տալու համար, ամիկալ հարաբերությունների կողքին, էական դեր էր խաղում նաև «հյուրասիրության» (hospitium) ինստիտուտը: Որպես պետաիրավվական ինստիտուտ «հյուրասիրությունը» ձևավորվել է բավականին ուշ: Հյուրասիրությունը, մի կողմից՝ պատկանելով ժողովրդի իրավունքին (jus gentium), մյուս կողմից՝ պայմանավորված էր հռոմեական համայնքի իրավունքով (jus civile), քանզի «հյուրասիրությունը» ինքնին բխում է հռոմեական համայնքից և գործում է ի շահ նրա: Դեռևս Պուխտայի ժամանակվանից, հետազո-

[14] **Bagby Ph.** Culture and History: Prolegomenna to the Comparative Study of Civilization. Westport Conn.: Greenwood Press, 1976. P. 176–177.
[15] **Quigley C.** The Evolution of Civilizations: An Introduction to Historical Analysis. Indianapolis. New York: Macmillan, 1961 (2nd ed. 1979).

տողներից շատերը «հյուրասիրության» ինստիտուտը դիտարկում են որպես օտարերկրյա իրավունքի արդյունավետ ազդեցություն հռոմեական իրավունքի վրա: «Հյուրասիրությունը կարևորագույն իրավական ինստիտուտներից էր, որի վրա հենվում էր հռոմեական պետության ողջ կառույցը»[16]:

Հռոմեական հանրապետության ծաղկման շրջանում հյուրասիրությունը դառնում է Հռոմի արտաքին քաղաքականության կարևոր գործիք: Դա առավել վառ արտացոլվել է Հռոմի և Առաջավոր Ասիայի հելլենիստական պետություն-ների փոխհարաբերություններում: Հետազոտողների համոզմամբ, «բարեկամ» և «դաշնակից» պետությունների տարածքում հռոմեական լեգեոնների կայանումը իրականացվում էր per hospitia սկզբունքով: Այդ երկրների տարածքում տեղա-կայված հռոմեական կայազորներն ունենում էին աստվածների պաշտպանու-թյունը վայելող «հյուրի» կարգավիճակ: Հյուրընկալության ինստիտուտը գտնվում էր հռոմեական համայնքի գլխավոր աստված Յուպիտեր-Հյուրընկալի պաշտպա-նության ներքո: Հետագայում հյուրընկալության ինստիտուտը պաշտպանող գլխավոր աստվածը դարձավ լիմես-սահմանի պահապան, ուխտադրժությունը պատժող ահազնաաստ Միթրան:

Ք.ա. II-I դդ. Առաջավոր Ասիայում, հաճախ իրենց կամքին հակառակ, Հռոմի հետ «դաշնակցական» և «բարեկամական» հարաբերություններով կապված սահ-մանամերձ կազմավորումներ էին Պերգամոնը, Բյութանիան, Գաղաթիան, Պափլագոնիան, Պիսսիդիան և Քարուտ Կիլիկիան: Դեպի Արևելք հռոմեացիների հետագա առաջխաղացման հետևանքով, այդ պետություններից շատերը հայտնվեցին ճակատային գոտուց բավականին հեռու: Դադարելով կատարել իրենց համար նախատեսված սանիտարական շարասյունի դեր՝ այդ երկրները և իրենց դրածո կոմպրադորային դինաստները հռոմեացիների համար կորցրեցին հետաքրքրությունը: Որպես հետևանք սրանք բոլորն էլ զրկվեցին իրենց ձևական սուվերեն կարգավիճակից և դարձան հռոմեական այս կամ այն պրովինցիայի մաս, իսկ սանիտարական շարասյունի դերը անցավ այնպիսի երկրներին, ինչպիսիք են Պալմիրան, Կոմմագենեն, Կապադովկիան, Փոքր Հայքը և Պոնտոսը: Հաճախ բուֆերային գոտու դեր էր տանում նաև Մեծ Հայքը: Այս երկրները ևս խեղդամահ եղան Հռոմի «բարեկամական գրկախառնության» մեջ: Թվարկված երկրներից Արևմտյան Հայաստանը վերջինը կորցրեց իր սուվերենությունը և երկու տարի անց՝ 387 թ. Մեծ Հայքի բաժանումից հետո, մտավ Հռոմեական կայսրության կազմի մեջ:

**3. Ճակատային գոտում**: Լիմեսը մի կողմից անթափանց պաշտպանական շարասյուն էր, մյուս կողմից՝ բավական ընդարձակ ինտերակտիվ միջավայր: Այդ միջաշխարհային աշխարհում իրար էին հանդիպում տարբեր քաղաքակրթու-թյուններ, անցկացվում տոնավաճառներ, կատարվում ապրանքների և գաղա-փարների փոխանակում: Հռոմի ողջ պատմության ընթացքում սահմանամերձ գոտում քաղաքակրթական հիմնական գործակալները լեգեոներներն էին, իսկ տեղական և կայսերական քաղաքակրթական արժեքների մերձեցման գլխավոր

[16] **Колосовская Ю. К.** Гостеприимство как право народов древнего Рима // Закон и обычай гостеприимства в античном мире. Доклады конференции. М.: Изд-во ИВИ РАН, 1999. С.58

օջախները՝ հռոմեական ռազմական ճամբարներն ու բնակավայրերը: Հայտնի է, որ հռոմեական ռազմական ճամբարը ինչպես և ինքը՝ հռոմեական բանակը, հռոմեական համակեցության յուրօրինակ մանրակերտն էին: Կայսերական շրջանում Հռոմեական աշխարհակալ տերության ողջ պարագծով գոյացան բազմաթիվ մեծ և փոքր ավաններ, որոնց կորիզը կազմում էին զորացրված նստաբնակ վետերանները: Սրանք տեղերում, Orbis Romanum-ի համար, ոչ պակաս հուսալի հենարան էին, քան գործող բանակը: Հիմնականում խառնամուսնություններից ծնված լեգեոներների զավակները հավասարաչափ տիրապետում էին և լատիներենին, և տեղի լեզուներից առնվազն մեկին:

Բանակից բացի, Pax Romana-ի առանցքային տարրերից էր սահմանամերձ զինվորական ավանների խայտաբղետ բնակչությունը: Այդ մարգինալային և կիսամարգինալային տարրերը (Զոմբարտը նրանց անվանում էր «բացառվածներ»)՝ օժտված ադապտացման յուրահատուկ ունակություններով, կազմում էին սահմանային առևտրական դասի միջուկը: Անշուշտ, ձեռներեցու-թյունը խորթ չէր նաև բուն հռոմեացիներին, բայց սրանց ձեռներեցությունը ուներ մակաբույծ բնույթ և ուղղված էր բռնազավթված և «բարեկամական» երկրների հարստահարության ու ռեսուրսների շորթմանը: Բարբարոսների և այլազգի-ների հետ առևտուրը հռոմեացիների աշխարհընկալման տեսանկյունից ավան-դաբար համարվում էր ոչ պատվաբեր: Այդ պատճառով նմանօրինակ գործարա-րություն իրականացնելու իրավունքը հռոմեացիները, առանց ափսոսանքի, վարձակալության էին հանձնում այլազգիներին: Վերջիններս հռոմեական քաղա-քացիություն ունեցող օտարերկրացիներ կամ պերեգրիններ էին, ազատված ստրուկներ և այլք, որոնք վարձակալել կամ գնել էին բանակում առևտուր վարելու և ուրիշ գործունեություն ծավալելու իրավունք: Ճիշտ է, այդ ստորակարգ ձեռներեցներն իրենց գործունեությունն իրականացնում էին պատրոնների՝ ազնվատոհմ և ազդեցիկ հռոմեացիների հովանավորության ներքո: Անարգել առևտուր իրականացնելու համար վաճառականները հաճախ կնքում էին հյուրընկալության նախնական համաձայնագրեր, որոնք ամրապնդելու համար պայմանավորվող կողմերը փոխանակվում էին հմայիլներով և տեսսերաներով: Դրանից հետո «օտարականը» դառնում էր «քսեն» («դոստ», «ղոնաղ», «կունակ»՝ անձ՝ ընկեր, որն ինչ-որ մեկի հետ կապված է հյուրընկալության պարտավորու-թյուններով և պատասխանատու է նրա համար): Տեսսերաներն իրենց տերերին ապահովում էին ոչ միայն անձեռնմխելիություն, այլև սահմանից այն կողմ՝ օտար աշխարհում հյուրընկալվելու իրավունք:

Դեռևս հին ժամանակներից առևտուրը միշտ զուգընթաց էր պատերազմին, և հաճախ հենց պատերազմներն էին խթանում առևտրի զարգացումը ժողովուրդների միջև: Հները շատ լավ էին հասկանում առևտրի և պատերազմի այս կապը: Չկարողանալով կռվով նվաճել և հռոմեական պրովինցիայի վերածել որևէ երկիր, հռոմեացիները գործի էին դնում դիվանագիտությունը. նրանք, առաջին հերթին, հակառակորդին ստիպում էին կնքել իրենց համար նպաստավոր առևտրային պայմանագրեր, որոնք զանազան արտոնություններ էին նախատեսում իրենց գործարարների համար: Առևտուրը հռոմեացիները դիտարկում էին որպես կիսանկախ երկիրն իրենց ենթակայության տակ առնելու

ատիճանական, բայց երկարաժամկետ և արդյունավետ միջոց: Պետության լիակատար բռնազավթմանը նախորդում էր վերջինիս շուկաների նվաճումը, իսկ հակահռոմեական տրամադրությունների գրեթե բոլոր պոռթկումները վեր էին ածվում հռոմեական գործարարների և վաճառականների արյունալի ջարդերի:

**4. Հյուրընկալ Յուպիտերը և Միթրան որպես Արևելյան լիմեսի հյուրընկալության ինստիտուտի պաշտպան:** Գործարարների և առևտրականների անվտանգության ապահովման կարևոր երաշխիքներից էր հյուրընկալության ինստիտուտը, վերջինս, սովորաբար պատերազմի հետևանք էր: Հյուրընկալության ուխտ կնքելու համար անհրաժեշտ էր պարտադիր աստվածների և պենատների վկայված երդման արտասանումը: Հյուրընկալությունը գործում էր խաղաղ ժամանակ, բայց նույնիսկ պատերազմի ժամանակ «օտարական» միջնորդ-առևտրականները (ասորա-պաղեստինցիները, հույները, հայերը և այլք) նույն ավյունով շարունակում էին իրենց գործունեությունը:

Հնագիտության տվյալներով հավաստված՝ անտիկ հեղինակների բազմաթիվ հաղորդումները վկայում են, որ հանրապետական շրջանում և պրինցիպատի օրոք հյուրընկալության ինստիտուտը գտնվում էր հռոմեական համայնքի գլխավոր աստված Յուպիտերի հովանավորության ներքո: Երդմնազանցությունը պատժվում էր հռոմեական համայնքի կողմից: Հռոմեացիների կրոնական պատկերացումների համաձայն, ուխտի սրբությունն ու անդրժելիությունը կապված է Ֆիդես (Fides) հասկացության աստվածային բնույթի հետ: Արդեն պրինցիպատի դարաշրջանում, հռոմեական ավանդական կրոնաբարոյական ընկալումների քայքայմանը զուգընթաց՝ Ֆիդեսի և արխայիկ այլ աստվածների պաշտամունքը սկսում է դուրս մղվել նմանօրինակ գործառույթներն ունեցող արևելահելլենիստական աստվածների պաշտամունքով: Առաջին հերթին դա վերաբերում է երդմնապահ աստված Միհրի և Դոլիխեյան Բաալի պաշտամունք-ներին: Համաձուլման ընթացքում ձևավորվեցին երկու նոր ու միաժամանակ շատ հին աստվածների կերպարներ՝ Յուպիտեր-Դոլիխենոսի (լատ.՝ Dolichenus) և նրա օգնական Միթրա-Հերմեսի կերպարները, որոնք հետևում և պատժում են հյուր-ընկալության օրենքները խախտած մարդկանց: Ողջ Հռոմեական կայսրության տարածքում երկու աստվածների պաշտամունքների տարածման գործում մեծ դեր խաղացին Կոմմագենեում և հարևան մերձեփրատյան երկրամասերում զո-րագրված կամ այստեղ երկար տարիներ ծառայած սահմանապահ զինվորները:

Այս համադրական հելլենիստական-հռոմեական աստվածը դարձավ մի տեսակ քաղաքակրթական թարգման, որը նպաստել է գաղափարների և մշակութային արժեքների փոխներթափանցմանը Արևելքից Արևմուտք, և՝ հակա-ռակը: Բնավ պատահական չէ, որ այդ դիցը հավասարապես երկրպագվել է արևելյան Մերձեփրատյան լիմեսի երկու կողմերում՝ Եփատից հեռու դեպի արև-ելք և արևմուտք: Դա, անկասկած, միթրայականության իբրև կրոնահոգևոր հա-մակարգի արդիականության և հարաշխատության լավագույն վկայությունն է: Միթրայականությունն երկար ժամանակով դարձավ այն սրբազան միջուկը, որը համաբերեց հռոմեացիների և Հռոմեական կայսրության ժողովուրդների մշակույթը, հասարակական պրակտիկան, աշխարհաքաղաքականությունը, տրանսցենդենտ բարձր իրականության հետ:

## ԳԼՈՒԽ Գ. ՄԻՀՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՐՊԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԵԼԼԵՆԻՍՏԱԿԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ (ԿՈՄՄԱԳԵՆԵ, ՄԵԾ ՀԱՅՔ, ՀՌՈՄ)

**1. Հելլենիզմի սահմանային բնույթը՝ համադրականություն այլացման միջոցով:** Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքները նոր էջ բացեցին համաշխարհային պատմության մեջ: Աշխարհը հայտնվեց արմատական փոփոխությունների շեմին, որոնց, ինչպես ցույց տվեց ժամանակը, Արևելքն ավելի պատրաստ էր, քան Արևմուտքը: Այդ փոփոխությունների արդյունքում Արևելքում անշեղորեն սկսեց ձևավորվել նոր՝ համադրական (իր առանձին դրսևորումներում՝ էկլեկտիկ) քաղաքակրթություն, որը պատմագիտության մեջ հայտնի է «հելլենիստական» անվամբ: Դրան հակառակ Հելլադան իր մեջ արմատական վերափոխման և ինքնարարման ուժ չգտնելով, անընդունակ գտնվեց դիմակայել նոր դարաշրջանի մարտահրավերներին: Հունական քաղաք-պետությունների բնակչության ստեղծագործ հատվածը սկսեց լքել հայրենիքը և տեղափոխվել Արևելք, որտեղ կերտվում էր նոր աշխարհը: Ու, թեև Հելլադայի թոշնումից հետո Արևմուտքում գոյացած քաղաքակրթական բացը մասամբ լրացրեց աշխարհակալ Հռոմը, որն իրեն հռչակել էր հելլենական մշակութային ավանդույթների իրավահաջորդ, Արևելքը շարունակում էր թողարկել արժեքներ, որոնց ներազդեցությունը աշխարհի մտահոգևոր դաշտի վրա դժվար է թերագնահատել: Թեև Հռոմեական կայսրության լայնարձակումը խիստ բացասական հետևանքներ ունեցավ Արևելքի տնտեսական և մշակութային կյանքի համար՝ ժամանակավորապես խաթարելով հելլենիստական քաղաքակրթության սահուն ընթացքը, այնուամենայնիվ, արևելյան քաղաքակրթություններն ավելի կենսունակ գտնվեցին և հետագայում շարունակեցին իրենց բնականոն զարգացումը:

Արդեն Ք.ա. I դարում նվաճված հելլենիզմն ինքը սկսեց նվաճել նվաճող հռոմեացիներին՝ մշակույթի և ավելի արդյունավետ տնտեսական համակարգի շնորհիվ: Արևմուտքի աստիճանական յուրացումը հելլենիզմի կողմից կասեցվեց բարբարոս ցեղերի զավթողականության պատճառով: Նվաճելով Արևմտյան Հռոմեական կայսրության գրեթե ողջ տարածքը, գերմանները մերժեցին հելլենիստական քաղաքակրթության համարյա բոլոր ձեռքբերումները (բացառությամբ քրիստոնեությունից): Դրանով Արևմուտքը վերջնականապես հակադրվեց Արևելքին: Ինչ վերաբերում է Արևելքին, ապա այստեղ «քաղաքակրթական ճեղքում» տեղի չունեցավ, և հելլենիզմը ոչ միայն պահպանեց իր երբեմնի դերակատարությունը, այլև շարունակեց էվոլյուցիոն ընթացքը՝ ծնելով նոր քաղաքակրթական երևույթներ: Այսպես, հելլենիստական մայր քաղաքակրթության հիմքից անջատվեցին մի քանի դուստր քաղաքակրթություններ և ենթաքաղաքակրթություններ՝ բյուզանդական, միջնադարյան հայկական, ռուսական և այլ:

**2. Միհրականության արմատները: Մոգազրադաշտական և քաղդեական տարրերը:** Միհրը հնագույն արիական աստվածություն է, որի պաշտամունքը տարածված էր Հնդկաստանում, Իրանում, Կենտրոնական Ասիայում և իհարկե՝ Հայկական լեռնաշխարհում: Իրանական միջավայրում Միհրի ամենավաղ հիշատակությանը հանդիպում ենք ավեստայական տեքստերում, որտեղ Միթրան և Վերեթրագնան հանդես են գալիս որպես մի տեսակ հրեշտակապետներ: Հետազոտողների համոզմամբ, հնագույն ժամանակներում

այդ երկու աստվածները գլխավորում էին իրանական պանթեոնը: Սակայն Զրադաշտի կրոնական բարեփոխումների արդյունքում նրանց պաշտամունքը կորցրել էր երբեմնի նշանակությունը և մղվել հետին պլան: Սակայն զրադաշտական քրմությանը չհաջողվեց արմատախիլ անել Միհրի պաշտամունքը և ժողովրդի տարբեր խավերը շարունակում էին երկրպագել այդ հին արիական աստծուն: Հայերով, մեդերով և փոքրասիական զանազան ցեղերով բնակեցված երկրամասերում պաշտոնական զրադաշտական պաշտամունքի կողքին շարունակում էին պահպանվել հին արիական հավատալիքները:

Դա ստիպեց Աքեմենյաններին իրենց տերության մայրամուտի շրջանում վերանայել մոտեցումներն ավանդական հավատալիքների հանդեպ և հրաժարվել զրադաշտականության ծայրահեղ օրթոդոքսությունից: Այսպես, Արտաքսերքս Բ Մնեմոնի (Ք. ա. 404-358), և նրա որդի Արտաքսերքս Գ Օքոսի (Ք.ա. 358-338) օրոք Ահուրա Մազդայի կողքին, գրեթե նույն կարգավիճակում, հայտնվեցին երկու այլ աստվածներ՝ Միհրը և Անահիտը: Արդյունքում ձևավորվեց աստվածների երրորդություն, որի պաշտամունքը պահպանվեց և ստացավ իր հետագա զարգացումը Աքեմենյան տերության անկումից հետո՝ Պարսկաստանից հեռու գտնվող երկրներում: Վրահաս հունա-մակեդոնական վտանգի առջև անհրաժեշտ էր միավորել հսկայածավալ Աքեմենյան տերության տարբեր ցեղերին և ժողովուրդներին միասնական գաղափարի շուրջ: Եվ առաջին քայլն այդ ուղղությամբ դարձավ Միհրին և Անահիտին ավագ աստվածների պանթեոնի մեջ ներառելը: Այդ աստվածներին զրադաշտական դիցարանի մեջ ընդգրկելը, նրանց համակայսերական կարգավիճակ շնորհելը կոչված էր բարձրացնել պաշտոնական կրոնի հեղինակությունը, վերջինիս ավելի ժողովրդական բնույթ տալու նպատակով, ինչն անշուշտ, հեռատես և արդյունավետ ծրագիր էր: Արտաքսերքս Մնեմոնի բարեփոխումների շնորհիվ ողջ Աքեմենյան տերությունում, հատկապես՝ նրա արևմտյան սատրապություններում, ձևավորվեց նոր տիպի կրոնահոգևոր համակարգ, որն իր մեջ ներառեց զրադաշտական բավականին բարդ, բանականությանն ուղղված աստվածաբանական ու բարոյախոսական հայեցակարգ՝ համեմված քաղդեական միստիցիզմով, հին արիական հավատալիքներով ու դիցաբանությամբ:

**3. Միհրը հայոց մեջ:** Հայաստանի պաշտամունքային վայրերն իրենց բնույթով խիստ տարբերվում էին զրադաշտական ատրուշաններից: Մեծ մասամբ դրանք աստվածների և բնության ուժերի անձեռակերտ բացօթյա պաշտամունքային վայրեր էին: Իրանում նման սրբատեղիները կոչվում էին *այադանա*, իսկ Հին Հունաստանում՝ *տեմենոսներ*: Արևելքում տեմենոսների մեծ մասը գտնվում էր խոշոր բնակավայրերից հեռու, լեռներում և անապատներում: Ասվածն արդարացի է նաև հայերիս համար: Դրա թերևս ամենավառ օրինակը միհրական տաճարներն էին, որոնք հայոց մեջ, Միթրա-Միհրի անվամբ, կոչվում էին «մեհրեաններ», «մեհեաններ» (փոքրասիական միջավայրում նման սրբավայրերը հայտնի էին *miθryna* անվամբ): Հիմնականում դրանք անձեռակերտ սրբավայրեր և հանգստարաններ էին, որոնք էապես տարբերվում էին անտիկ դասական շրջանի և Արևելքում հույների կառուցած հելլենիստական տաճարներից: Այստեղ հատուկ պաշտամունքի առարկա են եղել անձավները, քարախորշերն ու

վիրապները: Ըստ էության՝ դրանք սին, պրոֆանային և սրբային աշխարհների սահմանն էին, իսկական տեմենոսներ: Երբեմն այդ տեմենոսները դառնում էին ճամփորդների և մենավոր ուխտագնացների վանատեղի, որտեղից էլ, ըստ երևույթին, հետագայում ծագել է վանք բառը: Հաջորդ դարերում դրանց տեղում հիմնվել են ձեռակերտ տաճարներ և եկեղեցիներ, սակայն քրմերն ու հոգևորականները դեռևս երկար ժամանակ ձգտում էին պահպանել սրբավայրերի նախասկզբնական, կարելի է ասել՝ արքետիպային տեսքը: Հայ և օտար հետազոտողները բազմիցս նշել են Միհր-Միթրայի նշանակալից տեղը հին հայոց, հատկապես հելլենիզմի դարաշրջանի կրոնահոգևոր կյանքում[17]: Ըստ ավանդության հենց Հայաստանն է համարվել Միթրա-Միհր-Մհեր աստծո հայտնության, էպիֆանեայի վայրը: Եթե Արտաքսերքս Մնեմոնի կրոնական բարեփոխումներից արդյունքում Միհրը միայն մասամբ վերականգնեց իր երբեմնի դերը Պարսկաստանում, մինչդեռ Հայաստանում դարձավ Երվանդականների հովանավոր աստվածը, երկրի պաշտպանն ու զորավիգը, ապա հելլենիստական շրջանում այն դարձավ Երվանդականների դինաստիական աստվածը: Տիգրան Մեծի գահակալության վերջին շրջանում և հատկապես Արտավազդի օրոք Միհրը կրկին առանցքային տեղ գրավեց հայոց դիցարանում: Ինքը՝ Արտավազդը նույնացնում էր իրեն Միհրին: Ավելին, վերջին Արտաշիսյանների օրոք Միհրի պաշտամունքը ստացավ նոր իմաստ և բովանդակություն:

**4. Միհրի պաշտամունքի փոխակերպումը հետաքեմենյան շրջանում: Միհրականությունը Կոմմագենեում:** Դեռևս անցյալ դարի սկզբում միհրականության առաջին հետազոտողներն եկան այն համոզմանը, որ Կոմմագենեն այն հելլենիստական երկրներից էր, որտեղ դեռևս նախահռոմեական շրջանում Միհրի պաշտամունքը փոխակերպվեց միհրական ավարտուն կրոնափիլիսոփայական համակարգի, որը մեր օրերում հայտնի է միհրականություն անվամբ:

Միհրի առաջին գրավոր հիշատակությունը վերաբերում է Ք.ա. II հազարամյակի կեսին և կապված է Կոմմագենե տարածքում գտնվող երբեմնի Միտաննի պետության հետ: Հաջորդ հազարամյակում հնդիրանական կրոնահոգևոր համակարգերում Միթրայի դերը գնալով նվազում է, մինչդեռ արևմուտքում, հատկապես՝ Կոմմագենեում, նա պահպանում է իր երբեմնի նշանակությունը: Ավելին, նրա կերպարը շարունակում է զարգանալ ու հարստանալ, ի վերջո ձեռք բերելով տիեզերակալի հատկանիշներ: Թերևս ոչ մի երկրում Միհրի պաշտամունքն այդքան մեծ նշանակություն չի ունեցել, որքան հելլենիստական դարաշրջանի Կոմմագենեում: Դրա վառ արտահայտությունն են այդ երկրի Նեմրուդ լեռան և Նիմփայոսի Արսամեայի միհրական սրբավայրերը:

Հետազոտողները միակարծիք չեն, թե ինչով է պայմանավորված այս սրբավայր դամբարանի յուրահատուկ տեսքը, և դրա որ մասում է թաղվել Անտիոքոս Ա արքան: Մեր համոզմամբ՝ Անտիոքոսի հրամանով Նեմրուդ լեռան վրա կիտված քարաթումբը ոչ այլ ինչ էր, քան արևին ամենամոտ տեղ, որտեղ, զրադաշտական կանոնի համաձայն, ժամանակավորապես պետք է թողնվեր

[17] **Russell J.R.** Pre-Christian Armenian Religion // ANRW. Welt. II, 18.4, 1990. P. 2679-2692.

հանգուցյալ թագավորի դիակը: Նախաքրիստոնեական դարաշրջանում թերևս նույն եղանակով են թաղվել նաև Հայոց թագավորները, քրմերն ու իշխանավորները: Այսպիսով, թագավորական նախնիների ոսկորների նկատմամբ առանձնահատուկ վերաբերմունքը պայմանավորված էր վերջիններիս «Փառքի» զետեղարան լինելու հանգամանքով: Սակայն մեր համոզմամբ՝ միհրականության հետագա ծավալումը Կոմմագենեում և Մեծ Հայքի արևմտյան գավառներում պայմանավորված էր ոչ միայն մազդեական, այլև քաղդեական ազդեցությամբ: Քաղդեական հազարամյա քաղաքակրթության մեծագույն նվաճումը ժամանակակիցները համարել են գաղտնածիսական ուսմունքներն ու տիեզերագիտությունը (այդ եզրի անտիկ ընկալմամբ), ինչպես նաև աստղագուշակությունը և թվերի մոգությունը: Այդ գիտելիքները ստեղծագործաբար վերաիմաստավորել և մասամբ փոխառել են նաև միհրական մոգերը: Անտիոքոսի հանգստարանի միհրականության հետ սերտ կապը վկայված է նաև Նեմրուդ լեռան և Արսամեայի սրբավայրերի հունալեզու արձանագրություններում: Վերջիններից եզրակացնել, որ Անտիոքոս Կոմմագենացին հերմենևտ էր, որին հասու էին *հերմետիկ* առեղծվածաբանական գիտելիքները:

**5. Միհրական առասպելույթը վաղքրիստոնեական փրկչաբանության համատեքստում. Ավետիս:** Անտիոքոսի գաղտնածիսական և փրկչաբանական գաղափարները կարելի է հասկանալ և իմաստավորել միհրական դիցաբանության. հատկապես Միհրի ժայռից հրաշալի հայտնությանը (*Ἐπιφάνεια*) և երեք հովիվների երկրպագության առասպելույթի միջոցով: Միթրայական գաղտնածիսությունների մեջ Միհրի հրաշալի ծննդյան վկաներին անվանվում էին «պահնորդներ» կամ «Աներևույթ վարպետներ»: Ըստ միթրայական նվիրաբերության ծիսակարգի՝ «պահնորդները» պետք է հանդես գային իբրև խրատատու-դաստիարակներ՝ պատասխանատու նորադարձի ճակատագրի համար ընդհուպ մինչև նվիրաբերության վերջին աստիճանը:

Հովիվների երկրպագության դրվագը վաղուց գրավել է հետազոտողների ուշադրությունը: Շատերը որոշակի ընդհանրություն են տեսնում միթրայական ծննդաբանության ակնհայտ և քողարկված խորհրդաբանության և Քրիստոսի ծննդյան և մոգերի երկրպագության պատումի միջև:

## ԳԼՈՒԽ Դ. ՄԻՀՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀՌՈՄՈՒՄ

1. **Տրդատը և Ներոնը:** Սուրբ Ծննդի վկա թագավոր-մոգերի անդրեփրատյան երկրներից, մասնավորապես Հայաստանից գալու մասին վարկածն առաջինն արտահայտել է գերմանացի գիտնական Ա. Դիտերիխը: Պատմաբանի կարծիքով Արևելքից ուղեկալ աստղի հետքերով, 7000-անոց շքախմբի ուղեկցությամբ ժամանած երեք արքաների մասին աստվածաշնչյան պատումը՝ մի կողմից Միհրի հրաշալի ծնունդի մասին առասպելի հուշ-ակնարկ է, մյուս կողմից՝ հռչակավոր մոգ-թագավոր Տրդատ Ա Արշակունու Հայաստանից Հռոմ կատարած հայտնի ճամփորդության (Ք.հ. 66թ.) արձագանքը: Թեև Ա. Դիտերիխի նման վարկածը կարելի է ընդունել միայն մեծ վերապահումներով, այնուամենայնիվ այն բոլորովին անտեսել ևս չարժե, քանի որ Տրդատը սովորական թագավոր չէր, այլ՝ մոգ-արքա, որը միհրական հիերարխիայի մեջ ուներ Անպարտելի Արևի քրմապետի պատվաստիճան: Միհրական սանդղակարգի այդ երկրորդ արժանա-

պատվությունը Տրդատին իրավունք էր վերապահում ամենաբարձր աստիճան շնորհել ցանկացած նորադարձ միհրական միստիկոսի: Դա միթրայականության մասին տեսության հիմնադիր Ֆրանց Կյումոնին և Արևմուտքում հայտնի մի շարք ուսումնասիրողներին առիթ է տվել մտածելու, որ Տրդատը Հռոմում գտնվելու ժամանակ Ներոնին ձոնել է *միստիկոս* (հուն.՝ μυστικός՝ փակ), ինչը անկասկած խթանել է միհրականության տարածումը հռոմեական կայսեր պալատում, կայսերական թիկնազորում, իսկ ավելի ուշ նաև ողջ կայսրությունում:

Ժամանակակիցներն այդ իրադարձությունն ընկալել են իբրև դարակազմիկ և նշանային, ուստի Տրդատի ճամփորդությունը ժամանակի ընթացքում վերաիմաստավորվեց՝ պարուրվելով դիցաառասպելական մանրամասներով: Տրդատի և Ներոնի միջև կնքված դաշնագիրը վերահաստատեց նոր աշխարհակարգի իրավաքաղաքական սկզբունքները: Այդ աշխարհակարգը հիմնադրվել էր դեռևս Ք.ա. 66 թ., բայց իր ավարտուն տեսքը ստացավ ուղիղ հարյուր տարի անց՝ Ք.հ. 66թ.: Ժամանակագրորեն այն ընդգրկեց մի քանի դար և ավարտվեց Արևմտյան Հռոմեական կայսրության անկմամբ: Տվյալ դարաշրջանը մենք անվանել ենք նեոհելլենիստական կամ հռոմեական հելլենիզմի դարաշրջան, որում հունա-հռոմեական արևմտյան քաղաքակրթությունը, միահյուսվելով արևելյան համադրական հելլենիզմի հետ, ստեղծեց բոլորովին նոր որակ: Դա հնարավորություն տվեց Հռոմին հաղթահարել քաղաքակրթական ճգնաժամի ծնած քաոսային վիճակը և երկարաձգել իր պատմությունը ևս մի քանի դարով:

Ներոնի կրոնական նորարարությունը ունեցավ նախևառաջ քաղաքակրթական նշանակություն: Այն տեղի էր ունենում դեռևս ուշ հանրապետության դարաշրջանում սկիզբ առած համակարգային փոխակերպումների ֆոնի վրա և արտահայտվել է կատարելատիպերի բացահայտ տեղաշարժով՝ պատրիկյան negotium-ի և ռացիոնալ քաղաքական տեսության ոլորտից դեպի արևելյան բնազանցությունն ու խորհրդամոլությունը: Նոր դարի հռոմեացին տենչում էր գլխավորապես անհոգ և շռայլական կյանք այս աշխարհում կամ երանելի կյանք և անմահություն՝ երկնային պոլիսում: Նման պայմաններում, բնականաբար, միայն փրկչական բնույթ ունեցող կրոնական ուսմունքներն էին պահանջված Հռոմեական կայսրության բնակչության մեծ մասի կողմից: Այդպիսի արդիական կրոններից էին քրիստոնեությունը և մի շարք արևելյան պաշտամունքներ, որոնց մեջ հետազոտողներն առանձնացնում են միհրականությունը, որը, Ռամսեյ Մըք Միլլանի պատկերավոր արտահայտությամբ՝ աչքի էր ընկնում «հատուկ դինամիզմով»[18]:

Կային նաև այլ պատճառներ, որ դրդել էին Ներոնին դառնալ նոր կրոնաիմաստասիրական համակարգի հետևորդ. նրա հակվածությունը դեպի նորը և արդիականը և հախուռն ձգտումը լինել ռահվիրա, նորաձևության մունետիկ, այդ թվում՝ այնպիսի գլոբալ հարցերում, ինչպիսիք են կրոնը և պետական գաղափարախոսությունը: Դրա հետ մեկտեղ, կայսեր արտիստիկ հոգին չէր կարող անտարբեր թողնել միհրական ծեսերի ընդգծված թատերականությունը, նվիրաբերական և լիթուրգիկ արարողությունների ժամանակ բազում դերեր,

[18] **MacMullen R.** Paganism in the Roman Empire. New Haven and Lond.: Yale University Press, 1981.

դիմակներ և բեմանկարներ հաճախ փոխելու հնարավորությունը: Միայն միհրականության մեջ Սենեկայի սանը վերջապես գտավ իր սրտին այդքան մոտ կրոնական էզոթերիկան, խորունկ և համադրական հելլենիստական իմաստասիրությունը և, վերջապես՝ հավիտենական կյանքի հույսը: Այս ամենը Կարլ Յասպերսը ամփոփել է *logos* կոչվող ընդգրկուն հասկացության մեջ:

66 թվականին՝ Տրդատի Հռոմ այցելության ժամանակ, Ներոնն ընդգրկվել էր Արևելքում արդեն որոշակի ազդեցություն ունեցող ընտրախավի մեջ՝ հայտնի իբրև միհրական միաբանություն, ընդ որում, միանգամից հայտնվելով նվիրաբերության ամենաբարձր՝ յոթերորդ աստիճանի վրա: Միհրականների պատկերացմամբ՝ յոթերորդ աստիճանի հասած խորհրդապաշտը դառնում էր Աստված: Դա հենց այն է, ինչի մասին այդքան վաղուց երազել էր Ներոնը, և ինչը նրան այդքան նուրբ մատուցեց մոգ-արքա Տրդատը: Նվիրաբերության յոթերորդ աստիճանի վրա Միհր-Ներոնը հայտնվում էր մարդկային օրենքներից վեր. այսուհետև նրա բոլոր գործողություններն անհամաչափելի էին մարդկային արարքների հետ և կարող էին չափվել բոլորովին այլ կատեգորիաներով: Դա նշանակում էր, որ նա ենթադատ չէր ո՛չ հռոմեական սենատին, ո՛չ բանակին, ո՛չ հռոմեական ժողովրդին և անգամ՝ ո՛չ էլ Յուպիտերին, քանզի հավասար էր նրան: Չէ որ այդ շրջանում նույնիսկ Արևելքում չէր մնացել թագավոր-աստված, այսինքն՝ նվիրաբերության յոթերորդ աստիճանի հասած տիրակալ: Ներոնն էլ, ըստ էության, հայտնվել նվիրաբերական սանդղակարգի բարձրագույն յոթերորդ մակարդակի վրա, որը նրան երեք մոգ-թագավորները զիջել էին ոչ թե տեղի տալով Հռոմի ռազմական ուժին կամ դիվանագիտական հնարքներին, կամ էլ խճճվելով Սենատի իրավաբանական դիպվածաբանության սարդոստայնի մեջ, այլ տուրք տալով Ներոնի աստվածային «մարմնավորմանը»: Տրդատի կողմից Ներոնին երկրպագելը Արևելքում պետք է ընկալվեր որպես հարգանքի տուրք ոչ թե հռոմեական պրինցեպսին, այլ ծոնման ամենաբարձր մակարդակին հասած նվիրաբերված միհրական միստիկոսին: Ձոնված Ներոնի զորությունն ուներ աստվածային և ոչ մարդկային բնույթ, ինչպես, օրինակ, դա բնորոշ էր սովորական հռոմեական պրինցեպսին, որի իշխանությունը Հռոմում կարող էր լեգիտիմ համարվել միայն ծերակույտի, բանակի, ժողովրդական ժողովի և մարդկային այլ հաստատությունների փոխադարձ համաձայնությամբ:

Հելլենիստական Արևելքում այն, ինչ կատարվել է Հռոմում, և, նամանավանդ՝ Ներոնի նվիրաբերությունը, պետք է դիտվեր որպես քաղաքական փայլուն հաղթանակ: Չէ՞ որ Տրդատին հաջողվեց անել անհնարինը. հանդես գալով նոր զաղտնածիսական ուսմունքի նախակարապետի և իմաստուն վարժապետի (*μυστ-ἄγωγός*) դերում, նա դարձի է բերել կայսերը՝ ներքաշելով վերջինիս իր ազդեցության ոլորտի մեջ: Ընդունված է, որ հաղթողների աստվածները պետք է իշխեն նվաճված ժողովուրդների աստվածների վրա: Իսկ այժմ արևելյան աստված Միթրան իր իշխանությունն է հաստատում Հռոմում՝ դառնալով կայսեր և նրա մերձավոր շրջապատի, այսինքն՝ հռոմեական հասարակության քաղաքական և ռազմական ընտրախավի պաշտամունքի առարկան: Ավելին, Ներոնը դարձավ ուրույն օրենքներով ապրող միջազգային աստիճանակարգված փակ միաբանության անդամ, որի բնորոշ կողմերից էին կուռ և հաստատուն

կառուցվածքն ու խստաբարո օրենքները: Դա Միթրայի եղբայրության անդամ իշխողների քաղաքականությունը դարձնում էր ավելի իմաստավորված և վերահսկելի: Այդ քաղաքական ակցիայի վերջնանպատակն էր դեպի Pax Romana կողաթեքման թուլացումը և, Ա.Ստեփանյանի տերմինաբանությամբ՝ *գլոբալ համեստասիփի* (համաշխարհային հավասարակշռության) վերականգնումը[19]:

Ըստ Վաղարշի և Տրդատի մշակած ծրագրի, Ներոնին միհրական միաբանության մեջ ներքաշելու դեպքում, հնարավոր կլիներ հաստատել քաղաքական և մշակութային խաղաղություն Արևելքի և Արևմուտքի միջև, վերածնել հռոմեացիների տարածաշրջանում հաստատվելուց հետո խաթարված հելլենիստական համադրականության ավանդույթները: Հռոմի անսանձ զավթողականությունը (գոնե միառժամանակ) կորցրեց նախկին թափը և զգալիորեն մեղմացավ: Դա քաղաքակրթական ճեղքում էր. Հռոմն ըստ էության նվաճվեց, բայց ոչ թե զենքով, այլ նոր գաղափարների ուժով: Բնավ պատահական չէ, որ Արևելքում Ներոնին ընկալում էին իբրև «յուրային». նրա անունով կոչվել էր Հայաստանի վերակառուցված մայրաքաղաք Արտաշատը (Ներոնեա), իսկ կայսեր անժամանակ մահն ընկալվել էր որպես լուրջ քաղաքական կորուստ: Հաջորդ դարերում ևս Հայաստանում Միթրայի պաշտամունքն աղերսվում էր Ներոնի անվան հետ: Զարմանալի չէ, որ Ներոնի անունը խորհրդանշական դարձավ, և առաջին քրիստոնյաների կոլեկտիվ գիտակցության մեջ հակաքրիստոսի և Միթրա-Ներոնի անունները նույնականացան:

Անշուշտ, պատմական տվյալ դարաշրջանում Հռոմը դեռևս պատրաստ չէր արմատական քաղաքակրթական վերակառուցմանը: Հռոմեական պետության գոյության գլխավոր գրավականը ակտիվ, հարձակողական արտաքին քաղաքականությունն էր, ողջ հռոմեական տնտեսությունը, իրավա-քաղաքական համակարգը և հոգևոր-մշակութային կյանքը խարսխված էր դրա վրա: Դրանից հրաժարվելու դեպքում Հռոմն ուղղակի կզրկվեր կենսական կարևորագույն ռեսուրսների ներհոսքից և կվերանար որպես պետություն: Թերևս դրանով էր պայմանավորված հռոմեական նոբիլիտետի դիմադրությունը Ներոնի ձեռնարկումներին: Այնուամենայնիվ, երկու հազարամյակների սահմանագլխին բավականին հստակ սկսել էր ուրվագծվել նոր համադրական աշխարհակարգի հորինվածքը, որի առաջին ճարտարապետներն էին մի կողմից՝ Պոմպեոսը, Օգոստոսը, Կորբուլոնը և Ներոնը, մյուս կողմից՝ Տիգրանը, Արտավազդը, Վաղարշը և Տրդատը: Իսկ այնպիսի կրոնաէթիկական ուսմունքները, ինչպիսիք էին միթրայականությունն ու քրիստոնեությունը, կոչված էին ամրապնդելու «Երկնային Քաղաքի» կառուցվածքը, որը գալիս էր փոխարինելու «Երկրային Քաղաքին»:

**2. Առաջին նախակարապետ Պոմպեոսը:** Որոշ հետազոտողների կարծիքով, Ներոնը չէր առաջին նվիրաբերված հռոմեացի միհրականը: Նրանից շատ ավելի վաղ Ք. ա. 67 թ. միհրական ձոնվեց Պոմպեոսը: Հետաքննելով իր կողմից ջախջախված կիլիկյան ծովահենների հանցանքները, նա նաև ծանոթացավ նրանց դավանած վարդապետությանը՝ միհրականությանը: Կիլիկիայում ավար-

---

[19] **Ստեփանյան Ա.Ա.,** Քաղաքակրթական հավասարակշռության հիմնախնդիրները Մեծ Հայքում // *ՎէՄ* համահայկական հանդես, 2010, 1 (29) - էջ 29-66

տելով գործերը, Ք.ա. 66 թ. նա իր լեգեոններով մուտք գործեց Կոմմագենե, որտեղ Անտիոքոս արքան նրա հետ սկզբում ընդհարվեց և հասավ զգալի հաջողությունների: Դա ստիպեց Պոմպեոսին գնալ զիջումների, առաջարկել խաղաղություն և դաշինք: Այդ դաշինքը չափազանց ձեռնտու էր Անտիոքոս Կոմմագենացու համար, որը անկախացավ Տիգրան Բ-ից և հռչակվեց «հռոմեական ժողովրդի դաշնակից և բարեկամ»: Ըստ երևույթին այդ ժամանակ Պոմպեոսը ձոնվել է միստիկոս. մենք կարծում ենք, որ նրան նվիրաբերվեց միհրական գաղտնածիսական հիերարխիայի երկրորդ աստիճան, քանի որ առաջին պատվաստիճանը նա ստացավ դեռևս Կիլիկիայում: Դրանից հետո հռոմեական միջոցներով Անտիոքոսը նախաձեռնել է հայտնի միհրական հիերոթեսիոնի կառուցումը:

Շուտով Պոմպեոսը կրկին հանդիպեց միհրականության ուսմունքի հետևորդներին Հայաստանում: Այստեղ նա հավանաբար արժանացավ նվիրաբերության ավելի բարձր աստիճանի : Չի բացառվում, որ Հայաստանում Պոմպեոսի միստագոգոսը (վարժապետ) սկզբում եղել է Տիգրան Կրտսերը, իսկ այնուհետև ավելի բարձր մակարդակի վրա նրան հանել է ինքը՝ Տիգրան Բ-ն: Հայաստանում պահպանվել է Տիգրանի և Պոմպեոսի հանդիպման նկարագրությունը, որը շատ առումներով հիշեցնում է դրանից հարյուր տարի անց Հռոմում տեղի ունեցած Տրդատի և Ներոնի հանդիպումը: Երկու հանդիպումներն էլ ավարտվել են վերստին թագադրությամբ, հաշտության և բարեկամության պայմանագրերի կնքումով: Սակայն հետաքրքիր է այդ երկու իրադարձությունների ոչ այնքան արտաքին և ակնհայտ նմանությունը, որքան քաղաքական անցքերի արտաքին շերտի տակ թաքնված խորքային երևույթների ընդհանրությունները: Հայաստանում Պոմպեոսը վարվել է այնպես, ինչպես դրանից առաջ, նույն թվականին՝ Կոմմագենեում: Երևի չենք սխալվի ենթադրելով, որ հայկական վարկածում այս իրադարձությունը ներկայացված պետք է լիներ այլ կերպ: Հավանաբար, տիտղոսակիր տարեց թագավորի և երիտասարդ ազնվազարմ հռոմեացու կեցվածքը պետք է դիտարկվեր որպես նվիրաբերական ծիսակատարություն: Համաձայն Տերտուլիանոսի՝ միհրականի նվիրաբերությունը զինվոր-miles մակարդակի վրա՝ պարտադիր պետք է կատարվեր ռազմական ճամբարում: Զոնման ժամանակ նվիրաբերվողին առաջարկվում էր թուր կամ ոսկե պսակ: Դա յուրօրինակ փորձություն էր, օրդալիա: Նվիրաբերվողը պետք է ճիշտ կողմնորոշվեր և ընտրեր թուրը, հրաժարվելով ոսկե պսակից բարձրաձայնելով. «Իմ պսակը Միթրան է»: Փորձությունն անցնելուց հետո նվիրաբերվողը պետք է ընթրիքի տեսքով պատարագ մատուցեր, որին կարող էին մասնակցել և՛ ընտրյալները, և՛ հրավիրվածները: Այսպիսով՝ իմացողները, Արտաշատ տանող ճանապարհին հռոմեական ռազմական ճամբարում կատարված անցքերը պետք է որ ընկալեին որպես միհրական նվիրաբերության ծես՝ ինիցիացիա: Պատահական չէր, որ Պոմպեոսի վրանում Տիգրան Մեծը նստած էր Պոմպեոսի մի կողմում, իսկ Տիգրան Կրտսերը՝ մյուսում:

Նման մոտեցումը Ք.ա. 66թ. իրադարձությունների հանդեպ, հնարավորություն է տալիս բացահայտել Պոմպեոսի և Առաջավոր Ասիայի հելլենիստական երկրների տիրակալների միջև ձևավորված հարաբերությունների բոլորովին նոր շերտ: Նախկինում նման խոր և բազմաշերտ հարաբերություններ որևէ արևելյան

երկրի իշխանությունների և ավանդական հռոմեական սենատորական վերնախավի միջև ուղղակի անհնար է պատկերացնել՝ վերջինիս պոլիսային սահմանափակ մտածողության պատճառով: Պոմպեոսը կարողացավ հաղթահարել հռոմեական վերնախավին բնորոշ միակողմ կարծրամտությունը, նախազգալով Հռոմում և ողջ Միջերկրականում հասունացող աշխարհայացքային հեղափոխությունը, նախապատրաստել Հռոմը դրա գալստյանը:

3. **Միթրայականության ճակատագիրը Փլավիոսների և Սևերոսների օրոք: Օպտիմատական վերնախավի դիմադրությունը:** Հռոմի և հելլենիստական աշխարհի միջև հոգևոր-գաղափարախոսական պայքարը դեռ առջևում էր և այն ընթանալու էր փոփոխակի հաջողությամբ: Այդ պայքարի զոհ էին գնալու այն հռոմեական գործիչները (Պոմպեոսը, Կեսարը, Անտոնիոսը, Կալիգուլան, Ներոնը և այլք), որոնց Արևելքի հետ կապում էին առանձնահատուկ անձնական հարաբերություններ: Այդ իսկ պատճառով, նրանք, Ալեքսանդր Մեծի պես, չէին ցանկանում արևելցիներին դիտարկել իբրև բարբարոս, իսկ Արևելքը՝ կայսրության մետրոպոլիային անսահման նյութական ռեսուրսներ և ստրուկներ մատակարարող «հանքավայր»: Այդ պայքարում «Ալեքսանդրիան» հաղթելու էր «Հռոմին» բայց պետք է անցներ շատ ժամանակ:

Արևելյան հելլենիստական համադրական կրոնները սկսել էին ներել ավանդական հռոմեական հեթանոսությանը արդեն Կալիգուլայի օրոք: Սակայն շոշափելի արդյունքների հասան միայն Ներոնի և նրան հաջորդած մյուս արևապաշտ կայսրերի օրոք: Փլավիոսներից վերջինը՝ Դոմիցիանոսը, որը մեծ ակնածանք էր տածում արևելյան կրոնների հանդեպ, հատուկ քարոզարշավ էր ծավալել Միթրայի և Իսիսի պաշտամունքները Հռոմում հաստատելու համար: Զինվորական միջավայրում միթրայականությունն առանձնակի լայն տարածում ստացավ Տրայանոսի օրոք, որի զինվորները՝ նվաճելով Հայաստանը և մի շարք հարակից երկրները, իրենք «նվաճվեցին» նոր վարդապետության կողմից: Միհրի պաշտամունքի ինտելեկտուալացման և հունական փիլիսոփայության ոգով վերաիմաստավորման գործում մեծ դեր խաղացին Սևերոսները: Այդ կայսերական տան վերջին ներկայացուցիչ Կոմմոդոսը անգամ բռնի միջոցների էր դիմում իր մայրաքաղաքում Միթրայի պաշտամունքը տարածելու համար:

Հեթանոսությունը հեշտությամբ չէր զիջում իր դիրքերն ագրեսիվ արևելյան հելլենիստական պաշտամունքներին: Օպտիմատական ընտրախավը, հենվելով զգալի վարչական ռեսուրսի և ազգաբնակչության «հայրենասիրական» զգացմունքների վրա, դիմադրում էր հելլենիզմի աշխարհայացքային էքսպանսիային: Ինչպես և Իսիսի պաշտամունքի դեպքում, պահպանողական հռոմեական ծերակույտը կասկածամտորեն էր նայում նաև միթրայականությանը: Քաղաքի մագիստրատն ամեն կերպ խոչընդոտում էր միթրեումների կառուցմանը քաղաքի սրբազան մասում: Սակայն, նոր պաշտամունքները դանդաղ, բայց անշեղ ճանապարհ էին հարթում դեպի Հռոմեական կայսրության սիրտը: Պարզվեց, որ անուշադրության մատնված հռոմեական աստվածներ այլևս ոչ ոքի պետք չեն: Միհրականությունը, լինելով տիեզերական, էկումենիկ կրոնական ուսմունք, ավելին, քան որևէ այլ վարդապետություն, համապատասխանում էր այդ

պահանջներին: Հենց այս հանգամանքն էլ միհրականությունը դարձնում էր գրավիչ հռոմեական ռազմաքաղաքական էլիտայի համար:

**4. Միթրայականությունը և հռոմեական բանակը: Հայ և կոմմագենյան զինվորների դերը նոր կրոնահոգևոր համակարգի տարածման գործում:** Ինչպես հաճախ պատահում է, հռոմեական իմպերիալիզմը շրջվեց իր իսկ դեմ: Նոր, ոչ ավանդական կրոնական ուսմունքների ուղղորդողները դարձան հռոմեական զինվորները, ներկալված ռազմագերիները, ասիական պրովինցիաներից Հռոմ վերաբնակված ձեռներեց մարդիկ և ստրուկները: Երբ Ք.ա. I դարի երկրորդ կեսին Կիլիկիայում, Կոմմագենեում, Կապադովկիայում, Փոքր Հայքում և Պոնտոսում ճամբարեցին հռոմեական լեգեոնները, միհրականությունը, ըստ էության, նոր լիցք և սնուցիչ միջավայր ստացավ: Հռոմեական շատ զինվորներ ու սպաներ դարձան այդ նոր կրոնաբարոյախոսական համակարգի նվիրյալներ և մեծ եռանդով ու խանդավառությամբ այն սկսեցին տարածել ողջ կայսրությունում:

Հատկապես ուժեղ էր միհրականության ազդեցությունը սահմանամերձ շրջաններում, որտեղ շատ զինվորական բնակավայրեր կային: Միթրայի պաշտամունքը հատկապես արագ էր տարածվում այն հռոմեական ռազմական ճամբարներում, ուր բանակել էին Կոմմագենեից հավաքագրված զորամասերը: Հատկանշական է, որ առաջին միթրայական սրբավայրերը հռոմեացիները կառուցել են Հայաստանում: Հռոմից վերադառնալուց հետո Տրդատը, Ներոնի շնորհած միջոցներով, Արտաշատում, Գառնիում և Դվին-Ասաակում հիմնեց Միհր-Արևին նվիրված սրբարաններ և բագիններ: Չի բացառվում, որ Ներոնի տրամադրած շռայլ դրամաշնորհը պայմանավորված էր նորադարձ միհրական կայսեր ձգտմամբ՝ հատուկ մեծարանք ցուցաբերելու Միհրին՝ տաճարներ կառուցելով մի երկրում, որը, նրա համոզմամբ, եղել էր Միհր-Միթրայի և Անպարտելի Սոլի-Արևի հայտնության վայրը: Այսպիսով, Հայաստանն ու Կոմմագենեն հռոմեական միթրայականների կողմից ընկալվում էին որպես եպիփանեայի վայր: Այդ համատեքստում հատուկ նշանակություն է ստանում Ներոնի և Տրդատի դաշինքը, որը պետք է ընկալվեր ոչ թե իբրև միջազգային պայմանագիր, այլ միհրականների ուխտ, որի երաշխավորը ինքը՝ Երդմնապահ Միհրն էր:

5. **Միթրայականության հետագա վերընթաց ուշ կայսրության շրջանում:** Ներառելով իր մեջ դիոնիսականության և Հին աշխարհի ներքին, էզոթերիկ ուսմունքների այլևայլ տարրեր, այն սկսեց իր հաղթական երթը Հռոմեական կայսրության ողջ տարածքով: Ք.հ. I–II դարերից միթրայականությունը դարձավ Հռոմի թերևս ամենատարածված և ազդեցիկ վարդապետությունը՝ հավակնելով անգամ վերաճելու համակայսերական կրոնի: Այստեղ ևս չափազանց մեծ էր հայերի և կոմմագենացիների դերակատարությունը: Հռոմի գաղափարախոսական դատարկությունը սկսեց լցվել Արևելյան հայտնի և անհայտ կրոնական համակարգերով:

Սակայն Միթրա-Միհրը շատ արագ ընտելացավ ավանդական արևմտյան դիցերի միջավայրում և արդեն Դիոկղետիանոս կայսեր օրոք, Միթրան հռչակվել էր Յուպիտերին հավասար: Ժամանակին Անտիոքոս Կոմմագենացու պես, Դիոկղետիանոսը Արև-Միթրային համարում էր կայսերական իշխանության աստվածային մարմնավորում, իր անձի ուղեկից (comes) և պահապան (conser-

vator)։ Նրա գահակալության տարիներին «Sol dominus imperii romani» հաստատվում է անմիջապես Կապիտոլիումի քարանձավում։ Սրանով ավարտվում է Հռոմի քաղաքակրթական փոխակերպումը։ Հռոմը դառնում է հելլենիստական միապետություն՝ հելլենիստական գաղափարախոսական և բարոյագիտական ինստիտուտներով, որոնք երկարաձգեցին կայսրության գոյությունը Արևմուտքում ևս մոտ երկու, իսկ Արևելքում տասնյոթ հարյուրամյակով։ «Սակայն, - ինչպես այս առիթով գրում էր Ադոլֆ Գարնակը, - III հարյուրամյակում, անկախ Եկեղեցու ավերիչ գործունեությունից, (Հռոմեական պետությունը՝ հեղ.) փոխակերպվեց. այն կորցրեց նախկինից դեռևս պահպանված ազգային տարրերը և, գործնականում, դադարեց իր գոյությունը որպես Հռոմեական պետություն… Դիոկղետիանոսը ստացավ պետությունը կազմալուծված վիճակում։ Նա վերստեղծեց այն. թեպետ դա նախկին պետությունը չէր, բայց իսկական՝ կենտրոնացված պետություն էր»։ Այս իրավիճակը արտացոլում էր Հռոմի աշխարհայացքային պարտությունը հարևան քաղաքակրթությունների հետ հակամարտությունում։

Վերջին միհրական կայսրը Հուլիանոս Ուրացողն էր (361–363)։ Մշակվեց կրոնափիլիսոփայական լուսապաշտական համակարգ, որի հիմքում դրվել էին նորպլատոնական գնոստիկական գոյաիմացաբանական տարրեր։ Թվում էր ևս մեկ քայլ՝ և Հուլիանոսին կհաջողվի հասնել իր նկրտումների իրականացմանը, միհրականությունը կդառնա ոչ միայն համակայսերական, այլև համաշխարհային էկումենիկ կրոն։ Սակայն, ինչպես հաճախ լինում է, պատմությունը կատարեց կտրուկ շրջադարձ, և Ներոնի (կամ թերևս Պոմպեոսի) ձռնմամբ սկսված միհրականության հաղթարշավն ավարտվեց Հուլիանոս Ուրացողի պարտությամբ և մահով։ Միհր Անպարտելին պարտվեց ու նրա պարտությունը անդառնալի դարձրեց քրիստոնեության հաղթական երթն այն երկրներում, որոնք երբևիցե ընդգրկվել են Pax Romana-ի մեջ կամ գոնե միջնորդավորված ձևով ենթարկվել նրա ազդեցությանը։

**6. Միթրայականության վախճանը**։ Հուլիանոսի մահից հետո քրիստոնեությունն անցավ հակագրոհի։ Լինելով հելլենիստական կրոն՝ քրիստոնեությունը փոխառեց և շատ հաջող կիրառեց միհրականության հիմնական նվաճումները։ Միհրական իմացաբանական և աստվածախոսական գլխավոր հարացույցներն ուղղակի լուծվեցին քրիստոնեական կրոնական համակարգում, անջնջելի հետք թողնելով դավանախոսության, խորհրդաբանության և ծիսակատարության մեջ։ Որքան արագ և անսպասելի էր միհրականության «հայտնությունը» ու հրաշալի ծաղկունքը, նույնքան սրընթաց և անակնկալ էր նրա անկումը։

Միթրայականության այդ աստիճանի արագ և անվերապահ պարտությունը քրիստոնեությանը պայմանավորված մի շարք պատճառներով։ Ի տարբերություն քրիստոնեական դավանանքի, որի բնորոշ կողմերից է հանրամատչելիությունը և մասսայականությունը, միթրայականությունը փակ և էլիտար կրոնական համակարգ էր։ Քրիստոնեության հիմնական տարածողները, ինչպես հայտնի է, հասարակության թշվառ և մերժված խավերն էին՝ կանայք, ստրուկները, էթնիկ փոքրամասնությունները և այլն։ Իսկ միթրայականության հետևորդները հիմնականում զինվորական ծառայություն և կյանքի զանազան փորձություններով անցած հաջողակ տղամարդիկ էին։ Կանայք, ստրուկները,

ռամիկները, հաշմանդամները և այլք ուղղակի չէին կարող լինել միթրայական համայնքների լիիրավ անդամ: Դա անչափ նեղացնում էր միթրայականության հետևորդների սոցիալական հենարանը:

Մեզ չի հասել միթրայականների ոչ մի սուրբ գիրք: Քիչ հավանական է, որ այսչափ առաջադեմ և բարդ կրոնաէթիկական ուսմունքը, որը, ինչպես ասել ենք, կարողացել է բարձրանալ Logos-ի մակարդակի, հիմնվեր միայն բանավոր ավանդույթի վրա՝ պարզունակ հեթանոսական հավատալիքների պես: Դա կարող է ունենալ մեկ բացատրություն՝ միթրայական կրոնի փակ բնույթը: Միթրայականների սուրբ գիրը, եթե այն անգամ գոյություն ուներ, մատչելի էր մարդկանց փոքրաթիվ խմբին, միայն ամենաարժանիներին: Հենց դա դարձավ միհրականության պարտության գլխավոր պատճառը: Միթրայական սրբազան տեքստերը մեզ չեն հասել նաև այն պարզ պատճառով, որ հաղթանակած քրիստոնեությունը իսպառ ոչնչացրել է ոչ քրիստոնեական աստվածաբանական, և, առաջին հերթին, միթրայական գրականությունը:

Միթրայականությունը ժամանակին փայլուն հաղթանակ տարավ հեթանոսական հին հավատալիքների նկատմամբ: Սակայն ինքը չվայելեց այդ հաղթանակի պտուղները, դրանք բաժին հասան քրիստոնեությանը: Անհրաժեշտ է հիշել Ժ. Ռենանի պատկերավոր խոսքերը. «*Եթե որևէ մահացու հիվանդություն հանկարծ խոցեր քրիստոնեությունը, ապա աշխարհը կլիներ միթրայական*»: Մնում է ավելացնել, որ միթրայականությունն իսկապես դարձավ հելլենիստական, իսկ ավելի ուշ հռոմեա-հելլենիստական քաղաքակրթությունների կվինտէսենցիա: Նրան հաջողվեց միացնել անմիանալին՝ միաձուլելով արևելյան և արևմտյան մայր քաղաքակրթությունները և ստեղծել նոր որակ:

---

## ԳԼՈՒԽ Ե . ՃԱՐՏԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԱՐՎԵՍՏԸ ԱՆՏԻՈՔՈՍ Ա ԿՈՄՄԱԳԵՆԱՑՈՒ ՆԵՄՐՈՒԴՅԱՆ ԵՎ ԱՐՍԱՄԵՅԱՆ ԲԵՎԵՌԱԳՐԵՐՈՒՄ

1. **Մուտք:** Այստեղ որպես քննության առարկա ընտրվել են Անտիոքոս Ա Կոմմագենացու արքայի հունարեն վիմագիր արձանագրությունները: Ի տարբերություն անցյալի՝ քանիցս խմբագրման և գրական մշակման ենթարկված գրավոր հուշարձանների, վիմագրական, պաշտամունքային և դրամագիտական աղբյուրները մեզ են հասել նախնական տեսքով՝ պահպանելով, ինչը շատ կարևոր է պատմաբանի համար, ինքնատիպ ոճը, գրելակերպը, լեզվամտածողությունը և սույն դարաշրջանին բնորոշ աշխարհայացքային պատկերացումները: Վիմագիր արձանագրությունների մեծ մասը նկարագրվող իրադարձությունների ժամանակակիցն է և պատմում է իրական փաստերի մասին, որոնք լուսաբանում են ուսումնասիրվող դարաշրջանի կյանքի տարբեր կողմերը: Այդ արձանագրությունները արժեքավոր նյութ են ներկայացնում, որն արտացոլում է դարաշրջանի իսկական դեմքը:

2. **Անտիոքոս Ա Կոմմագենացու Նեմրուդի և Արսամեայի արձանագրությունները:** Անտիոքոս Ա Կոմմագենացու բնեռագրերն առանձնանում են խստաոճ բարեպաշտության անկեղծ պաթոսով: Չնայած լեզվական վրիպումներին, արձանագրությունները կազմված են աշխույժ և սրտահույզ լեզվով, նրբորեն փոխանցում են երկարակյաց և բավական հաջողակ, հելլենիստական միապետի՝ երեք հնագույն և հռչակավոր արքայատոհմերի (Երվանդականներ, Աքեմենյաններ և

Սելևկյաններ) ժառանգի ոչ մեծ, բայց բազմամշակույթ երկրի տիրակալի աշխարհընկալման առանձնահատկությունները: Նեմրուդի և Արսամեայի հունարեն կոթողային արձանագրությունները թույլ են տալիս էլ ավելի լավ ճանաչել արքայի անձը, պարզել նրա մտածելակերպը, կրթվածության աստիճանը, լեզուներին տիրապետելը և այլն: Արձանագրություններից երևում է, որ Կոմմագենեի թագավորը համակված էր այն մտքով, թե ինքն այս աշխարհում ուներ հատուկ նախանշված առաքելություն, և որ գլխավորն է՝ հավատում էր իր հոգու անմահությանը:

Անտիոքոս Կոմմագենացու դամբարանատեղիում ծիսական արձանագրությունները ստեղծվել են մարդկանց հոծ բազմության առջև բարձրաձայն ընթերցվելու համար՝ արքայի թաղման ժամանակ, ինչպես նաև նրա մահվանից հետո՝ թագավորազնի ծննդյան օրերին և կրոնական այլ տոնակատարությունների ժամանակ: Արձանագրությունների տեքստը կազմված է *կոյնեով*, թեև դրանցում հանդիպում են ատտիկյան և դորիական լեզուների առանձին բառեր:

Ինչպես երևում է արձանագրություններից, ենթադրվում է, որ լիթուրգիային և այլ ծեսերին մասնակցելու էին բնակչության ամենալայն շերտերը՝ քրմությունը, տոհմիկ երևելիները, մեծատոհմիկները, արքունի սպասավորները, զինվորականները, առևտրականները, արհեստավորները, գյուղացիները և, վերջապես, հեռավոր ու մոտ երկրներից: Այս լսարանի մեծամասնությունը պետք է որ լավ տիրապետեր հունարենին և լիթուրգիայի ժամանակ հասկանար, թե ինչ է բարձրաձայն կարդում գերագույն քուրմը: Այլապես թագավորը պարզապես կիրամայեր համանման տեքստը շարադրել արամերեն կամ էլ կազմել երկլեզվյա տեքստ:

Այն, որ այդ տեքստերի հեղինակը Անտիոքոսն է՝ վկայում է այն փաստը, որ արձանագրությունը կազմված է առաջին դեմքով՝ որպես ուղերձ սերունդներին, ականավոր հելլենիստական միապետի արարքները հավերժացնելու, նրա ու նրա փառապանծ նախնիների անձը մեծարելու նպատակով: Դա հաստատվում է նաև ուղերձի արքայական, հովանավորչական երանգով, նախնիների հանդեպ նրա հպարտ, պաշտողական վերաբերմունքով:

Ինչպես նշել է Էդուարդ Նորդենը, *ասիանական հռետորական ոճով* են գրվել նաև Անտիոքոս Կոմմագենացու արձանագրությունները[20]: Դա հաստատվում է Կոմմագենյան արձանագրությունների կառուցվածքով և բովանդակությամբ: Կարծիք կա, թե կարճ վիմագիր արձանագրություններ, օրինակ՝ ընծայական կամ դամբանական կարդալը համեմատաբար ավելի հեշտ է, քան գրավորները: Սակայն նույնը չի կարելի ասել Նեմրուդյան և Արսամեական արձանագրությունների մասին: Դրանցից յուրաքանչյուրն այնքան ընդարձակ է, որ հազիվ թե տեղավորվեր անգամ ամենահաստ պերգամենտի գլանի վրա: Ձևականորեն դրանք պատկանում են հանդիսավոր վիմագրական ժանրին, բայց իրականում այդ ձևակերպումն արդարացի է միայն տեքստի սկզբնամասի համար: Արձանագրությունները «բազմաշերտ» են և բազմաժանր: Դյորները, օգտագործելով Հումմանի և Նորդենի ուսումնասիրությունները, ոչ միայն վերծանեց ու թարգմա-

[20] **Norden E.** Die antike Kunstprosa vom VI. Jahrhundert v. Chr. bis in die Zeit der Renaissance. Leipzig, 1898. S.141-145.

նեց Անտիոքոսի Արսամեական արձանագրությունը, այլև, կարծես շարունակելով ուշ հելլենիզմի դարաշրջանի ալեքսանդրյան բանասերների ավանդույթները, այն բաժանեց գլուխների և ենթագլուխների՝ դրանք վերնագրելով բովանդակությանը և ներքին տրամաբանությանը համապատասխան:

Կոմմագենյան արձանագրություններն անվերապահորեն կարելի է անվանել հելլենիստական հռետորաբանության հուշարձաններ: Հելլադայում հանրապետական ինստիտուտների վերացմանը զուգընթաց ճարտասանությունն սկսեց կորցնել իր կիրառական, օգտապաշտական նշանակությունը և սկսեց ծառայել գեղագիտական նպատակներին: Հենց այս ժամանակ էլ առանձնանում են ոճի տեսության երկու ինքնուրույն ուղղություններ՝ խստաոճ ատտիկությունը, որը հոգ էր տանում գերազանցապես մտքի ճշգրտության և պարզության մասին, և ասիանականությունը, որի կողմնակիցները, մերձավորարևելյան գրականության ազդեցությամբ, մշակեցին հատուկ, վերամբարձ, երբեմն պաթետիկ ոճ՝ հիմնված հակադրությունների վրա և լի համեմատություններով ու փոխաբերություններով:

Բացի այդ, ասիանյան ուղղությունը սնուցեց զուգահեռականությամբ և հակաթեզերով զարդարված բավական ընդարձակ փուլեր, կատարելագործեց արձակը՝ այն դարձնելով ռիթմիկ և հարուստ, մոտեցնելով հանգին: Ատտիկյան ոճի կողմնակիցներն ասիանյան ոճի նման ընդարձակաբանության, «դեկորատիվության» մեջ տեսնում էին «հելլենական ճաշակի խեղաթյուրում ասիական ազդեցությամբ», այստեղից էլ այդ եզրի՝ ավելի ուշ ի հայտ եկած բացասական իմաստը: Ասիական պերճախոսությունը դարձավ շատախոսության, ճոռոմ, հավակնոտ խոսելաձևի մարմնավորում: Հռետորաբանության այս երկու ուղղությունների կողմնակիցների միջև վեճ բռնկվեց : Սուր էին նաև բանավեճերը հունարենի «մաքրության» մասին:

Վերամբարձ ու ճոռոմ ոճին, ճոխ ձևերի առատությանը, օտարաբանությունների գիտակցված կամ չգիտակցված գործածության հետ մեկտեղ, ասիանական պերճախոսությունը հելլենիզմի դարաշրջանում ամենևին չէր բացառում դասական հռետորաբանության կանոններին խստորեն հետևելը: Ավելին, ամեն տեսակ կերպարներով ու բանասիրական ավելորդություններով գերհագեցածության պատճառով տեքստը դառնում էր ծանրաքաշ, կորցնում ավանդական ատտիկյան պարզությունը, մտքի ու խոսքի ճկունությունը: Տեքստն ավելի դյուրընկալելի, դյուրամարս դարձնելու համար ասիանական ուղղության հռետորները ստիպված էին հատուկ ուշադրություն դարձնել տեքստի էրգոնոմիկային՝ նրա ձևաբանական ծանրաքաշությունը կոմպենսացնելով պարզ ու տրամաբանական կոմպոզիցիոն կերտվածքով, ինչպես նաև ստատիկ, երբեմն պարզեցված *տոպիկայով*:

Ասվածը լիովին վերաբերում է նաև Անտիոքոս Կոմմագենացու արձանագրություններին: Հավանաբար, տեքստի ընկալումը հեշտացնելու համար Անտիոքոսը և նրա մերձավոր շրջապատի հռետորները հատուկ ուշադրություն էին կենտրոնացնում տեքստի հորինվածքի վրա: Ժանրով դա ձոն է, ներբող, հիմն արքային և իշխող արքայատոհմին: Այդքան երկար և բազմաշերտ տեքստում ներդաշնակության և հավասարակշռության հասնելու համար կազմողները ստիպված էին մեծ ջանքեր գործադրել: Չնայած գունեղ ասիանական գրելաոճին՝

Անտիոքոսի արձանագրությունները կազմված են վարպետորեն, դասական հռետորական ժանրի բոլոր օրենքներին համապատասխան՝ հիմնված տրամաբանական դիսպոզիցիայի (լատ. dispositio – դասավորություն կամ կոմպոզիցիա, որ ստացվում է նյութի *ինվենցիայի* արդյունքում) խիստ կանոնների վրա։ Մարկոս Ֆաբիոս Քվինտիլիանոսն այսպես է բնութագրել հռետորական տեքստի մշակման տեսությունը. *«Ճառի հինգ մասերն են. Ներածություն, Պատում, Փաստարկներ կամ Ապացույցներ, Հերքում, Եզրակացություն։ Միշտ չէ, որ պետք է պահպանել նշված հերթականությունը, այլ, ելնելով հանգամանքներից, տեղ տալ դրանց»* (III.9.1)։

Ավելի ուշ «դասավորության» այս կանոնի հիման վրա բյուզանդացի գիտնականները ստեղծեցին պիտոյից գիրքը (խրիա) կամ խոսքի կառուցման մասին ուսմունքը։ Դասավորության այս բոլոր կանոնները պահպանված են կոմմագենյան արձանագրություններում։

Անտիոքոս Կոմմագենացու երկու ամենամեծ և նշանակալի արձանագրությունները, հատկապես Նեմրութի արձանագրությունը, կառուցվածքով հիշեցնում են հնագույն մագաղաթագիր տեքստերը, որոնցից յուրաքանչյուրը բաժանված էր գլուխների՝ գրված առանձին գլանների վրա, բայց որոնք պահվում էին մեկ ընդհանուր տուփում։ Ընդ որում, յուրաքանչյուր գլուխը կամ պարզապես գլանն իր անվանումն ուներ։ Այդպես է Հերոդոտոսի «Պատմության» մեջ, որի աշխատությունը կառուցվածքով, ըստ Մուսաների թվի, բաժանված էր տասը Գրքերի. յուրաքանչյուր գիրք անվանված էր ի պատիվ Պառնասի բնակչուհիներից մեկի և հենց իր՝ մուսաների առաջնորդ Ապոլոն Մուսագետոսի։ Ըստ էության, տեքստի նման բաժանում կարելի է տեսնել նաև Նեմրութ լեռան գագաթին։ Նեմրութի արձանագրությունը դրոշմվել է պատվանդանների հակառակ երեսին, որոնք հավաքված են բազալտե վիթխարի ուղղանկյուն և քառակուսի կտորներից, որոնց վրա հիմնվել են աստվածների և հենց Անտիոքոսի արձանները։ Այս պատվանդանները հինգն էին՝ նրանց վրա բարձրացված կոթողների թվին համապատասխան, յուրաքանչյուր պատվանդանին դրոշմվել է գրության երկու սյունակ։ Հավանաբար, դրոշմողները, ելնելով տեքստի ներքին տրամաբանությունից, ջանացել են արձանագրությունները բաժանել սյունակների համապատասխան պատվանդանների վրա. երկնակյացներից յուրաքանչյուրի արձանի տակ դրոշմվել է տեքստի այն հատվածը, որն առավել շատ է համապատասխանում այս կամ այն աստվածության արքետիպային կերպարին։ Տեքստի հինգ մասերից յուրաքանչյուրը կարելի է կարդալ միայն առանձին-առանձին՝ պատվանդանից պատվանդան անցնելով, բայց դրանք բոլորն էլ միավորված են մտահղացման միասնությամբ և ընդհանուր հենքով։ Նեմրութի արձանագրության հնգամաս կառուցվածքային բաժանումը հինգ պատվանդանների վրա հազիվ թե պատահական լինի։ Այն պետք է համապատասխանի ճարտասանական հնգատակտ բաժանմանը Մուտքի, Պատումի, Փաստարկման, Հերքման, Վերջաբանի։ Ընդ որում, Արտագնես-Հերակլեսը համապատասխանում է Մուտքին, որը տեղադրված է նրա արձանի տակ, Միհր-Ապոլլոն-Հելիոս-Հերմեսը համապատասխանում է պատումին, Զևս-Օրոմազդը՝ փաստարկմանը, հիմնավորմանը։ Տեքստի առանցքային մասը՝ Նոմոսը, շարադրված է անմիջապես նրա կոթողի

տակ, հետևաբար՝ Կոմմագենեն համապատասխանում է հերքմանը, իսկ Անտիոքոսի պատկերը պսակում է վերջաբանը, բարեհաջող ավարտը: Այս ամենը Անտիոքոս Ա Եպիփանես Կոմմագենացու բազմակողմանի օժտվածության և ստեղծագործական էության անվիճելի վկայությունն է, միապետ, որ պաշտում էր հորն ու մորը, սրտագին սիրում հարազատներին ու մերձավորներին, անձնուրացաբար պաշտպանում ոչ մեծ, բայց արժանապատվորեն իր անունը կրող երկիրն աշխարհիս հզորների ոտնձգություններից:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սույն ուսումնասիրության մեջ բարձրացված շատ խնդիրներ քանիցս դարձել են պատմաբանների և բանասերների հետազոտության առարկան: Սակայն ամեն անգամ, պատմամշակութային հարացույցների փոփոխությամբ պայմանավորված, այդ հարցերը նորովի են բարձրացվում և պահանջում նոր պատասխաններ, քանզի հին պատասխաններն այլևս մեզ չեն բավարարում: Ուստի, հումանիտար գիտության ներկայացուցիչների յուրաքանչյուր նոր սերունդ դիմում է հետազոտության նոր մեթոդների, մշակում նոր հայեցակարգեր, հիմնարար գիտական մոտեցումներ և եզրեր՝ նորովի ընկալելով թվում է, թե հանրահայտ սյուժեներն ու երևույթները:

Հելլենիզմի թեմայի թերի և միակողմանի ուսումնասիրված լինելը կարևոր է դարձնում թեման թե՛ ընդհանրապես հելլենիզմի երևույթը ներկայացնելու և բացատրելու, թե՛, մասնավորապես, դրա տարածաշրջանային դրսևորումների տեսակետից: Հելլենիստական աշխարհի աշխարհագրական բաժանումը բնականորեն հասկացվում է ընդհանրացնող աշխատություններում, որոնցում նյութի շարադրանքը հաճախ հետևողականորեն անցնում է Հունաստանից ու Մակեդոնիայից դեպի Փոքր Ասիա, Սիրիա, Եգիպտոս, Միջագետք և այնուհետև՝ արևելք, ընդհուպ մինչև Հունա-Բակտրիա ու Հնդկաստան: Իսկ հելլենիզմի երևույթի բացատրման տարածաշրջանային մոտեցումը կիրառելու անհրաժեշտության գաղափարը (մոտեցում, որը հիմնված է հելլենիստական աշխարհի այս կամ այն մարզի հասարակական-տնտեսական, քաղաքական ու մշակութային զարգացման առանձնահատկությունների վերհանման, դրանց համադրման ու այդօրինակ հետազոտության հիման վրա կատարված՝ հունա-արևելյան քաղաքակրթության տարբեր տեսակների դասակարգման ու տիպաբանացման վրա) այնքան էլ հաճախ հստակ ձևակերպում չի ստանում: Սույն ուսումնասիրությունը փորձ է՝ Կոմմագենեի և Հայաստանի պատմության առանձին սյուժեների օրինակով վերիմաստավորել հելլենիզմի պատմության որոշ իրողություններ, հելլենիզմը ներկայացնել ոչ թե որպես բացառապես մշակութային երևույթ, այլ իբրև համապարփակ ամբողջական տարածք:

Թեմայի ուսումնասիրության արդյունքում մենք կատարել ենք հետևյալ հիմնական <u>եզրակացությունները.</u>

1. Գտնվելով առևտրափոխադրային մայրուղիների խաչմերուկում և բացառիկ կարևոր ռազմավարական դիրք ունենալով՝ Կոմմագենեն հնուց ի վեր հրապուրել է նվաճողներին, որոնք փորձել են տիրել ինչպես այդ երկրի հարստություններին, այնպես էլ ռազմավարական առավելությանը, որն ապահովում էր այդ երկրին տիրելու հանգամանքը: Դեռ ասորական

տիրակալության ժամանակներից դա հարկադրում էր երկրի կառավարիչներին մշտապես զգոն վիճակում լինել և փնտրել նորանոր ճանապարհներ տարածաշրջանի հզորագույն տերությունների աճող գրոհին դիմակայելու համար, մշակել նոր մարտավարություններ և ռազմավարություններ, որոնել մշակութային ինքնության պահպանման միջոցներ: Այս հարցում հատուկ դեր խաղացին ծագումով հայկական Երվանդականների արքայատոհմը և նրանց մշակած մշակութային քաղաքականությունը:

2. Որպես արքայական իշխանության լեգիտիմացմանը, Կոմմագենեի ինքնիշխանության ու նրա բնակչության էթնիկ ինքնության պահպանմանն ուղղված գաղափարախոսական ծրագիր՝ Երվանդականներն օգտագործում էին կոմմագենյան հասարակության կյանքի այնպիսի համախմբող իրադարձություններ, ինչպիսին էին միապետի և իշխող արքայատոհմի պաշտամունքի հետ կապված մարզական խաղերն ու հանդիսությունները, հատուկ ծեսերը, ինչպես նաև հուշակոթողային արվեստը, քանդակագործությունն ու խոսքի արվեստը:

3. Քարոզչության (պրոպագանդայի), «հասարակության մեջ որոշակի գաղափարների, արժեքների, վարքի նորմերի ու ծրագրերի նպատակային տարածման» գործուն միջոց դարձավ ճարտասանական արվեստը: Անտիոքոս Կոմմագենացու՝ հելլենիզմի դարաշրջանին բնորոշ գուներ ասիականան ոճը մեր օրերում էլ զարմացնում է իր ազդեցության ուժով: Վիմագիր արձանագրություններում հելլենիստական միապետի օգտագործած կառույցները, մարդկային ընկալման և վարքագծի վրա ազդող խորհրդանշանների աբստրակտները կարելի է կատարյալ  նմուշներ համարել: Դրանց հետ մեկտեղ, ճարտասանությունը դարձավ կոմմագենյան հասարակության հելլենականացման միջոց:

4. Կոմմագենեի Երվանդականներն արտասովոր պասիոնարություն ցուցաբերեցին, ինչը, զուգակցված ճկունության հետ, թույլ տվեց հելլենիստական այդ երկրի լուսավորյալ միապետներին երկար ժամանակ հաջող գոյություն պահպանել և զարգանալ ագրեսիվ գերտերությունների շրջապատում, որոնք անընդհատ ոտնձգություններ էին կատարում Կոմմագենեի թագավորության հարստությունների և ինքնիշխանության հանդեպ: Կոմմագենեի Երվանդականների ավյունի շնորհիվ երկիրը կարողացավ անհամեմատ ավելի երկար դիմակայել հռոմեական զավթողականությանը, քան այդ տարածաշրջանի մեծ ու փոքր այլ թագավորությունները: Վերջին Երվանդականները կորցրեցին ավյունալիր ոգին, զգոնության ու անձնվիրության կարողությունը, ինչը, հատկապես Անտիոքոս Դ-ի թուլակամության հետ միասին, դարձավ արքայատոհմի կործանման հիմնական պատճառը: Սակայն արքայատոհմի ներունակությունը բավական երկար պահպանվեց և զգացվում էր թագավորության անկումից հետո անգամ՝ թե՛ երկրում, թե՛ նրա սահմաններից դուրս:

5. Հնուց ի վեր Կոմմագենեն տարբեր քաղաքակրթությունների շփման գոտու կարևոր մասն է եղել: Այդ գոտին մենք անվանել ենք «Մերձեփրատյան շփման գոտի»: Սահմանային այդ տարածքը երկու, ավելի հազվադեպ՝ երեք կամ չորս «դոմենային գոտիների» համակցումն է, որոնցից յուրաքանչյուրն ունի իր միջուկն ու ծայրամասը: «Ծայրամասը», հատկապես սահմանային գոտին, հաճախ լաբորատորիա է հիշեցնում, որտեղ ծնվում, բյուրեղացվում և փորձարկվում են

անցնում քաղաքակրթական նոր հարացույցները: Նման հարացույցներ էին քրիստոնեությունը և նրանից ոչ շատ առաջ ծագած միհրականությունը՝ որպես Հին աշխարհի առավել դինամիկ ու անընդհատ զարգացող կրոնա-էթնիկական կառույցներից մեկը:

6. Այն դեպքերում, երբ «միջուկը» բավական ճկուն և ընկալունակ է նորարարական գաղափարների հանդեպ, տեղի է ունենում քաղաքակրթության ամբողջական կամ մասնակի նորացում, ծնվում է նոր «նոմոս», որը երբեմն քողարկվում է հնացած ձևերով ու հին անվանումներով: Բնորոշ օրինակ է դասական հռոմեական քաղաքակրթության անհամարժեքությունը, որը Ք.ա. II-III դդ., կորցնելով երբեմնի պասիոնարությունը, հայտնվեց համակարգային ճգնաժամի իրավիճակում: Այդ ճգնաժամից դուրս գալու միակ ճանապարհը դարձավ քաղաքակրթական միջուկի տեղափոխումը հելլենիստական Արևելք, որտեղ ձևավորվեց Արևելյան Հռոմեական կայսրությունը (Երկրորդ Հռոմ)՝ քաղաքակրթության նոր տեսակ, որը քողարկվում էր իր նախորդի անվամբ:

7. Պրինցիպատի և կայսերական դարաշրջաններում հռոմեական բանակը հասարակության գրեթե միակ ստեղծարար մասն էր: Նրա ազդեցությունն ամբողջ կայսրության քաղաքականության, տնտեսության (այսպես կոչված «լեգեոներական տնտեսության») և հոգևոր կյանքի վրա դժվար է գերագնահատել: Բանակն էր, որ դարձավ միհրական ծրագրի տարածողը Pax Romana-ի ողջ տարածքում, ինչպես ծայրամասում, հռոմեական լեգեոնների մշտական տեղակայման վայրերում, այնպես էլ անմիջապես կենտրոնում:

8. Ծայրամասից աշխարհ-համակարգի կենտրոն տեղափոխված մարգինալները, իրենց նպատակասլացության շնորհիվ, հաճախ միակ որոնող, նորարար տարրերն էին դառնում պահպանողական ավանդապաշտական հանրություններում: Իրենց ճկունության և շարժունության շնորհիվ նրանք դառնում են նոր գաղափարների և քաղաքակրթական արժեքների տարածողները: Ընդ որում՝ հատկանշական է, որ օտարականների մի մասը ձգտում էր հարմարվել ոչ այնքան ավանդական հասարակական ինստիտուտներին, որքան գոյություն ունեցող հասարակական կառույցների փոփոխություններին: Հաճախ հենց նրանք էին միջնորդ դառնում տարբեր, երբեմն՝ միմյանցից չափազանց հեռու մշակույթների միջև: Նման «սահմանակցության» պատճառով օտարականները հաճախ դառնում էին այն միակ տարրը, որն ի վիճակի էր ծայրամասում ստեղծել քաղաքակրթական նոր արժեքներ: Տարանցիկ և համակերպվող տարրեր լինելով՝ օտարականներն առանձնապես արդյունավետ էին հենց տարանցումային դարաշրջաններում՝ հետին պլան մղելով քարացած պահպանողական էլիտային և դառնալով իրենց ժամանակի գլխավոր գործող անձինք:

9. Միհրականության ձևավորման, հեթանոսական պաշտամունքից բարդ, համակայսերական աշխարհայացքային համակարգի վերածվելու գործում հատուկ դեր են խաղացել մերձեփրատյան այնպիսի երկրներ, ինչպիսին են Հայաստանը, Կոմմագենեն, Կապադովկիան, Կիլիկիան և Պոնտոսը, իսկ կայսրության անընդգրկելի տարածքում նրա տարածողներն են դարձել մերձեփրատյան ամրացված սահմանի երկայնքով տեղակայված հռոմեական լեգեոներներն ու ճամբարամերձ ավանների՝ կանաբների բնակիչները:

Միհրականությունը գաղափարախոսական ենթահիմք դարձավ հռոմեա-հելլենիստական հանրության համախմբման համար։

Ընդհանրացնենք. առասպելից մինչև լոգոս երկար ու խրթին ճանապարհ անցնելով՝ միհրականությունն արխայիկ արիական պաշտամունքից փոխակերպվեց տիեզերական փրկչաբանական կրոնի, նախապատրաստեց հոգևոր հեղաշրջում, էթնիկ բնաշրջությունից (իր սոցիոկենսաբանական բնույթով հանդերձ) վերցեղային ու դրա շնորհիվ մեծ տարածքներ և տարասեռ ազգեր համախմբելու կարողության տեր վեհապետությունների։ Վերցեղային կրոնները, ինչպիսին էր միհրականությունը, նպաստել են, որպեսզի ինքնամփոփ տեղային սոցիումները վերածվեն բաց համակարգերի՝ զուգամետ գործընթացներ առաջացնելով։ Միհրական կրոնա-բարոյախոսական համակարգի ձևավորումը համընկավ «առանցքային ժամանակի» ավարտի հետ, երբ, ըստ Կ.Յասպերսի, Արևելքում ձևավորվեց մարդու ժամանակակից տեսակը։

**Ատենախոսության հիմնական բովանդակությունն արտացոլված է հեղինակի հրատարակված հետևյալ աշխատություններում.**

Ա) **Մենագրություններ**

1.Դրվագներ հին հայոց հոգևոր մշակույթի պատմության**,** Ե., ՀԱԳԱ հրատարակչ., 2001, - 128 էջ։

2.Միհրականությունը հին աշխարհի քաղաքական և կրոնահոգևոր համակարգում. Կոմմագենե, Հայաստան, Հռոմ, Եր., ՀԱ ԳԱ «Գիտություն» հր., 2014, էջ 277:

Բ/ **Հոդվածներ**

1. Մեծ Հայքի և Կոմմագենեի հոգևոր առնչությունների պատմությունից (Արքայական հանգստարան - ό τεμένos), Պատմություն և կրթություն, 2006, 3-4, էջ 17-24:

2. Կոմմագենեի հոգևոր-մշակութային պատմությունից (Միհրականության հետքերով), Պատմության հարցեր: Տարեգիրք, 2009, էջ 44-52:

3. Հելլենիստական քաղաքակրթության շրջափուլերը նախահելլենիզմից մինչև քրիստոնեության հաղթանակը, Քաղաքագիտության հարցեր. հասարակություն, պատմություն, քաղաքակրթություն, 2009, Միջբուհական գիտաժողովի նյութեր: Գլխ. խմբ. Լ. Շիրինյան, Երևան, 2010, էջ 178-202:

4. Митраизм в армяно-римской цивилизационно-контактной зоне. Историческое пространство. Москва, Наука, 2011, с. 111-138.

5. Роль Армении и Коммагены в глобализациоционных процессах эллинистической эпохи, Сборник статей. По материалам международной конференции "Армения в диалоге цивилизаций". Нижегородский Государственный университет (НГГУ) им. Н. И. Лобачевского. Нижний Новгород: Деком, 2011, с. 159-171.

6. Трансформация митраизма в эллинистичекую эпоху (Иран, Армения, Коммагена, Рим), Алматы: Иран-намэ, 2011, 3, с. 78-109.

7. Митраизм как религиозно-мировоззреческая система эллинистической Армении и сопредельном царстве Коммагена (мифология, идеология, этика) // Iv. Javakhishvili Tbilisi State University Shota Rustaveli Institute of Georgian Literature V International Symposium Contemporary Issues of Literary Criticism. Mythological Thinking, Folklore and Literary Discourse. European and Caucasian Experience Dedicated to Vazha-Pshavela's 150th Anniversary. Vol. II. – Tbilisi: Institute of Literature Press, 2011, p. 232-250.

8. Միհրականության կերպափոխությունները հելլենիստական դարաշրջանում (Կոմմագենե, Մեծ Հայք, Հռոմ), «Վէմ» համահայկական հանդես, Դ (Ժ) տարի, 2012, թիվ 3(39) հուլիս-սեպտեմբեր, էջ 31-64:

9. На стыке римского и восточноэллинистического цивилизационных «номосов». Из истории приевфратской контактной погранзоны, 16. Новосибирск-Москва: Институт филологии сибирского отделения РАН, Новосибирский госуниверситет, РГГУ, 2012. с. 66-94.

10. Приевфратская контактная зона. На стыке древних мир-систем, Историческое пространство, Москва, Наука, 2012, с. 5-30.

11. Հելլենիստական դարաշրջանի Կոմմագենեի և Ծոփքի քաղաքական պատմություն, Պատմություն և մշակույթ, 2013, էջ 94-108:

12. Очерки политической истории Софены (Цопк) и Коммагены эллинистического периода, Историческое пространство. Москва, Наука, 2013, с. 5-31.

13. Риторика в горах Тавра, Критика и семиотика. Вып. 2/19, Новосибирск-Москва: Институт филологии сибирского отделения РАН, Новосибирский госуниверситет, РГГУ, 2013, с. 31-84.

14. Հելլենիզմը և զելոտությունը արդի հելլենիստագիտության մեջ, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XXIX, Երևան, 2014, էջ 289-308:

15. Կոմմագենեի Երվանդունիները, Հայկազունիներ, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013, էջ 502-510:

16. Հելլենիստական դարաշրջանի Կոմմագենեի և Ծոփքի քաղաքական պատմություն, Պատմություն և մշակույթ, Բ, 2013, էջ 94-108:

17. Միջազգային առևտրական ուղիների համակարգը Մերձեփրատյան սահմանային գոտում, Հայաստանի քաղաքակրթական ավանդը մետաքսի ճանապարհի պատմության մեջ, Միջազգային գիտաժողովի նյութեր, նոյեմբերի 21-23, Երևան, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2012, էջ 79-92:

*Маргарян Ерванд Грантович*

**Митраизм в политической и религиозно-духовной системе Передней Азии и Средиземноморского бассейна**

**Автореферат диссертации на соискание ученой степени доктора исторических наук по специальности 07.00.02 «Всемирная история».**

**Защита состоится 6 октября 2014г., в 15.00, на заседании специализированного совета 006 «Всемирная история», действующего при Институте Востоковедения НАН РА, по адресу: 019, г. Ереван, пр. маршала Баграмяна, 24/4.**

**РЕЗЮМЕ**

Коммагена – небольшая гористая страна на правом берегу Евфрата в непосредственном соседстве от Великой Армении. Находясь на стыке торгово-транспортных артерий, Коммагена издревле была одной из наиболее экономически развитых стран региона. Богатство и выгодное стратегическое положение этой пассионарной страны делало ее объектом постоянной агрессии со стороны могущественных держав древности (Ассирия, Урарту, Ахеменидская держава, Селевкидская держава, Великая Армения, Рим, Парфия и др.). Овладев страной, можно было достичь доминирования в регионе и использовать ее территорию в качестве трамплина для дальнейшего продвижения в ту или иную сторону от Евфрата. Древнейшим из известных государств на этой приевфратской территории было Митанни (Ханигальбат). Правителям этой страны со смешанным хуррито-семитским торгово-ремесленным населением и арийской военно-политической знатью приходилось вести упорную борьбу с Хеттской державой, Египтом и Ассирией. Митаннийцы имели железное вооружение, владели высокой техникой коневодства и передовыми методами ведения колесничного боя. Благодаря отличной технической оснащенности и неприступному положению городов и крепостей митаннийским царям довольно долго удавалось противостоять натиску самых могущественных держав своего времени и сохранять относительный суверенитет. Кроме того, цари Ханигальбата эффективно использовали политику «третьей силы» для поддержания мира и продвижения своих политических интересов. Правящая часть населения Митанни говорила на «митаннийском арийском языке»[21] – своего рода койне арийского, хурритского и семитского языков, с явным преобладанием индоевропейских форм. После падения государства Митанни натиск на северосирийские города-государства усилился. На этот раз борьба за обладание этой стратегически важной территорией и ее богатыми городами развернулась между ассирийскими и урартскими царями. Куммух (именно так в клинописных источниках начинают называть эту страну) не раз становился театром военных действий. В этой борьбе между двумя ведущими державами своего времени города-государства Ханигабальта всегда выступали в союзе с царями Биайнили. На протяжении всей своей истории Куммух оставался рыхлым конгломератом высокоразвитых, богатых и самодостаточных северосирийских городов и номов. И все же, несмотря на частые неудачи в войнах (в 807-708 гг. до Р.Х.), основанный на общности политических и экономических интересов военно-политический союз северосирийских городов-государств сохранял свою значимость и, по сути, ни разу, даже в самые тяжелые для страны времена, не распался. Более того, Куммух-Коммагена по-прежнему сохраняла свое экономическое и культурное превосходство по отношению ко многим сопредельным государствам того времени. В 708-612 гг. страна была завоевана и оказалась под властью ассирийской державы. В 612-550 гг. вошла в состав Мидийского царства, а затем была включена в состав Ахеменидской

[21] **Чайлд Г.** Арийцы. Основатели европейской цивилизации / Пер. с англ. И. А. Емец. М.: Центрполиграф, 2009, 272 с.

державы, став частью Армянской сатрапии, управляемой древней династией Ервандаканов. Таким образом, на долгое время, военно-политическая знать и жреческое сословие в Коммагене вновь оказались арийскими.

После падения Ахеменидской державы Коммагена некоторое время оставалась под властью армянских Ервандаканов (Оронтиды), а затем, вместе с Софеной, отделилась от Великой Армении, создав самостоятельное государство, в котором правящей стала побочная ветвь династии Ервандаканов. В эпоху эллинизма начался новый виток экономического и культурного развития Коммагены. Благодаря выгодному географическому положению и владея немалыми богатствами, Коммагенские Ервандаканы и их родственники в Софене, на левом берегу Евфрата, успешно проводили независимую политику, противостоя Селевкидам и парфянским Аршакидам. Лишь с большим трудом на рубеже II-I вв. до Р.Х. Селевкидам удалось подчинить оба этих эллинистических царства. Однако, спустя пол столетия Коммагена вновь стала независимой и процветающей страной, достигнув больших успехов при Митридате I Каллинике (ок. 100/96 – 69 гг.). В период расцвета Великой Армении Митридат признал вассальную зависимость от *царя царей* из династии Арташесидов Тиграна II, сохранив тем самым свой престол, страна же продолжила свое экономическое и культурное развитие. Наивысшего расцвета Коммагена достигла в годы правления Антиоха I Теоса. После распада державы Тиграна Коммагена не только восстановила свой суверенитет, но, хоть и ненадолго, округлила свою территорию за счет Северной Месопотамии.

В годы правления этого просвещенного монарха экономическое и культурное процветание этой эллинистической страны достигло наивысшего уровня. По приказу царя были возведены монументальные сооружения, поражающие своими размерами и силой воздействия на человеческое сознание. Для возведения этих *святилищ-гиеротесионов* были выбраны труднодоступные *теменосы*, расположенные высоко в горах Тавра. Они стали местом посмертного упокоения тела царя и его близких, своего рода порталами или мостами для перехода в высшие сферы, где пребывают великие боги и души царских предков – даймоны (гении-хранители). Для воздействия на сознание местных жителей и многочисленных паломников, посещающих знаменитые святыни, волею просвещенного монарха были выбиты лапидарные надписи на аттическом наречии древнегреческого языка. Надписи относятся к I в. до Р.Х. и являются яркими образчиками эллинистической риторики, как по стилю, так и по содержанию. Инскрипции составлены в азианическом стиле, столь характерном и неизбежном для эпидейктического красноречия. В диссертации приводятся и анализируются тексты двух наиболее известных коммагенских надписей: Немрудской и Арсамейской. Обе они приведены в работе без купюр и сокращений, авторский перевод произведен с языка оригинала. Центральной фигурой надписей является их автор или заказчик, эллинистический царь Антиох I Ервандакан. Антиох возвещает о своей принадлежности по отцовской линии к древней династии Erванаканов, связанной родственными узами с Ахеменидами, а по материнской линии – с Селевкидами, а через них и самим Александром Великим. Антиох провозглашает о своей верности заветам отцов. Причиной своего «счастливого царствования» он объявляет покровительство даймонов, наследование их Славы-Фарна, и, конечно же, защиту великих богов, сочетающих в себе черты олимпийцев и местных арийских небожителей.

В это же время, по мнению некоторых исследователей, в Коммагене на некоторых сопредельных территориях начинает формироваться новая мировоззренческая система, еще в начале прошлого века, в трудах бельгийского археолога и историка Франца Кюмона  получившая название *митраизм*. Подобно большинству

идеологических движений древности она имела религиозно-этическую оболочку. Это была сотерическая религия, связанная с представлениями о воздаянии в мире ином за дела и поступки, совершенные в этом мире. Митраизм возник не на пустом месте, в нем присутствовали наработки предшествующих эпох – александрийского гностицизма, основанного на: 1) идее истинного знания (gnosis), получаемого мистическим путем и 2) маздаистской концепции дуализма, объясняющей существование в мире противоположностей, основными из которых являются «добро» и «зло». По сути, митраизм опирался на зороастрийскую теологию, подобно тому, как возникшее почти одновременно, и в том же регионе христианство опиралось на ветхозаветные традиции. Но помимо зороастрийских и эллинистических традиций, огромное значение в формировании митраизма сыграла арийская мифология, корнями уходящая в древнейшую эпоху и непосредственно связанную с Армянским нагорьем и некоторыми сопредельными территориями в Малой Азии и Иранском плоскогорье. Митраизм стал одним из инструментов сохранения культурной самобытности и формирования национальной идентичности жителей Коммагены, ответом небольшого, но пассионарного социума на вызовы своего времени. Создание подобного инструмента стало особенно актуальным в период экспансии империалистического Рима. Со времен разбойничьих рейдов ассирийских царей ни одна держава, даже в период своего наивысшего могущества, в такой степени не угрожала основам коммагенского номоса, как милитаристский Рим, ныне стоящий у ворот этой богатой приевфратской страны. Вместе с тем, продвижение Рима на восток, вынуждало Парфию – последний бастион восточного номоса, мобилизовать ресурсы всего эллинистическо-иранским мира на борьбу с агрессивной западной сверхдержавой. Это делало гористую неприступную страну по ту сторону от Евфрата желанным союзником для парфянских Аршакидов. Так, Коммагена вновь оказалась на стыке цивилизаций. Несмотря на успехи в борьбе Антиоха I Коммагенского против Помпея и Антония, царю пришлось признать себя «другом и союзником римского народа». И все же до конца правления Антиоха I и его сына Митридата II, Коммагена оставалась суверенной страной. Ситуация начинает меняться в последней четверти века, когда усилиями Цезаря-Августа Коммагенское царство превращается в римского сателлита. Коммагенское царство пало в 72 г. по Р.Х. Последние годы этого эллинистического царства и его славной династии столь же захватывающи, сколь и драматичны. Коммагенские Ервандаканы и после падения царства продолжали играть важную роль в жизни империи, а страна Коммагена стала порубежьем между Pax Romana и Pax Iranica.

На примере Приевфратской контактной зоны в диссертации также рассматривается проблема взаимоотношений римской и восточноэллинистической цивилизаций на рубеже миллениумов до и после Р.Х. Особое место в межцивилизационном диалоге играли дислоцированные на восточном лимесе римские легионы, несшие не только погранслужбу, но и исполнявшие важную медиативную роль между двумя мирами. Расквартированные на интерфейсе римские погранотряды и жители поселений, расположенных вокруг военных лагерей и фортов, стали средой, своеобразной лабораторией, где зарождались, выкристаллизовывались и проходили апробацию различные цивилизационные парадигмы, одной из которых стал митраизм. Так, возникший на Приевфратском порубежье митраизм, стал стремительно распространяться по всей территории Римской империи, особенно по его окраинам, где были расквартированы римские легионы и где несли службу солдаты из Коммагены, Западной Армении, Каппадокии, Понта и Киликии. Вскоре митраизм проник и в самое сердце империи – Рим, где стал господствующей идеологией среди политической элиты Рима. Митраистами были

большинство римских императоров, начиная с Нерона и кончая Юлианом Отступником. Уже в который раз римляне-завоеватели были завоеван завоеванными. Завоевание Рима митраизмом носило глубокий цивилизационный характер и задевало сами основы античного мира. Трансформировался митраизм, превратившись в имперскую религию, но вместе с ним трансформировался и сам Рим. Однако в IV в. митраизм неожиданно оказался вытеснен совершенно маргинальной религией – христианством.

***Margaryan Yervand***

**Mithraism in the political, religious and spiritual system of the Near East and the Mediterranean basin**

The defense of the dissertation will take place at 15:00, on the 06 of October, 2014 at the meeting of the Specialized Counsel 006, "World History" at the Institute of Oriental Studies of NAS RA. Address: Yerevan, 0019, Marshal Baghramyan Ave., 24/4. The dissertation is submitted for the pursuing of the Scientific Degree of the Doctor of Sciences in the Field of "World History" 07.00.02.

**SUMMARY**

Hellenistic Commagene was a small mountainous country on the right bank of the Euphrates River in the immediate vicinity of Greater Armenia. Located at the crossroads of trade and transportation arteries, ancient Commagene was one of the most economically developed countries in the region. The wealth and strategic location of this passionarian country made it the object of constant aggression from powerful caesardoms of the Antiquity – Assyria, Urartu, Achaemenid and Seleucid empires, Greater Armenia, Rome, Parthia and others. Conquering Commagene would secure dominance in the region and provide a launching pad for further expansion in either direction of the Euphrates. The oldest known state in the Upper Euphratean region was Mitanni (Hanigalbat). Rulers of this country, populated by a mix of Hurrian-Semitic merchants and craftsmen, and Aryan military-political aristocracy, constantly needed to defend against the conquest aspirations of Hittite power, Egypt and Assyria. Mitannians used iron weapons, bred battle horses and developed advanced methods of chariot combat. Superior weapons and impregnable locations of cities and fortresses allowed the Mitannian kings to resist the onslaught of the most powerful nations of the time and keep relative sovereignty. In addition, the kings of Hanigalbat effectively used the "third force" policy to maintain peace and balance in the region and further their political interests. The ruling class of the country spoke "Mitanni Aryan language" – a Koine language, derived from the Aryan, Hurrian and Semitic language forms, with a clear predominance of the Indo-European elements. After the fall of the Mitanni kingdom the intensity of the assault on the north-Syrian city-states increased. By then, especially in the first half of the first millennium BC, the contest for this strategically important area and its rich cities unfolded between the Assyrian and Urartian kings. Kummuh (as the cuneiform sources call it) was often the battleground. In this clash between the two major powers of the time the Hanigalbat city-state always had an alliance with the kings of Biaynili. Throughout its history Kummuh remained a loose conglomerate of highly rich and self-sufficient north-Syrian cities and noms. And yet, despite the frequent military failures (BC 807-708), the military-political alliance of the north-Syrian city-states, based on common political and economic interests, retained its relevance and, in fact, survived even the most challenging times. Moreover, Kummuh-Commagene, as before, retained its economic and cultural superiority over many neighboring states of the time. Between 708bc and 612bc the country was conquered and ruled by the Assyrian kings and, between 612bc and 550bc, it became part of the kingdom of the Medes, and was

incorporated into the Achaemenid Empire, becoming part of the Armenian satrapy ruled by the Orontids (Ervandakans) royal dynasty. Subsequently, the political-military nobility and priest caste in Commagene were Aryan again for many years.

After the fall of the Achaemenid Empire, Commagene, for some time, remained under the rule of the Armenian Yervandakans (Orontids), and then, alongside Sophene, parted from Greater Armenia into an independent state ruled by one of the secondary branches of the Orontids dynasty. The Hellenistic period ushered in a new era of economic and cultural development for Commagene. Due to the favorable geographical location of the country and the considerable wealth of the Commagenian Orontids and their relatives in Sophene on the left bank of the Euphrates, they successfully executed an independent policy line, standing up to the Seleucids and the Parthian Arsacides. Usually, they succeeded. Only at the turn of the (first) century BC did the Seleucids, with great difficulty, manage to submit both of these Hellenistic kingdoms. However, after half a century, Commagene become an independent and prosperous country again, reaching its peak when ruled by Mithridates I Callinicos (circa 100/96 - 69 years). In the heyday of Greater Armenia, Mithridates pledged allegiance to the King of Kings Tigran II of the Artaxids dynasty, which allowed him to keep his throne, as the country continued its economic and cultural development. Commagene reached its apogee during the reign of Antiochus I Theos. After the collapse of Tigran's kingdom, Commagene not only regained its sovereignty but, albeit briefly, expanded its territory into Northern Mesopotamia.

During the reign of this enlightened monarch the economic and cultural prosperity of Hellenistic Commagene reached its highest level. Antiochus I Theos built monumental structures of extraordinarily impressive size and grandeur. Hard-to-reach *temenoses*, located high in the Taurus Mountains were chosen as a location to erect these sanctuaries-*hierothesions*. They served as a posthumous resting place for the king and his family, believed to be a bridge, or a portal into the higher realms of the afterlife, where the patron "daimons" (the great gods and souls of the king's ancestors) eternally dwell. To impress the local people and the numerous pilgrims visiting the famous shrine, the enlightened monarch ordered that lapidaries carve inscriptions in the Attic dialect of the Greek language into the shrine. Inscriptions date back to the first century BC and are brilliant examples of Hellenistic rhetoric, both in style and in content. The inscriptions were composed in an Asianist style so typical and characteristic of the Epideictic eloquence. This dissertation reviews and analyzes the texts of the two most famous Commagenian inscriptions found on Mt. Nemrud and Arsameia on *Nymphaios*. The full text of both inscriptions is quoted in the dissertation, uncensored and unabbreviated in the original language, and in the author's original translation. The central figure of the inscriptions is their author or the commissioner, the Hellenistic king Antiochus I Orontid. Antiochus claims affiliation though his paternal ancestry to the ancient dynasty Orontid, linked by ties of kinship with the Achaemenids and through the maternal ancestry - with the Seleucids, and therefore descendance from Alexander the Great himself. Antiochus declares his allegiance to the precepts of his fathers. He claims that his "happy reign" is supported by the patronage of daimons-geniuses and that he inherited their Fame-Farn, and, of course, is protected by the great gods, combining the features of Olympian and local Aryan gods.

At the same time, according to some researchers, a new world view system begins to form in Commagene and some adjacent territories. Franz Cumont, a Belgian archaeologist and historian, in his writings in the early 20$^{th}$ century, called this new outlook on the world Mithraism. Like most ancient ideological systems it was cloaked in religion and ethics. This was a soteric religion associated with the idea of retribution in the next world for the deeds and actions committed in this world. Mithraism did not come out of nowhere; it was heavily

influenced by development of thought of previous eras: 1) the Alexandrian Gnosticism, based on the idea of true knowledge (gnosis), produced by the mystical and 2) mazdaic concept of dualism, which explains the existence of a world of opposites, mainly the "good" and the "evil". In fact, Mithraism was based on Zoroastrian theology, similar to Christianity that was based on the Old Testament tradition and emerged almost simultaneously and in the same region. But apart from the Zoroastrian and Hellenistic traditions the greatest influence on the formation of Mithraism was the Aryan mythology, which is deeply rooted in the earliest times and is directly related to the Armenian Highlands and some adjacent territories in Asia Minor and the Iranian plateau. Mithraism was one of the instruments for the conservation of cultural originality and formation of national identity of the people of Commagene, a response of a small but passionarian society to the challenges of their time. The creation of such a tool became especially important during the period of imperialist expansion of Rome. Since the time of the bandit raids of the Assyrian kings no power, even at its greatest peak, could threaten the foundations of Commagenian nomos as militaristic Rome could, now standing at the gate of this rich upper-Euphratean country. However, the deployment of Roman armies to the east urged Parthia, the last bastion of the eastern nomos, to mobilize resources of the entire Hellenistic-Iranian world to fight off the aggressive Western superpower. This made the impenetrable mountainous country on the other side of the Euphrates a very desirable ally for Parthian Arshakids. Once again Commagene stood at the crossroads of civilizations. Despite Antiochus I of Commagene's military success against Pompeus and Marcus Antonius, the king had to become a "friend and ally of the Roman people".

Yet, Commagene remained a sovereign country until the end of the reign of Antiochus I and his son Mithridates II. The status quo began to change in the last quarter of the century: as a result of Caesar Augustus' efforts the Commagenian kingdom turns into a Roman satellite. The Kingdom of Commagene fell in 72 AD. The last years of this Hellenistic monarchy and its glorious dynasty were both exciting and dramatic. Even after the fall of the kingdom the Commagenian Orontids continued to play an important role in the existence of the Empire, and the country became a borderland between *Pax Romana* and *Pax Iranica*.

This dissertation also discusses the relationship of Roman and Western-Hellenistic civilizations at the turn of the millennia before and after AD in the Euphrates contact zone. A special role in the dialogue between these civilizations is played by the Roman legions stationed on the eastern lines, which not only carried out border guard duties, but also took on an important role as mediators between the two worlds. The Roman frontier guards stationed at the interface and local residents of the settlements around the Roman military camps and forts became an environment, a sort of a laboratory where new civilizational paradigms such as Mithraism emerged, crystallized and were implemented. Thus, Mithraism came into being in the Euphrates borderland and began to spread rapidly throughout the Roman Empire, especially in its outskirts, where Roman legions were stationed and where Western Armenian, Cappadocian, Pontian, Cilician and Commageneian soldiers served alongside the roman soldiers. Mithraism soon penetrated the heart of the Roman Empire, where it became the dominant ideology among the political elite of Rome. Most Roman emperors, from Nero to Julian the Apostate, were Mithraists. For the umpteenth time the Romans were conquered by the conquered. Mithraism's spread through Rome had deep civilizational impact and affected the very foundations of the ancient world. Mithraism was transformed, becoming the imperial religion, but with it Rome transformed itself. However, in the fourth century Mithraism was suddenly displaced by a completely marginal religion – Christianity.